

Չետագոտությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող «Քաղաքացիական հասարակության հզորացում հանուն ներառական և կանաչ հետկովիդային վերականգնման» ծրագրի շրջանակներում, որը իրականացնում է CENN կազմակերպությունը, և կարող է չհամընկնել Եվրոպական միության տեսակետների հետ:

Չետագոտության հեղինակ՝ Սոցիալական հետազոտությունների և վերլուծության ինստիտուտ (ISSA)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	4
Մեթոդաբանություն	7
Քանակական հետազոտություն	7
Որակական հետազոտություն	8
Յիմնական բացահայտումներ	10
Խոցելի իրավիճակում գտնվող մարդկանց բացահայտում.....	10
Գլուխ 1. Բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը	21
Խոցելի վիճակում գտնվող մարդկանց բացահայտում.....	21
Եկամուտներ	22
Ծախսեր.....	25
Առկա մարտահրավերներ	27
Covid-19-ի ազդեցությունը բնակչության վրա և տեղական իշխանությունների օգնությունը.....	31
Գլուխ 2. Կրթություն	32
Նախադպրոցական/Ընդհանուր կրթություն.....	32
Մասնագիտական և բարձրագույն կրթություն.....	34
Գլուխ 3. Իրազեկվածություն մունիցիպալ ծառայությունների մասին	35
Գլուխ 4. Սոցիալական և առողջապահական ծառայություններ	36
Սոցիալական ծառայություններ.....	36
Առողջապահական ծառայություններ.....	45
Առողջապահության և սոցիալական ապահովության ուղղությամբ առկա կարիքները	57
Տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական սեկտորի դերը	58
Գլուխ 5. Այլ ծառայությունների (բացի առողջապահական և սոցիալական) օգտագործում	60
Գլուխ 6. Ծառայությունների հավասար հասանելիություն	64
Գլուխ 7. Կոմունալ ենթակառուցվածքներ	65
Էլեկտրաէներգիա.....	65
Գազամատակարարում.....	66
Ջրամատակարարում	67
Ոռոգման համակարգ	72
Կոյուղու համակարգ	74
Թափոնների հեռացում	75
Մաքրման աշխատանքներ.....	77
Գլուխ 8. Կլիմայի փոփոխություն և դրանից բխող առողջական խնդիրներ	80
Գլուխ 9. Անվտանգություն	87
Գլուխ 10. Էլեկտրոնային ծառայություններ	91
Գլուխ 11. Մասնակցություն մունիցիպալիտետի կառավարմանը և հանրային գործունեությանը	92
Քաղաքացիների ներգրավվածությունը տեղական ինքնակառավարման մակարդակով որոշումների կայացման գործընթացում	92
Մասնակցություն հանրային գործունեությանը.....	102
Գլուխ 12. Համագործակցություն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ	107
Գլուխ 13. Հարցվողների սոցիալ-ժողովրդագրական որոշ բնութագրեր	115

Ներածություն

HRBA-ն մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիման վրա մշակված հայեցակարգային շրջանակ է, որը կարող է օգտագործվել փաստաբանության, դատավարության և նպատակային ծրագրերի մշակման ժամանակ¹: HRBA մոտեցմամբ հնարավոր է բացահայտել պարտավորությունները, անհավասարությունը, խոցելիությունը, խտրական մոտեցումները ինչպես իրավական դաշտում, այնպես էլ գործող պրակտիկայում:

Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը հիմնվում է հինգ հիմնական աշխատանքային սկզբունքների վրա, որոնք հայտնի են որպես PANEL (Participation, Accountability, Non-discrimination and Equality, Empowerment, Legality):

- **Մասնակցություն (Participation)** - Մարդիկ իրավունք ունեն ներգրավվել այն որոշումներում, որոնք ուղղակիորեն ազդում են իրենց իրավունքների և բարեկեցության վրա և/կամ իրավունք ունեն ներգրավվել այլ մարդկանց, ովքեր կօգնեն որոշումներ կայացնել: Մասնակցությունը պետք է լինի ակտիվ, անկախ, տեղեկացված և հասանելի, ներառյալ տեղեկատվության հասանելիությունը թիրախային խմբերին հասկանալի ձևով և լեզվով:
- **Հաշվետվողականություն (Accountability)** – Ենթադրում է մարդու իրավունքների չափանիշների արդյունավետ մոնիթորինգ, ինչպես նաև, մարդու իրավունքների խախտումների դեպքերը կանխելու արդյունավետ մեխանիզմներ:
- **Խտրականության արգելում և հավասարություն (Non-discrimination and Equality)** - Տարիքի, գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման, ազգային պատկանելության, առողջական վիճակի, տնտեսական վիճակի կամ այլ հիմքերով խտրականության բոլոր ձևերի արգելում: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել խոցելի մարդկանց բացահայտմանը, ովքեր իրենց իրավունքները պաշտպանելու համար բախվում են լրացուցիչ խոչընդոտների:
- **Հզորացում (Empowerment)** - Մարդիկ և նրանց իրավունքները պաշտպանող խմբերը պետք է տեղեկացված լինեն իրենց իրավունքների մասին և աջակցություն ստանան քաղաքականության և պրակտիկայի ձևավորման գործընթացում, որոնք անմիջականորեն կապված են իրենց իրավունքների իրացման հետ:
- **Օրինականություն (Legality)** - Համընդհանուր ճանաչված մարդու իրավունքները պետք է ներդաշնակորեն համակցվեն մարդու իրավունքների պաշտպանության ազգային և միջազգային օրենքների հետ:

2021 թվականին ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամի (UNDP) կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ հիմնական սոցիալական ծառայությունների հասանելիությունը սահմանափակ է Վրաստանի շրջաններում, հատկապես գյուղական բնակավայրերում: Գյուղական վայրերում ապրող սոցիալապես խոցելի և մարզինալացված համայնքները հիմնականում չունեն այնպիսի հիմնական ծառայություններ, ինչպիսիք են կոմունալ ծառայությունները (կենտրոնացված ջրամատակարարում, գազամատակարարում, կոյուղու և ոռոգման համակարգեր, թափոնների հեռացում, մաքրում և այլն): Խնդրահարույց են նաև առողջապահական ծառայությունների հասանելիությունը և որակյալ կրթությունը: Նշված հետազոտության մեջ նկարագրված է, որ սոցիալական և առողջապահական ծառայություններից օգտվելու ամենացածր ցուցանիշները Զվեմո Բարթիում և Սամցխե-

¹ European Commission, Applying the Human Rights Based Approach to international partnerships, Brussels, 30.6.2021 - https://international-partnerships.ec.europa.eu/system/files/2021-07/swd-2021-human-right-based-approach_en.pdf

Ձավախտերիում են: Հարցվածների մեծամասնությունը չի օգտվում կամ չի կարող օգտվել նշված ծառայություններից՝

- Մունիցիպալ սոցիալական ծառայություններ՝ Քվեմո Քարթլի (65%), Սամցխե-Ջավախտերի (63%),
- Մունիցիպալ առողջապահական ծառայություններ՝ Քվեմո Քարթլի (94%), Սամցխե-Ջավախտերի (93%):

Հետազոտությունը պարզել է, որ հարցվածների մեծ մասն օգտվում է կենտրոնական ջրամատակարարումից (78,6%): Բացի այդ, հարցվածների կեսից ավելին (55.1%) նշում է իրենց բնակավայրում կենտրոնական կոյուղու համակարգի առկայության մասին: Հարցվածների մեծամասնությունը (95%), որոնց բնակավայրն ունի կենտրոնական կոյուղու համակարգ, ասում է, որ իրենց տունը միացված է այս համակարգին: Մյուս կողմից, նշված հետազոտությունն ընդգծում է կոմունալ ենթակառուցվածքների օգտագործման խնդրահարույց փորձը: Նկարագրվում է, որ կենտրոնական ջրամատակարարումից օգտվողների, միջին հաշվով, մեկ հինգերորդը ինչպես Սամցխե-Ջավախտերիում (18%), այնպես էլ Քվեմո Քարթլիում (20%) գրեթե միշտ դժգոհ է ջրամատակարարման գրաֆիկից:²

որոշումների կայացման գործում ցածր է: Ըստ տեղական ինքնակառավարման ցուցանիշի, եթե Քվեմո Քարթլիում 2019 թվականի տվյալներով քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարման գործընթացին կազմել է 28%, ապա 2021 թվականին այդ ցուցանիշը նվազել է մինչև 15%: Նման արդյունքը պայմանավորված է քաղաքապետարանի և սակրեբուլոյի գործունեության մեջ ներգրավվածության նվազմամբ: Քաղաքապետարան՝ 2019 – 22%, 2021 – 9%, սակրեբուլո՝ 2019 – 47%, 2021 – 34%: Սամցխե-Ջավախտերիի դեպքում քաղաքացիների մասնակցության ընդհանուր գնահատականը վերջին 2 տարում չի փոխվել (2019թ.՝ 15%, 2021թ.՝ 15%): Նշված տարածաշրջանում բնակչության ներգրավվածությունը քաղաքապետարանի և սակրեբուլոյի գործունեությանը թփոփոխական է. քաղաքապետարան՝ 2019թ. - 9%, 2021թ. - 13%, սակրեբուլո՝ 2019թ. - 37%, 2021թ. - 21%: Նմանատիպ արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքացիները հիմնականում չեն մասնակցում որոշումների կայացման գործընթացին, ցածր է քաղաքացիական ակտիվությունը և ներգրավվածությունը հանրային գործընթացներում:³

Նշված արդյունքների վրա ազդել է կորոնավիրուսով պայմանավորված համաճարակը: Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը բարդացել է արտակարգ դրության և կարանտինի պատճառով: 2020 թվականին Վրաստանի Ինքնակառավարման Ազգային Ասոցիացիայի կողմից իրականացված հետազոտությունը՝ «Մունիցիպալ կառավարման մարտահրավերները COVID-19 համաճարակի պայմաններում», ցույց է տալիս, որ համաճարակի պայմաններում քաղաքացիների ներգրավման այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝ բնակավայրի ընդհանուր ժողովը և քաղաքապետի խորհրդակցական խորհուրդը, չկարողացան ամբողջ ծավալով գործել: Բնակավայրի ընդհանուր ժողովը կանխվել է հասարակական հավաքների արգելքով, իսկ հասարակական տրանսպորտի դադարեցման պատճառով դժվարացել է քաղաքապետի խորհրդատուների խորհրդի

² ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամ, «Հանրային ծառայություններից Վրաստանի բնակչության բավարարվածության մակարդակի հետազոտություն», 2021

³ Տեղական ինքնակառավարման ինդեքս, <http://www.lsgindex.org/ge/analysis/>

հանդիպումը: Մյուս կողմից, հետազոտությունը նկարագրել է, որ համաճարակի ժամանակ էլեկտրոնային գործիքների շահագործման հետ կապված խնդիրներ չեն եղել:⁴

Բնակչությանը ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ միայն կենտրոնացված կառավարման պայմաններում հնարավոր չէ լիարժեք ծառայություններ առաջարկել՝ ելնելով քաղաքացիների կարիքներից և պահանջներից: Այսպիսով, հատկապես կարևոր է իշխանության բաշխումը կենտրոնական և տեղական մակարդակների միջև: Գործող օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման միավորներին պատվիրակված են տարբեր լիազորություններ:⁵ Օրինակ՝ «Հանրային առողջության մասին» օրենքի 36-րդ հոդվածը նկարագրում է պատվիրակված ծառայությունները. ախտահանման աշխատանքների իրականացում, այդ թվում՝ ուսումնական և հանրակրթական նշանակության հաստատություններում սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման հսկողություն, վարակիչ հիվանդությունների տարածման դեմ միջոցառումների իրականացում և այլն: Նշված իրավասությունների համար պահանջվող ֆինանսական միջոցների չափը սահմանվում է համապատասխան տարվա Վրաստանի պետական բյուջեի մասին օրենքով:

Սոցիալական ծառայություններ ստանալու տեսանկյունից կարևոր է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերը, որոնք կարող են նպաստել բնակչության կարիքների բավարարմանը: Կորոնավիրուսի հետևանքով առաջացած համաճարակը ավելի է բարդացրել ներկայիս իրականությունը հատկապես այնպիսի մարդկանց համար, ինչպիսիք են՝ էթնիկ փոքրամասնությունները, հաշմանդամություն ունեցող անձինք, ներքին տեղահանվածները, տարեցները և այլն: Համաճարակը ևս մեկ անգամ ապացուցեց, թե որքան կարևոր է կառուցել տեղական քաղաքացիական հասարակություն, որն ակտիվորեն կմասնակցի տեղական քաղաքականության մշակմանը և կառավարմանը՝ դրանով իսկ նպաստելով բնակչության, հատկապես խոցելի խմբերի համար, իրավունքների վրա հիմնված քաղաքականության մշակմանը և սոցիալական ծառայությունների հավասար հասանելիությանը:

Հետազոտությունը վերաբերում էր թիրախային տարածաշրջանների կոնկրետ մոնիցինգայալիտետներում սոցիալական, առողջապահական և կոմունալ ծառայությունների մատուցման առկա իրավիճակի ուսումնասիրությանը: Բացի այդ, քննարկվել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը և բնակչության ներգրավվածությունը նրանց գործունեությանը:

⁴ Վրաստանի Ինքնակառավարման Ազգային Ասոցիացիա, «Մոնիցինգայալ կառավարման մարտահրավերները COVID-19 համաճարակի պայմաններում», 2020

⁵Տեղական ինքնակառավարման օրենսգրքի համաձայն՝ «մոնիցինգայալիտետի պատվիրակված իրավասությունը պետական/ինքնավար հանրապետության կառավարման մարմնի իրավասությունն է, որը փոխանցվել է մոնիցինգայալիտետին՝ օրենքով կամ համաձայնագրի հիման վրա, կնքված Վրաստանի օրենսդրությանը համապատասխան՝ համապատասխան նյութական և ֆինանսական աջակցությամբ» (Վրաստանի Օրգանական օրենք – Տեղական ինքնակառավարման օրենսգիրք, հոդված 15) <https://matsne.gov.ge/ka/document/view/2244429?publication=62>

Մեթոդաբանություն

Չետագոտության նպատակն էր ուսումնասիրել Սամցխե-Ջավախեթիում և Քվեմո Քարթլիում սոցիալական ծառայությունների մատուցման առկա իրավիճակը: Բացի այդ, կարևոր էր որոշել քաղաքացիական հասարակության, կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավվածությունը այս գործընթացում: Չետագոտության շրջանակներում գնահատվել է թիրախային համայնքներում ապրող մարդկանց հասանելիությունը սոցիալական, առողջապահական և կոմունալ տարբեր ծառայություններին, ինչպես նաև նրանց ներգրավվածությունը, մի կողմից, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը և, մյուս կողմից՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությանը:

Չետագոտությունը ներառում էր ինչպես քանակական, այնպես էլ որակական բաղադրիչներ:

Քանակական հետազոտություն

Չետագոտության թիրախային տարածաշրջաններն էին Սամցխե-Ջավախեթին և Քվեմո Քարթլին: Չետագոտությունն ընդգրկել է Սամցխե-Ջավախեթիի 2 մունիցիպալիտետ (Ախալցխիսե և Նինոծմինդա) և Քվեմո Քարթլիի 6 մունիցիպալիտետ (Մարնեուլի, Դմանիսի, Բոլնիսի, Ծավկա, Թեթրիժարո, Գարդաբանի): Քանակական հետազոտությունն իրականացվել է դեմ առ դեմ հարցման մեթոդով: Չետագոտությանը մասնակցել են թիրախային համայնքներում ապրող 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք:

Կիրառվել է **պատահական ընտրության** մեթոդ, մասնավորապես կլաստերային ընտրություն՝ առաջնային շերտավորման մեթոդով Սամցխե-Ջավախեթիի և Քվեմո Քարթլիի տարածաշրջանների մունիցիպալիտետներում: Որպեսզի երկու տարածաշրջաններում էլ սխալի գործակիցը 5%-ից պակաս լինի (95% վստահության մակարդակ), Սամցխե-Ջավախեթիում և Քվեմո Քարթլիում հավասարապես անցկացվել է 600-ական հարցազրույց: Առանձին մունիցիպալիտետներում (շերտերում) հարցվող անձանց թիվը որոշվել է մունիցիպալիտետի բնակչության թվի համեմատ:

Շերտավորումից հետո իրականացվել է կլաստերավորման գործընթաց, որի շրջանակներում առանձնացվել են առաջնային (PSU), երկրորդական (SSU) և վերջնական ընտրության կետեր (FSU).

- Առաջնային ընտրության կետ՝ մարդահամարի շրջաններ համայնքների գյուղական և քաղաքային բնակավայրերում,
- Երկրորդական ընտրության կետ՝ տնային տնտեսություն,
- Վերջնական ընտրության կետ՝ 18 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդիկ:

Տնային տնտեսությունները ընտրվել են՝ սահմանելով բնակարանների/տների միջև եղած միջակայքը, որը տարբերվում է գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև: Տնային տնտեսություններից հարցվողների ընտրության հարցում օգտագործվել է պատահական ընտրության մեթոդը, մասնավորապես, հարցվողներն ընտրվել են Քիշի աղյուսակի (Kish Table) միջոցով:

Չետագոտության շրջանակներում հարցվել է 1200 մարդ (տես. Աղյուսակ Ա).

Աղյուսակ Ա

	Հարցումների քանակ	Միավոր գործակից (95%-օճՆՈՆ ՆՏՃՈՄԾՈՆ ԸՄԾԵԵ)
Սամցխե-Չավախերի		
Ախալցխիսե	380	
Նինոծմիևդա	220	
Ընդհանուր Սամցխե-Չավախերիում	600	4%
Քվեմո Քարթլի		
Բոլևիսի	110	
Գարդաբանի	165	
Դմանիսի	40	
Թեթրիծղարո	45	
Մարևեուլի	205	
Ծալկա	35	
Ընդհանուր Քվեմո Քարթլիում	600	4%
Ընդհանուր	1200	2.8%

Հարցումն իրականացվել է կառուցվածքային հարցաթերթի միջոցով: Հաշվի առնելով թիրախային տարածաշրջանների էթնիկ կազմը՝ մշակված հարցաթերթիկները թարգմանվել են ինչպես հայերեն, այնպես էլ ադրբեջաներեն լեզուներով:

Որակական հետազոտություն Ֆոկուս-խմբեր.

Հետազոտության շրջանակներում 8 ֆոկուս խմբեր են անցկացվել Քվեմո Քարթլիի վեց մունիցիպալիտետում (Մարևեուլի, Գարդաբանի, Ծալկա, Թեթրիծղարո, Բոլևիսի և Դմանիսի) և Սամցխե-Չավախերիի երկու մունիցիպալիտետում (Ախալցխիսե, Նինոծմիևդա) բնակվող բնակչության հետ: Հարցվողները ֆոկուս խմբերին մասնակցել են առցանց՝ «Zoom» հարթակի միջոցով:

4 ֆոկուս խումբ անցկացվել է էթնիկ վրացիների հետ (Թեթրիծղարո, Դմանիսի, Բոլևիսի, Ախալցխիսե), իսկ 4-ը՝ էթնիկ փոքրամասնությունների՝ ադրբեջանցիների (Գարդաբանի, Մարևեուլի) և հայերի (Ծալկա, Նինոծմիևդա) հետ: Հարցվողներն ընտրվել են նախապես մշակված հավաքագրման ձևի միջոցով: Ֆոկուս խմբում ընդգրկվելու համար մասնակիցները պետք է համապատասխանեին մի քանի չափանիշների: Մասնավորապես, ըստ բնակության համայնքների, նրանք պետք է լինեն էթնիկ վրացի, հայ կամ ադրբեջանցի: Մասնակիցների կեսը պետք է ունենար քաղաքային, սոցիալական և առողջապահական ծառայություններից օգտվելու փորձ, մի մասը պետք է գյուղաբնակ լիներ, իսկ մյուս մասը՝ քաղաքաբնակ: Հարցվածների մոտ կեսը պետք է լիներ խոցելի վիճակում գտնվող սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներ, ինչպիսիք են՝ սոցիալապես անապահով, հաշմանդամներ, ներքին տեղահանվածներ, պատերազմի վետերաններ, կենսաթոշակային տարիքի մարդիկ, բազմազավակ ընտանիքի անդամներ, միայնակ մայրեր և այլն: Բացի նշված չափանիշներից,

Ֆոկուս խմբերի կազմը տարբերվում էր ըստ տարիքային խմբերի, զբաղվածության և ընտանեկան կարգավիճակի: Մասնակիցների գեղեցիկային հավասարակշռությունը պահպանվել է: Յուրաքանչյուր ֆոկուս խմբում միջինում ընդգրկվել է 8 հարցվող, և ընդհանուր առմամբ հարցվել է 64 տեղի բնակիչ: Յուրաքանչյուր թիրախային համայնքում անցկացվել է 1 ֆոկուս խումբ:

Ֆոկուս խմբերը տևեցին մոտավորապես 1 ժամ 30 րոպե և ձայնագրվեցին ձայնային/վիդեո նյութեր: Մինչ հանդիպման սկիզբը մասնակիցներին տեղեկացվել է հետազոտության նպատակի և խնդիրների, ինչպես նաև տվյալների գաղտնիության պաշտպանության մասին:

Խորացված հարցազրույցներ.

Հետազոտության շրջանակներում իրականացվել է 17 խորացված փորձագիտական հարցազրույց և 1 խմբային հարցազրույց: 8 խորացված հարցազրույցի հարցվողները եղել են թիրախային համայնքներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ: Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ անցկացվել է 8 հարցազրույց: Մեկ հարցազրույցի հարցվողը Առողջապահության նախարարության Սոցիալական պաշտպանության քաղաքականության վարչության պետն էր, և խմբային հարցազրույց է անցկացվել Պետական խնամքի և թրաֆիքինգի զոհերի աջակցության գործակալության ներկայացուցիչների հետ, որին մասնակցել են Մարնետվիի, Բոլնիսիի, Ախալցխիսեի և Նինոծմինդայի մունիցիպալիտետների սոցիալական աշխատողները:

Խորացված փորձագիտական հարցազրույցները տևել են մոտ 1 ժամ և ձայնագրվել են աուդիո/վիդեո նյութեր: Մինչ հանդիպման սկիզբը հարցվողները տեղեկացվել են հետազոտության նպատակի և խնդիրների, ինչպես նաև տվյալների գաղտնիության պաշտպանության մասին:

Հիմնական բացահայտումներ

Խոցելի իրավիճակում գտնվող մարդկանց բացահայտում

Քվեմո Զարթլիի և Սամցխե-Ջավախեթիի մուկիցիպալիտետների/տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները խորացված հարցազրույցների շրջանակում նշել են, որ խոցելի իրավիճակում հայտնված մարդկանց բացահայտելու համար, նրանց նպատակային օգնություն ցուցաբերելու համար, հիմնականում օգտագործվում է՝ այսպես կոչված «սոցիալական վարկանիշային միավորը», որը տրվում է ընտանիքին՝ սոցիալական խոցելիության աստիճանը չափելու համար: Հարցվածների կարծիքով բացառություն են կազմում օնկոլոգիական հիվանդները, որոնցից առողջապահական ծառայություններ ստանալու համար սոցիալական վարկանիշային միավոր չի պահանջվում:

Թիրախ մուկիցիպալիտետներում գործող քաղաքացիական սեկտորի ներկայացուցիչների կարծիքով, վրացերենի չիմացությունը/ոչ պատշաճ իմացությունը կարող է դիտարկվել որպես խոցելիության լրացուցիչ չափանիշ ոչ վրացիներով խիտ բնակեցված շրջաններում: Ըստ այդմ, վրացերենին չտիրապետող/անբավարար տիրապետող էթնիկ փոքրամասնությունները գտնվում են խոցելի վիճակում, ինչը ստեղծում է հասարակության հետ շփման և ինտեգրման խնդիր: Նշվեց, որ Մարնեուլիում բնակվող էթնիկ փոքրամասնությունների մի զգալի մասը տեղեկատվություն ստանալու համար օգտագործում է թուրքական և ադրբեջանական աղբյուրներ, ինչն էլ ավելի է խորացնում նրանց օտարացումը Վրաստանում: Ինտեգրման ցածր մակարդակն իր հերթին առաջացնում է գրկանքների հետ կապված երևույթներ (օրինակ՝ գործազրկություն, աղքատություն, արտագաղթ և այլն): Քվեմո Զարթլիի տարածաշրջանի սոցիալական աշխատողները անչափահաս ադրբեջանցի աղջիկներին համարում էին խոցելի, որոնց տեղական համայնքը և ավանդույթը պարտավորեցնում են վաղ ամուսնանալ, ինչը զրկում է նրանց կրթության և տնտեսական անկախության հնարավորությունից:

Բնակչության սոցիալ-տնտեսական մարտահրավերները

Ըստ քաղաքացիական սեկտորի ներկայացուցիչների, կան բազմաթիվ էթնիկ փոքրամասնություններ, ովքեր ցանկանում են սովորել վրացերեն, թեև հանրային/անվճար ծրագրերի շրջանակներում նման հնարավորությունները քիչ են (1+4): Պետական ծրագիրը սպասարկում է միայն ոչ վրացի երիտասարդներին, ովքեր ցանկանում են բարձրագույն կրթություն ստանալ: Որակական հետազոտությունում, մասնավորապես Ֆոկուս խմբերում, սոցիալական և տնտեսական հիմնական խնդիրներն են՝ գործազրկությունը, աղքատությունը, առաջնային սպառման ապրանքների (սննդամթերք, դեղամիջոցներ) գների բարձրացումը և կոմունալ վճարների բարձրացումը: Էթնիկ փոքրամասնության աշխատունակ տարիքի բնակչությունը, հատկապես երիտասարդները, մեկնում են արտերկիր աշխատանքի տեղավորման և ինքնաիրացման համար: Թբիլիսիում բնակվող էթնիկ վրացի երիտասարդները նախընտրում են գաղթել, հատկապես՝ բարձրագույն կրթություն ունեցողները:

Ֆոկուս խմբերին մասնակցող էթնիկ փոքրամասնությունների մի մասի գնահատմամբ, վրացիների համեմատ, նրանք ավելի քիչ հնարավորություններ ունեն աշխատանքի տեղավորման համար: Որպես դրա պատճառ նշում են նրանց սոցիալական ինտեգրվածության ցածր մակարդակը, որի հիմնական պատճառը վրացերենի վատ իմացությունն է կամ չիմացությունը:

Ֆոկուս խմբերում նշվեցին բնակչության եկամտի հիմնական աղբյուրները՝ պետական և մասնավոր ծառայություններում զբաղվածությունից ստացված աշխատավարձեր և պետական սոցիալական օգնություն: Քննարկումներին մասնակցող սոցիալապես անապահովները

նշեցին, որ հնարավորության դեպքում մեկ անգամյա ոչ ֆորմալ աշխատանքի են ընդունվում, քանի որ ֆորմալ աշխատանքի դեպքում կկանգնեն սոցիալապես անապահովի կարգավիճակը կորցնելու վտանգի առաջ և կմնան առանց փոքր, բայց կայուն եկամուտի:

Որպես կանոն, խոցելի իրավիճակներում գտնվող մարդիկ չունեն անհրաժեշտ գիտելիքներ, որակավորում և կապեր՝ համապատասխան վարձատրությամբ աշխատանք գտնելու համար:

Քանակական հետազոտությունների տվյալները ցույց են տալիս, որ թիրախային տարածաշրջանների բնակչությունը **տնտեսապես խոցելի** է թե՛ սուբյեկտիվ ընկալման, թե՛ օբյեկտիվ ցուցանիշների (ընտանեկան եկամուտների) համաձայն: Մասնավորապես, Սամցխե-Ջավախեթիում հարցվածների մեծ մասի (մինչև 70%), իսկ Քվեմո Քարթլիում յուրաքանչյուր երկրորդ հարցվածի եկամուտներն օգտագործվում են միայն սննդի և հագուստի գնման համար: Ինչ վերաբերում է կոնկրետ եկամուտներին, ապա հաշվի առնելով, որ (ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների) Սամցխե-Ջավախեթիի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում ընտանիքների անդամների միջին թիվը կազմում է մոտ 4 մարդ, իսկ այդպիսի ընտանիքների կենսապահովման նվազագույնը կազմում է ամսական մոտ 340 լարի ամսական, ելնելով ընտանիքի միջին եկամուտներից (MEAN Սամցխե-Ջավախեթիում կազմում է 1070 լարի, իսկ Քվեմո Քարթլիում՝ 893 լարի), կարելի է եզրակացնել, որ թիրախային տարածաշրջանների բնակչության մեծամասնության եկամուտները գերազանցում են կենսապահովման նվազագույնը, թեև դրանք չեն հասնում տնտեսական իրավիճակի միջին մակարդակին:

Քանակական հետազոտությունը ցույց է տվել նաև, որ Սամցխե-Ջավախեթիի բնակչության զբաղվածների տեսակարար կշիռը (45%) զգալիորեն գերազանցում է Քվեմո Քարթլիի տարածաշրջանի զբաղվածների (35%) (ներառյալ ինքնազբաղվածների) տեսակարար կշիռն: Հետևաբար, **գործազուրկների տեսակարար կշիռն** ավելի բարձր է Քվեմո Քարթլիում (21%), քան Սամցխե-Ջավախեթիում (16%): Նշենք, որ գործազրկության այս թվերը մոտ են Ազգային վիճակագրական ծառայության 2021 թվականի տվյալներին (Քվեմո Քարթլի՝ 25%, Սամցխե-Ջավախեթի՝ 15%):

Բացի այդ, քանակական հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Սամցխե-Ջավախեթիում հարցվածների 6%-ի, իսկ Քվեմո Քարթլիում հարցվածների 18%-ի ընտանիքները սոցիալապես անապահովի կարգավիճակ ունեն: Բացի այդ, Սամցխե-Ջավախեթիում հարցվածների 0,5%-ը և Քվեմո Քարթլիում հարցվածների 3%-ը նշում են, որ իրենց ընտանիքները ներքին տեղահանվածների կարգավիճակ ունեն:

Covid 19-ի ազդեցությունը բնակչության վրա

Ինչպես ցույց են տվել ֆոկուս խմբերը, Covid-19-ը բնակչության տնտեսական վիճակի էական վատթարացում է առաջացրել: Համաճարակը հատկապես բացասաբար է ազդել բնակչության այն հատվածի վրա, որը զբաղված էր ծառայությունների ոլորտում: Համաճարակը բացասաբար է ազդել նաև այլ ոլորտների վրա՝ ա) գյուղատնտեսությունը, քանի որ ապրանքի իրացման խնդիր կար, և բ) կրթությունը, քանի որ հեռավար ուսուցումը վատթարացրել է կրթության որակը:

Ֆոկուս խմբերին մասնակցող խոցելի անձինք նշեցին, որ համաճարակի ժամանակ տեղական իշխանություններից ստացել են միանվագ օգնություն՝ կանխիկ դրամական օգնություն, առաքմամբ սննդամթերքի տրամադրում և այլն:

Ընդհանուր առմամբ, ֆոկուս խմբերին մասնակցող խոցելի մարդիկ գոհ են Covid-19 համաճարակի ժամանակ տեղական իշխանությունների ցուցաբերած ուշադրությունից: Այնուամենայնիվ, հարցվածներից ոմանք նշել են, որ համաճարակի ժամանակ ավելի շատ

կարիքներ են ունեցել, քան բավարարվել է կառավարության կողմից տրամադրված աջակցությամբ:

Կրթություն

Քանակական հետազոտությունը ցույց է տվել, որ ուսումնասիրված մոնիցինգայալիտետների մեծամասնությունում գործում են ինչպես նախադպրոցական, այնպես էլ հանրակրթական հաստատություններ (հանրային մանկապարտեզներ՝ 74%, հանրակրթական դպրոցներ՝ 98%), թեև այդ հաստատություններից օգտվելու ցուցանիշը բարձր չէ (հավանաբար պայմանավորված է այն փաստով, որ հարցվողների ընտանիքներում նախադպրոցական կամ դպրոցական հասակի երեխաներ չեն ապրում): Ընդհանուր միտումը պահպանվում է նույնիսկ խնդիրը տարածաշրջանային տեսանկյունից դիտարկելիս: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Քվեմո Բարթիում հանրային մանկապարտեզի առկայությունը շատ ավելի փոքր թվով է (64%), քան Սամցխե-Չավախետեթիում (84%): Հանրային մանկապարտեզներից օգտվելու մակարդակը Սամցխե-Չավախետեթիում հավասար է 18%-ի, իսկ Քվեմո Բարթիում՝ 14%-ի: Սամցխե-Չավախետեթիում հարցվածների 41%-ն օգտվում է հանրային դպրոցների ծառայություններից, մինչդեռ Քվեմո Բարթիում այս ցուցանիշը 44% է: Հանրային մանկապարտեզից կամ դպրոցից օգտվող հարցվածների հիմնական մասը գոհ է ծառայությունից:

Ի տարբերություն նախադպրոցական և հանրակրթական հաստատությունների, հարցվածների մեծամասնությունը նշում է, որ իրենց մոնիցինգայալիտետում/քաղաքում չկա ոչ մասնագիտական ուսումնարան (59%), ոչ էլ պետական ֆինանսավորմամբ բարձրագույն ուսումնական հաստատություն (68%): Մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններով Սամցխե-Չավախետեթին ավելի է առանձնանում, քան Քվեմո Բարթին: Թեև օգտվողների թիվը փոքր է (մասնագիտական ուսումնարան՝ 2.7%, N=13, բարձրագույն ուսումնական հաստատություն՝ 8%, N=24), բայց հիմնականում գոհ են (մասնագիտական ուսումնարան՝ N=8, բարձրագույն ուսումնական հաստատություն՝ N=15): Դժգոհության պատճառներից որոշ դեպքերում առանձնացվել են՝ ուսուցիչների որակավորում, վերապատրաստման ծրագրերի պակաս, ոչ ակտուալ վերապատրաստման ծրագրեր, կառավարում, բյուրոկրատիա, վճարներ:

Մոնիցինգայալ ծառայությունների մասին տեղեկացվածություն

Ֆոկուս խմբերում նշվել են համայնքային ծառայությունների մասին տեղեկատվության մի քանի հիմնական աղբյուրներ՝ զանգվածային լրատվության միջոցներ, հիմնականում տեղական հեռուստատեսային և ռադիոհաղորդիչներ, սոցիալական մեդիա, հատկապես «Ֆեյսբուք», մոնիցինգայալիտետների պաշտոնական կայքեր և ոչ պաշտոնական կայքեր (հարազատների, հարևանների միջև տեղեկատվության փոխանակում և այլն):

Սոցիալական և առողջապահական ծառայությունների մասին տեղեկատվության պակասը, հատկապես էթնիկ փոքրամասնությունների՝ ադրբեջանցիների և հայերի շրջանում, առաջանում է այն պատճառով, որ լեզվական խոչընդոտի և ավելի քիչ ինտեգրվածության պատճառով տեղեկատվություն ստանալու հնարավորություններն ավելի քիչ են՝ վրացիների հետ համեմատած:

Քանակական հետազոտության շրջանակներում «կանանց սենյակների» մասին տեղեկություն ունի հարցվածների միայն 17%-ը, նրանցից 5%-ը չի օգտվում այս ծառայությունից (Սամցխե-Չավախետեթի՝ 3%, Քվեմո Բարթի՝ 8%): Այս ծառայության մասին տեղեկացվածության մակարդակը ցածր է, քանի որ հարցվածների մեծ մասը չի ճանաչում կանանց սենյակից օգտվողների (73%):

Սոցիալական ծառայություններ

Քանակական հետազոտության արդյունքում պարզվել է, որ հարցվածների հիմնական մասը (81%) չի օգտվում մունիցիպալ սոցիալական ծառայություններից: Շատ ավելի փոքր թիվ (26%) չի օգտվում պետական (կենտրոնական) ծառայություններից: Ընդհանուր միտումը պահպանվում է երկու տարածաշրջանում էլ՝ Սամցխե-Ջավախեթիում և Զվեմո Քարթլիում: Մեծ է այն հարցվածների մասնաբաժինը, ովքեր չեն օգտվում ոչ մի մունիցիպալ սոցիալական ծառայությունից (Սամցխե-Ջավախեթի՝ 88%, Զվեմո Քարթլի՝ 75%): Մոտավորապես հավասար թվով հարցվածներ չեն օգտվում պետական ծառայություններից (Սամցխե-Ջավախեթի՝ 24%, Զվեմո Քարթլի՝ 29%): Հետազոտությանը մասնակցած անձանց կողմից նշված մունիցիպալ սոցիալական ծառայությունների շարքում բացահայտվել է միանվագ (կանխիկ կամ այլ) օգնություն ունեցող օգտվողների խումբ (6%) և սոցիալապես անապահով երեխաների և նորածինների աջակցության ծրագրից օգտվողների խումբ (4%): Իսկ պետական (կենտրոնական) ծառայություններից՝ ծերության կենսաթոշակ (29%), պետական բժշկական ապահովագրություն (20%), կոմունալ սուբսիդիաներ (18%): Հարցվողները հիմնականում ժամանակին են ստանում ցանկացած տեսակի օգնություն (և՛ մունիցիպալ, և՛ կենտրոնական) և, հետևաբար, գոհ են մատուցվող ծառայություններից (մունիցիպալ ծառայություններից գոհ է միջինը 63%-ը, իսկ պետական (կենտրոնական) ծառայություններից միջինը՝ 70%-ը): Պետական ծառայություններից օգտվելու դեպքում, գրանցման ընթացակարգերի առումով, ինչպես Սամցխե-Ջավախեթիում, այնպես էլ Զվեմո Քարթլիում, հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում՝ երեխաների) կենսաթոշակ ստանալու գործընթացը խնդրահարույց է համարվել: Սամցխե-Ջավախեթիում հարցվածների 27%-ը և Զվեմո Քարթլիում հարցվածների 33%-ը նշել են, որ գրանցման ընթացակարգը շատ բարդ է կամ՝ բարդ:

Առողջապահական ծառայություններ

Քանակական հետազոտության շրջանակներում հարցվածների մեծամասնությունը չի օգտվում ո՛չ մունիցիպալ (89%), ո՛չ պետական (կենտրոնական) (54%) առողջապահական ծառայություններից: Ընդհանուր միտումը պահպանվում է երկու տարածաշրջանում էլ՝ Սամցխե-Ջավախեթիում և Զվեմո Քարթլիում: Մեծ է այն հարցվածների մասնաբաժինը, ովքեր չեն օգտվում որևէ մունիցիպալ (Սամցխե-Ջավախեթի՝ 94%, Զվեմո Քարթլի՝ 85%) կամ պետական (Սամցխե-Ջավախեթի՝ 61%, Զվեմո Քարթլի՝ 47%) առողջապահական ծառայություններից: Հետազոտությանը մասնակցած անձանց կողմից նշված մունիցիպալ ծառայությունների շարքում կարևորվել է անվճար դեղորայքի տրամադրումը (7%), իսկ պետական ծառայություններից՝ գյուղի բժիշկը (19%) և շտապ օգնությունը (14%): Հարցվածները ստանում են առողջապահական ծառայությունները ժամանակին և հիմնականում գոհ են մատուցվող ծառայություններից և՛ մունիցիպալ (միջին ցուցանիշը՝ 65%), և՛ պետական (կենտրոնական) մակարդակով (միջին ցուցանիշը՝ 72%): Խնդրահարույց են ճանաչվել աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների վերականգնողական և հոգեկան առողջության ծառայությունները, որոնց գրանցման ընթացակարգերը համեմատաբար բարդ են, իսկ հարցվողների բավարարվածության մակարդակը՝ ցածր:

Ֆոկուս խմբերը ցույց տվեցին, որ թիրախային մունիցիպալիտետների ներկայացուցիչները հիմնականում գոհ են մունիցիպալ սոցիալական և առողջապահական ծառայություններից: Դրանցից օգտվելու համար առկա ընթացակարգերով անցնելը կապված չէ էական դժվարությունների հետ:

Սոցիալական և առողջապահական կարիքներն ու մարտահրավերները

Ըստ ֆոկուս խմբերի, թիրախային մունիցիպալիտետների բնակչության կարևոր կարիքներից մեկը որակյալ բժիշկ-մասնագետի խորհրդատվություն ստանալն է: Մեկ այլ կարիք, որը

հայտնաբերվել է խոցելի վիճակում գտնվող հարցվածների շրջանում, կապված է առաջին անհրաժեշտության դեղամիջոցների հասանելիության հետ:

Ֆոկուս խմբի մասնակիցները, ովքեր օգտվել են մուկիցիպալ առողջապահական ծառայություններից, նշել են, որ հետվիրահատական վերականգնումը չի ֆինանսավորվում, ինչը բնակչության համար կապված է զգալի ծախսերի հետ:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ երեխաների վաղ զարգացման առումով համայնքներում անհրաժեշտ է ներդնել որոշակի ծառայություններ: Դրանց թվում նշվել են լոգոպեդի ծառայություններ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար նույնպես հոգեբանների և օկուպացիոն թերապևտների կարիք կա: Նշվել է նաև բազմազավակ ընտանիքներում աշակերտներին դպրոցական պարագաներով ապահովելու կարիք:

Ֆոկուս խմբերի մասնակիցները կարևոր են համարում, որ հետագայում հաշվի առնվեն առկա կարիքները, որոնք նախատեսված չեն քաղաքապետարանի ծրագրերով, և բյուջեում այդ նպատակով միջոցներ հատկացվեն:

Հատկանշական է, որ ֆոկուս խմբերին մասնակցող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հիմնական մասը սոցիալական և առողջապահական ծառայություններից օգտվելու խնդիր չի ունեցել, սակայն ազգային փոքրամասնությունների հետ անցկացված ֆոկուս խմբերում կարծիք է արտահայտվել, որ գոյություն ունեցող ծառայություններն ավելի մատչելի են վրացիներին, քան մյուս էթնիկ խմբերին: Դրա հիմնական պատճառը վրացերենի չիմացությունն է կամ վատ իմացությունը: Հարցվածները նշել են, որ հավասար հասանելիության խնդիրն ավելի մեծ է ավագ սերնդի մոտ, քանի որ նրանք չեն խոսում վրացերեն: Ծառայություններ ստանալու համար անհրաժեշտ է վրացերենով դիմում պատրաստել և փաստաթղթեր հավաքել, ինչը դժվար է էթնիկ փոքրամասնությունների համար՝ առանց վրացերեն իմացող մարդու օգնության: Ֆոկուս խմբերին մասնակցող էթնիկ վրացիները դժվարանում էին խոսել ծառայությունների հավասար հասանելիության մասին, քանի որ այդ հարցը նրանց համար ակտուալ չէ:

Խորացված հարցազրույցների շրջանակում, ըստ թիրախային մուկիցիպալիտետների տեղական իշխանությունների ներկայացուցիչների, բնակչության այն հատվածը, որը չունի ֆորմալ սոցիալական անապահովության կարգավիճակ (համապատասխան վարկանիշային միավորի բացակայության պատճառով) իրականում տարբեր աջակցության կարիք ունի՝ հատկապես զբաղվածության և առողջապահական ծառայությունների ուղղությամբ: Առողջապահական ծառայությունների համար հատկացվող գումարները բավարար չեն բնակչության կարիքներն ամբողջությամբ բավարարելու համար, անհրաժեշտ է ավելացնել մուկիցիպալիտետի բյուջեն: Խոսքը հատկապես վերաբերում է հետվիրահատական շրջանում բուժօգնության տրամադրմանը:

Զվեմո Քարթլիում աշխատող սոցիալական աշխատողները նշել են, որ ծառայություններ ստանալու համար խոչընդոտ/դժվարություն է ստեղծվում ընթացակարգերի բազմությունը, որոնք քաղաքացին պետք է անցնի ծառայություններ ստանալու համար:

Տեղական իշխանությունների ներկայացուցիչները նշում են, որ բնակչությունը նախընտրում է ֆինանսական օգնություն ստանալու հայտ ներկայացնել, քան արտահայտել կոնկրետ որևէ ծառայություն ստանալու ցանկություն:

Ե՛վ տեղական ինքնակառավարման մարմինների, և՛ քաղաքացիական սեկտորի ներկայացուցիչները չեն կարող նշել որևէ չափանիշ, որը գոյություն ունի մուկիցիպալիտետներում՝ սոցիալական ծառայությունների, առողջապահության,

ենթակառուցվածքների, կրթական և կոմունալ ոլորտներում: Նրանց խոսքով, մուլտիցիպալիտետները չեն առաջնորդվում գրավոր ուղեցույցներով և փորձում են հնարավորինս օգնել բնակչությանը ըստ ինքնաբերական մշակված ծրագրի:

Այլ սոցիալական խնդիրներ

Ֆոկուս խմբերում առանձնացվել է երիտասարդների ազատ ժամանակի արդյունավետ օգտագործման խնդիրը, որի լուծման գործում կարևոր է տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությունը: Նաև ասվեց, որ մուլտիցիպալիտետը պետք է աջակցի գերազանց և մոտիվացված երիտասարդներին, ինչը կարող է լինել կրթության համաֆինանսավորման, կացարանով ապահովման և այլնի տեսքով:

Ըստ ֆոկուս խմբի մասնակիցների՝ մուլտիցիպալիտետները պետք է մշակեն զբաղվածության խթանման ծրագրեր, օրինակ՝ կապ հաստատեն պոտենցիալ գործատուների հետ, կազմակերպեն զբաղվածության ֆորումներ և այլն: Հարցվողներն ընդգծում են, որ այս տիպի գործողությունները չպետք է կրեն ֆորմալ բնույթ և պետք է ուղղված լինեն իրական արդյունքների հասնելուն:

Կոմունալ ենթակառուցվածքներ

Քանակական հետազոտության մասնակիցների ճշող մեծամասնությանը (97%) փաստացի 24 ժամ **Էլեկտրաէներգիա** է մատակարարվում (Սամցխե-Ջավախեթի՝ 98%, Քվեմո Քարթլի՝ 93%): Նրա հզորությունը գոհացուցիչ է ինչպես ձմռանը, այնպես էլ մյուս եղանակներին:

Հետազոտական բնակավայրերում հիմնականում գործում է **կենտրոնական գազատար** (Սամցխե-Ջավախեթի՝ 79%, Քվեմո Քարթլի՝ 88%)։ Հարցվածների մեծ մասին գազ է մատակարարվում կենտրոնացկան համակարգից: Հարցվածների զգալի մասը, որոնց բնակավայրը չունի կենտրոնական գազատար, բոլոր եղանակներին գազաբալոն է օգտագործում: Ընդհանուր առմամբ, գազամատակարարման ծառայությունը դրական է գնահատվում՝ հարցվածների 78%-ը գոհ է (Սամցխե-Ջավախեթի՝ 78%, Քվեմո Քարթլի՝ 78%):

Քանակական հետազոտությանը մասնակցած անձանց կեսից ավելին (53%) տնային տնտեսությանը ջուր մատակարարելու համար օգտագործում է տան (բնակարանի) ծորակի ջուրը (Սամցխե-Ջավախեթի՝ 58%, Քվեմո Քարթլի՝ 48%), իսկ մեկ տասներորդից ավելին օգտագործում է տնից դուրս գտնվող ջրամատակարարման ընկերության ընդհանուր ծորակի ջուրը: Հարկ է նշել, որ եթե Սամցխե-Ջավախեթիում յուրաքանչյուր հինգերորդ հարցվողն օգտագործում է ջուրը տնից դուրս գտնվող ջրամատակարարման ընկերության ընդհանուր ծորակից, ապա Քվեմո Քարթլիում այդ ցուցանիշը կրճատվում է մինչև 7%: Մյուս կողմից, Քվեմո Քարթլիում ջրամատակարարման համար հիմնականում ջրհորներ են օգտագործում (19%), մինչդեռ Սամցխե-Ջավախեթիում ջրհորներից օգտվողների մասնաբաժինը Նույնիսկ 1%-ի չի հասնում: Հարցվածների 48%-ի գնահատմամբ՝ խմելու ջուրը անընդհատ չի գալիս (Սամցխե-Ջավախեթի՝ 39%, Քվեմո Քարթլի՝ 58%) և շատ դեպքերում այն անորակ է (38%): Կենցաղային ջրամատակարարման համար ստացված ջրի քանակը գնահատվել է բավարար, իսկ ջրի վարձը՝ մատչելի:

Պարզվել է, որ **կենտրոնացված ոռոգման համակարգը** չի գործում բնակավայրերի մեծ մասում (72%) (Սամցխե-Ջավախեթի՝ 85%, Քվեմո Քարթլի՝ 67%): Նշված ծառայությունը ստացող անձանց գնահատմամբ՝ համակարգը նորմալ է աշխատում (67%), ուստի նրանց բավարարվածության մակարդակը համեմատաբար բարձր է (45%) (Սամցխե-Ջավախեթի՝ 44%, Քվեմո Քարթլի՝ 45%):

Ոռոգման համակարգի նման, հարցվածների մեծամասնությունը նշում է **կենտրոնական կոյուղու համակարգի** բացակայությունը (65%) (Սամցխե-Չավախեթի՝ 52%, Քվեմո Քարթլի՝ 78%): Դրական փորձ ունեցող հարցվածների 90%-ի տները միացված են նշված համակարգին (Սամցխե-Չավախեթի՝ 96%, Քվեմո Քարթլի՝ 77%): Համակարգն ընդհանուր առմամբ գնահատվում է որպես գործող և, հետևաբար, օգտագործողների մեծամասնությունը գոհ է կենտրոնացված կոյուղու համակարգից (71%) (Սամցխե-Չավախեթի՝ 78%, Քվեմո Քարթլի՝ 52%):

Հարցվածների 92%-ի փորձի համաձայն՝ կա իրենց բնակավայրից/թաղամասից **աղբը հեռացնելու** պրակտիկա (Սամցխե-Չավախեթի՝ 99%, Քվեմո Քարթլի՝ 85%); Ավելին, գրեթե յուրաքանչյուր երրորդ հարցվողը նշում է, որ աղբը տանում են ամեն օր (Սամցխե-Չավախեթի՝ 34%, Քվեմո Քարթլի՝ 29%): Ծառայությունից օգտվող հարցվածների 73%-ը գոհ է նշված ծառայությունից:

Յուրաքանչյուր երրորդ հարցվողը նշում է, որ **մաքրվում են իրենց բնակավայրի/թաղամասի փողոցները**, ընդ որում, 42%-ի կարծիքով, այս պրակտիկան առօրյա բնույթ ունի: Քվեմո Քարթլիի (20%) համեմատ Սամցխե-Չավախեթին (48%) առանձնանում է փողոցների մաքրման պրակտիկայով: Նշված ծառայությունից օգտվողների 75%-ը գոհ է ծառայությունից (Սամցխե-Չավախեթի՝ 79%, Քվեմո Քարթլի՝ 64%): Դժգոհության հիմնական պատճառներն են եղել սպասարկման որակը, հիգիենայի նորմերի պահպանումն ու հաճախականությունը:

Բոլոր ութ մունիցիպալիտետներում անցկացված ֆոկլուս խմբերը բացահայտեցին այն կարծիքը, որ վերջին տարիներին մունիցիպալիտետներում բարելավվել են կոմունալ և ճանապարհային ենթակառուցվածքները: Սակայն, չնայած դրան, բացահայտվեցին խնդիրներ, որոնց լուծումը զգալիորեն կբարելավի տեղի բնակչության ընդհանուր վիճակը: Գյուղատնտեսությամբ զբաղվողների համար խնդրահարույց է ոռոգման ջրի անսարք համակարգը, ինչը զգալիորեն խոչընդոտում է գյուղատնտեսության զարգացմանը: Խնդրահարույց է նաև անկարգ կոյուղու համակարգը, որը որոշ բնակավայրեր էկոլոգիական վտանգի տակ է դնում:

Բոլոր ութ մունիցիպալիտետների ֆոկլուս խմբերի մասնակիցները նշել են, որ հանրային օբյեկտները/տարածքները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հարցվածների մի մասը նշեց, որ վերջերս կառուցված պետական հաստատությունները հարմարեցված են սահմանափակ շարժունակության համար, սակայն հարցվողները չգիտեն, թե որքանով է հարմարեցումը համապատասխանում գործող չափանիշներին, քանի որ չեն տեսել հարմարեցված միջավայր օգտագործող հաշմանդամություն ունեցող անձ:

Կլիմայի փոփոխություն և դրանից բխող առողջական խնդիրներ

Հարցմանը մասնակցած մարդկանց մեծ մասը (71%) տեղեկացված է կլիմայի փոփոխության մասին (Սամցխե-Չավախեթի՝ 74%, Քվեմո Քարթլի՝ 68%): Հարցվածների հիմնական մասը նշում է երաշտների, անձրևների և քամիների հաճախականությունը շրջակա միջավայրի փոփոխության առումով: Քվեմո Քարթլիում գերակշռում է երաշտի հաճախականությունը (27%), իսկ Սամցխե-Չավախեթիում՝ քամիների հաճախականությունը (24%):

Հարցվածների մեծամասնությունը կարծում է, որ կլիմայի փոփոխությունը առողջության հետ կապված այնպիսի բացասական հետևանքներ չի առաջացնում, ինչպիսիք են վարակների տարբեր տեսակների տարածումը, վիրուսային հիվանդությունների առաջացումը/տարածումը, քաղցկեղի աճը և մահացության աճը: Սակայն, մյուս կողմից,

յուրաքանչյուր երրորդ հարցվող կարծում է, որ կլիմայի փոփոխությունն առաջացնում է սրտի հիվանդությունների (32%) և ինսուլտի (31%) աճ, ինչը պայմանավորված է բացասաբար փոփոխված միջավայրով:

Հարցվածների մեծամասնությունը (60%) իր տարածաշրջանի համար կարևոր խնդիր է համարում կլիմայի փոփոխությունը (Սամցխե-Ջավախեթի՝ 49%, Քվեմո Քարթլի՝ 72%): Մյուս կողմից, պետք է ընդգծել, որ Սամցխե-Ջավախեթիում հարցված մոտավորապես յուրաքանչյուր հինգերորդ մարդ միջավայրի փոփոխությունները գնահատում է որպես աննշան:

Բնակավայրերի պլանավորում/բարեկարգում

Հետազոտությանը մասնակցող մարդկանց զգալի մասը (39%) դժգոհ է իրենց բնակավայրի պլանավորումից: Քվեմո Քարթլիից (43%) հարցվածներն ավելի շատ դժգոհություն են հայտնում, քան Սամցխե-Ջավախեթիից (35%): Հարցվածների դժգոհության պատճառը հիմնականում ճանապարհների ու մայթերի վիճակը, հրապարակների ու սպորտային ենթակառուցվածքների բացակայությունն էր: Բացի այդ, թվում է, որ բնակավայրը պլանավորելիս հաշվի չեն առնվել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները, քանի որ հարցվածների 56%-ի կարծիքով՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված միջավայր չկա կամ չգիտեն, թե արդյոք կա (Սամցխե -Ջավախեթի՝ 62%, Քվեմո Քարթլի՝ 50%)։ Խնդրահարույց են թեքահարթակների, չհարմարեցված շենքերի և սայլակով օգտվողների համար տրանսպորտի բացակայությունը:

Անվտանգություն

Հարցվածների կարծիքով՝ իրենց բնակավայրում (58%) (Սամցխե-Ջավախեթի՝ 62%, Քվեմո Քարթլի՝ 54%) պաշտպանված է բնակչության անվտանգությունը: Ավելին, հարցվածները հիմնականում նկարագրում են, որ իրենց կենսամիջավայրում չկա կողոպուտ/գողություն (66%), թմրամիջոցների օգտագործում (59%), մանր խուլիգանություն (57%), ընտանեկան բռնություն (61%), վաղ ամուսնություն (67%), ամենացածր ցուցանիշն ունի ավկոհիլի օգտագործումը (37%): Ընդհանուր միտումը պահպանվում է նույնիսկ խնդիրը տարածաշրջանային տեսանկյունից դիտարկելիս: Մեծամասնությունը նկարագրում է, որ վերոնշյալ գործելակերպը տարածված չէ իրենց բնակավայրում: Պարզվել է նաև, որ ավկոհիլի օգտագործումը Քվեմո Քարթլիում (31%) ավելի տարածված է, քան Սամցխե-Ջավախեթիում (13%): Ճատ դեպքերում ոստիկանությունը սահմանվել է որպես անվտանգություն ապահովող մարմին, և յուրաքանչյուր երրորդ հարցվողի կարծիքով՝ բնակչությունն ինքն է ստեղծում նման կարգ: Սամցխե-Ջավախեթիում բնակչության դերն ավելի ընդգծված է (35%), քան Քվեմո Քարթլիում (26%): Բացի այդ, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում թաղամասի ավագները ավելի շատ են նշվում որպես անվտանգության այլընտրանքային աղբյուր (4%), քան Քվեմո Քարթլիում (1%):

Էլեկտրոնային ծառայություններ

Հարցմանը մասնակցած մարդկանց մեծամասնությունը չի օգտվում ո՛չ պետական (կադաստրային տվյալների բազա, տեղեկատվություն գույքի/եկամտի մասին և այլն) (90%) (Սամցխե-Ջավախեթի՝ 90%, Քվեմո Քարթլի՝ 90%), ո՛չ էլ մունիցիպալ (96%) (Սամցխե-Ջավախեթի՝ 90% Ջավախեթ՝ 97%, Քվեմո Քարթլի՝ 96%) Էլեկտրոնային ծառայություններից: Մունիցիպալ ծառայություններից օգտվողների հիմնական մասն օգտվել է քաղաքապետարանի և սակրեբուլոյի կայքից: Ընդհանուր առմամբ, ճիշտ է, երկու մակարդակներում գործող Էլեկտրոնային ծառայություններից օգտվող հարցվածների մեծամասնությունը գոհ է մատուցվող ծառայություններից, սակայն պետական

ծառայությունների դեպքում բավարարվածների տեսակարար կշիռն ավելի մեծ է (պետական էլեկտրոնային ծառայություն՝ 83%, մուլտիցիպալ էլեկտրոնային ծառայություն՝ 64%):

Քաղաքացիների ներգրավվածությունը տեղական ինքնակառավարման որոշումների կայացման գործընթացում

Հարցվածների 40%-ի կարծիքով՝ քաղաքացիները տեղական ինքնակառավարման մակարդակով չեն մասնակցում որոշումների կայացման գործընթացին: Չմասնակցության մակարդակը շատ ավելի բարձր է Քվեմո Քարթլիում (53%), համեմատած Սամցխե-Ջավախեթիի (27%): Մյուս կողմից, առնվազն յուրաքանչյուր չորրորդ հարցվողը նշում է, որ նշված գործընթացը չի բավարարում բնակչության պահանջներն ու կարիքները (27%) (Սամցխե-Ջավախեթի՝ 16%, Քվեմո Քարթլի՝ 37%), թեև կցանկանային. ա) ավելի հաճախ հանդիպել բնակչությանը, բ) ավելի շատ գումար հատկացնել քաղաքապետարանի խնդիրները լուծելու համար, գ) ընթացիկ գործընթացների մասին ավելի շատ տեղեկատվություն պետք է տրամադրվի բնակչությանը: Յուրաքանչյուր երրորդ հարցվողի գնահատմամբ՝ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը մեծացնելուն ուղղված միջոցառումներ հիմնականում չեն իրականացվում:

Որակական հետազոտության շրջանակներում բոլոր \$ոկուս խմբերում եղել են մասնակիցներ, որոնք ոչինչ չեն լսել տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցության ձևերի մասին:

\$ոկուս խմբերի մասնակիցների մի մասը չի տեսնում կառավարության պատրաստակամությունն ու ցանկությունը բնակչությանը ներգրավելու որոշումների կայացման գործընթացում: Ինչպես նշեցին մասնակիցները, տեղեկացվածության պակասը չմասնակցելու հիմնական պատճառն է. բնակչությունը տեղեկություն չունի իր իրավունքների մասին, մասնավորապես՝ ինչպես և ինչ ձևերով կարող է ներգրավվել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մեջ:

Խոցելի վիճակում գտնվող հարցվածները նշել են, որ հաշվի առնելով իրենց սոցիալ-տնտեսական ծանր վիճակը՝ իրենք մուլտիցիպալիտետի գործունեությամբ զբաղվելու ո՛չ հնարավորություն ունեն, ո՛չ էլ մոտիվացիա:

Հարկ է նշել, որ տեղական քաղաքականության մեջ գյուղի բնակչության ներգրավման կարևոր խոչընդոտներից է կենտրոնի հեռավորությունը: Լեզվական խոչընդոտը և ընդհանուր առմամբ ինտեգրվածության ցածր աստիճանը անվանվել են որպես ազգային փոքրամասնությունների չներառվածության լրացուցիչ գործոն: Էթնիկ փոքրամասնություններին հասարակական կյանքից հեռացնելը կարևոր խնդիրներից է:

Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները խորացված հարցազրույցների շրջանակներում հաստատում են, որ բնակչության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին ցածր է: Հատկապես պասիվ են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն ու կանայք: Էթնիկ փոքրամասնությունների դեպքում դրա հիմնական պատճառներից մեկը վրաց լեզվի չիմացությունն է կամ ոչ համարժեք իմացությունը:

Հաղորդակցություն տեղական ինքնակառավարման կառույցների հետ

Քանակական հարցումը բացահայտել է, որ տեղական ինքնակառավարման մարմինների հետ բնակչության հաղորդակցությունը ցածր է՝ հարցվածների մեծամասնությունը (82%) վերջին 2 տարվա ընթացքում չի դիմել նրանց՝ կոնկրետ խնդրի լուծման նպատակով (Սամցխե-Ջավախեթի՝ 84%, Քվեմո Քարթլի՝ 80%): Իսկ հակառակ փորձ ունեցող անձինք վերջին 2 տարում քաղաքապետարան են դիմել հետևյալ հարցերով՝ սոցիալական/խոցելի տարբեր խմբերի (հաշմանդամներ, երեխաներ, տարեցներ, անօթևաններ, հարկադիր տեղահանվածներ) հետ կապված միջավայրի բարելավում, ենթակառուցվածքային խնդիրներ (գազ. մատակարարում, ջրամատակարարում, էլեկտրաէներգիա և այլն), սոցիալական հարցեր (սոցիալական աջակցություն, գործազրկություն և այլն), առողջապահական ծառայությունների հետ կապված հարցեր: Սակայն կարևոր է, որ 40%-ի փորձով ինքնակառավարումը որևէ խնդիր չի լուծել:

Քաղաքացիական սեկտորի ներկայացուցիչները բնակչությանը չներառելու պատասխանատվությունը դնում են նաև քաղաքապետարանի վրա, քանի դեռ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները ժամանակին չեն հայտարարություններ անում հանդիպումների մասին, և եթե այդպիսի հայտարարություններ արվում են, միայն նեղ շրջանակն է ստանում այդ տեղեկությունը, քանի որ ուղղակի (ուղիղ) կապի ուղիները բնակչության հետ սահմանափակ են, իսկ պաշտոնական ուղիները (օրինակ՝ քաղաքապետարանների կայքերը) քիչ են օգտագործում: Սրա արդյունքն այն է, որ, ըստ քաղաքացիական սեկտորի, դեռևս խնդիր է մուկհիցիպալ բյուջեների և՛ մշակման, և՛ ծախսման թափանցիկությունը:

Տեղական իշխանությունների (օրինակ՝ Ախալցխայի քաղաքապետարանի) ներկայացուցիչների խոսքով, սոցիալական ծառայությունների համակարգը դարձել է էլեկտրոնային՝ բնակիչներին հնարավորություն է տրվել առանց տեղում գալու դիմում ներկայացնել և պատասխան ստանալ: Սակայն, մյուս կողմից, խնդիր է բնակչության շրջանում էլեկտրոնային հաղորդակցության հմտությունները և համապատասխան տեխնիկական աջակցությունը (հատկապես ավելի մեծ տարիքի մարդկանց շրջանում):

Մասնակցություն հանրային գործողություններին

Վերջին 1 տարվա ընթացքում հարցվածների մեծ մասը (57%) չի մասնակցել որևէ քաղաքացիական/հասարակական գործունեության, հատկապես Սամցխե-Ջավախեթիում (65%), (50% Քվեմո Քարթլիում): Հարցվողները չեն մասնակցում քաղաքացիական/հասարակական գործունեությանը տարբեր պատճառներով, ինչպիսիք են՝ ժամանակի սղությունը, զգալը, որ իրենց գործունեությունը ոչինչ չի փոխի և այլն:

Գոհունակություն տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքից

Հաշվի առնելով առկա փորձը՝ հարցվածների 39%-ը գոհ է ինքնակառավարման մարմինների աշխատանքից (Սամցխե-Ջավախեթի՝ 48%, Քվեմո Քարթլի՝ 30%), սակայն որպես խնդիրներ են բացահայտվում աշխատակիցների որակավորման մակարդակը, նեպոտիզմը, պասիվ հաղորդակցությունը բնակչության հետ և այլն:

Համաձայն ռեգրեսիայի մոդելի, մուկհիցիպալիտետի գործունեությունից ավելի գոհ են այն հարցվողները, ովքեր՝ ա) ապրում են քաղաքում, բ) բարձր տարիքային խմբի ներկայացուցիչ են, գ) վերջին 2 տարում առողջապահական ծառայությունների հետ կապված հարցերով դիմել են տեղական ինքնակառավարմանը, դ) վերջին 1 տարվա ընթացքում մասնակցել են կարգավորման ընդհանուր ժողովին:վ

Չամագործակցություն կազմակերպությունների հետ

քաղաքացիական

հասարակության

Քանակական հարցմանը մասնակցած մարդկանց մեծամասնությունը (94%) տեղեկություն չունի մուլտիցիպալիտետում առկա քաղաքացիական կազմակերպությունների մասին (Սամցխե-Ջավախեթի՝ 91%, Զվեմո Բարթի՝ 96%): Իրագեկ հարցվածների մեծ մասը (59%) կարծում է, որ տեղի բնակչությունը մասնակցում է նշված կազմակերպությունների գործունեությանը: Պարզվել է, որ հարցվողները վերջին 1 տարվա ընթացքում չեն օգտվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից առաջարկվող ծառայություններից. հիմնական պատճառը նման ծառայություններից օգտվելու անհրաժեշտության բացակայությունն էր: Մյուս կողմից, պարզվել է, որ տեղեկացված հարցվողները հիմնականում օգտվում են սոցիալական ծառայություններից (19%), սակայն հատկանշական է, որ Զվեմո Բարթիում հարցված անձինք չունեն նմանատիպ փորձ: Յաշվի առնելով, որ հարցված անձինք ընկալում են քաղաքացիական հասարակության գործունեության համապատասխանությունը և քաղաքացիների պահանջները/կարիքները, նրանք հիմնականում գոհ են մուլտիցիպալիտետում նշված կազմակերպությունների աշխատանքից (73%) (Սամցխե-Ջավախեթի՝ 89 %), (Զվեմո Բարթի՝ 58%):

Նաև ֆոկուս խմբերը ցույց տվեցին, որ մասնակիցների շրջանում քիչ տեղեկատվություն կա թիրախային տարածաշրջաններում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասին: Յարցվողները հիմնականում լսել են այնպիսի կազմակերպությունների մասին, որոնք նյութապես օգնում են կարիքավոր ընտանիքներին, ազգային փոքրամասնություններին առաջարկում են վրացերենի դասընթացներ, իրավաբանական ծառայություններ և այլն:

Ֆոկուս խմբերի մասնակիցները ընդհանուր առմամբ դրական են գնահատում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը, սակայն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները կենտրոնացել են նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության բացասական կողմի վրա և նշել, որ որոշ կազմակերպությունների նկատմամբ վստահությունը ցածր է, քանի որ նրանք ադրբեջանական համայնքը, ելնելով իր կրոնական ինքնությունից, ընկալում է որպես «հետամնաց»: Յարցվածներից ոմանք նաև նշել են, որ բնակչության որոշակի հատվածում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները համարվում են իշխանությանը ընդդիմադիր, և այդ պատճառով խուսափում են նրանց հետ համագործակցությունից:

Ֆոկուս խմբերի մասնակիցների կարծիքով՝ հասարակական կազմակերպությունների գործունեությունն առաջին հերթին պետք է ուղղված լինի տեղի բնակչության խնդիրների լուծմանը: Կարևոր է, որ հասարակական կազմակերպությունները ուժեղացնեն իրենց աշխատանքը քաղաքապետարանների և սակրեթուլոների հետ և նրանց առաջարկեն նոր գաղափարներ և լուծումներ առկա խնդիրները հաղթահարելու համար:

Գլուխ 1. Բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը

Խոցելի վիճակում գտնվող մարդկանց բացահայտում

Խորը հարցազրույցների շրջանակներում Քվեմո Քարթլիի տարածաշրջանի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները սահմանել են խոցելի մարդկանց տեսակները/կատեգորիաները: Հարցվողները նշեցին, որ խոցելի վիճակում գտնվող անձանց բացահայտելու համար հիմնականում կիրառում են այսպես կոչված «սոցիալական վարկանիշային միավոր», որը տրվում է ընտանիքին՝ խոցելիության աստիճանը չափելու համար: Պարզվել է, որ օգնության փաթեթը ներառում է երկու կատեգորիա՝ սոցիալական աջակցություն և առողջապահական ծրագրերի ծառայություններ: Սոցիալական աջակցություն ստացող խոցելի անձինք ներառում են՝ տարեցներ և միայնակ մարդիկ, սոցիալապես անապահով անձինք/ընտանիքներ, որք և առանց խնամակալության երեխաներ, բազմազավակ ընտանիքներ, պատերազմի վետերաններ, տեղահանվածներ. Իսկ առողջապահական ծրագրի ծառայությունները վերաբերում են ծանր և քրոնիկ հիվանդություններ ունեցողներին, դիալիզի կարիք ունեցողներին, սուր և նշանակալի հաշմանդամություն ունեցողներին, կուլյերին, ուռուցքաբանական հիվանդություններ ունեցողներին:

Սամցխե-Ջավախքեթիում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչները հայտնաբերել են տարածաշրջանի հետևյալ խոցելի անձանց՝ միայնակ տարեցներ, հաշմանդամներ, էթնիկ փոքրամասնություններ, Էկոմիգրանտներ՝ բնական աղետներից տուժած ընտանիքներ/անհատներ:

Ախալցխիսեյի մունիցիպալիտետի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները նշել են, որ սոցիալական խոցելիության վարկանիշային միավորի հիման վրա տրամադրվում է օգնություն առողջապահական ծրագրով, և սոցիալական աջակցության վրա ազդում է թե՛ վարկանիշային միավորը, թե՛ անձի կարգավիճակը (օրինակ՝ հաշմանդամի կարգավիճակը):

«Աջակցությունը առողջապահության ոլորտում մեծապես կենտրոնացված է միավորների վրա, սակայն այլ ոլորտներում օգնությունը որոշվում է ոչ միայն միավորներով, այլ նաև այլ պատճառներով: Եթե հաշմանդամություն ունեցող անձը կարգավիճակ ունի, մենք նրան ամենամսյա կամ եռամսյակային ֆինանսական օգնություն ենք տրամադրում, այս դեպքում միավորը կապ չունի» (ՏԻՄ ներկայացուցիչ Ախալցխիսեյից):

Ախալցխիսեյի մունիցիպալիտետի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները խոցելի մարդիկ են համարում նրանց, ովքեր պետության կողմից կանոնավոր աջակցության կարիք ունեն: Հարցվածների կարծիքով՝ քաղաքապետարաններում բոլոր ծրագրերում սահմանված են չափանիշներ, որոնց հիման վրա այս կամ այն անձը կհամարվի խոցելի անձ: Օրինակ՝ ուռուցքաբանական հիվանդների դեպքում քաղաքապետարանում հասանելի ծառայություններից օգտվելու համար սոցիալական խոցելիության վարկանիշային միավոր չի պահանջվում:

Քվեմո Քարթլիի Գարդաբանիի մունիցիպալիտետի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչները ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին համարում են խոցելի մարդիկ, քանի որ նրանց զգալի մասը չի

տիրապետում կամ պատշաճ կերպով չգիտի վրացերեն, ինչը նրանց համար էական մարտահրավեր է:

«Էթնիկ փոքրամասնությունները կանգնած են մեծ մարտահրավերի առաջ. պետական լեզուն չիմանալու փաստը բազմաթիվ խնդիրներ է ստեղծում» (Երիտասարդական կենտրոն – Գարդաբանիի մունիցիպալիտետ):

Մառնեուլիի մունիցիպալիտետում աշխատող սոցիալական աշխատողները նույն դիրքորոշումն ունեն՝ նրանք ազգային փոքրամասնություններին համարում են խոցելի մարդիկ, հատկապես անչափահաս աղջիկներին, քանի որ նրանց պարտավորեցնում են ամուսնանալ վաղ տարիքում: Նման պարտավորվածությունը, որը հաճախ ենթադրում է հարկադիր ամուսնություն, աղջիկներին թողնում է առանց կրթություն ստանալու հնարավորության և նրանց զրկում անկախ ապրելու հնարավորությունից:

«Ես, անշուշտ, խոցելի խմբերի մեջ կներառեի Էթնիկ փոքրամասնություններին, մասնավորապես երիտասարդ աղջիկներին, ովքեր ստիպված են ամուսնանալ վաղ տարիքում: Իսկ հետո կորցնում են սեփական կյանք ունենալու, կրթություն ստանալու բոլոր հնարավորությունները» (սոցիալական աշխատող):

Եկամուտներ

Բոլոր մունիցիպալիտետներում անցկացված ֆոկլուս խմբերում հիմնականում առանձնացվել են եկամտի հետևյալ աղբյուրները.

- **Պետական հատվածում աշխատողների վարձատրությունը**, ինչպիսիք են՝ կրթական և բժշկական հաստատություններում, մունիցիպալ ծառայություններում, իրավապահ մարմիններում և այլ աշխատատեղերից ստացած աշխատանքային փոխհատուցում,
- **Պետությունից ստացվող սոցիալական նպաստներ**, ինչպիսիք են՝ ծերության կենսաթոշակ, սոցիալական օգնություն, հաշմանդամության կենսաթոշակ, պատերազմի վետերանների կենսաթոշակ, համայնքային միանվագ դրամական նպաստ և այլն:

«Իմ հիմնական եկամուտը սոցիալական օգնությունն է, ունեմ 3 անչափահաս երեխա և դրա համար էլ ստանում եմք, ուրիշ բան չունեմ» (34-ամյա կին, սոցիալապես անապահով, Էթնիկ վրացի, Ախալցխե)

Չարցվածների թվում եղել են **մասնավոր ընկերություններում աշխատողներ**: Բուլնիսի, Թեթրիծղարոյի և Դմանիսի մունիցիպալիտետների բնակչության հետ անցկացված ֆոկլուս խմբերի մասնակիցները նշել են, որ աշխատունակ բնակչության մի մասն աշխատում է RMG ընկերությունում, որի գործունեությունը նշված մունիցիպալիտետներում հանքարդյունաբերությունն է: Ուստի ընտանիքների մի մասի համար այս ընկերությունում աշխատանքի ընդունվելու արդյունքում ստացված աշխատավարձը հիմնական եկամուտն է:

Չարցվածների մի փոքր մասի համար եկամտի աղբյուրը արտասահմանից ընտանիքի անդամի **գումարային փոխանցումներն են**: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները հատուկ ուշադրություն են դարձրել արտագաղթողների կողմից ուղարկվող դրամական օգնությանը:

Գյուղական բնակավայրերում ապրող բնակչությունը **եկամուտ է ստանում գյուղմթերքի վաճառքից**: Դմանիսացիները նշել են, որ իրենց մունիցիպալիտետում հատկապես զարգացած է անասնապահությունը: Գարդաբանիի և Մառնեուկիի մունիցիպալիտետների մոտ լինելը մեծ քաղաքներին՝ Թբիլիսիին և Ռուսթավիին, զգալիորեն նպաստում է գյուղմթերքի իրացմանը: Նիևոմինդայի բնակչությունը ապրում է հիմնականում կարտոֆիլի աճեցմամբ և բերքի իրացումից ստացված եկամուտով: Հաշվի առնելով, որ գյուղատնտեսությունից ստացվող եկամուտը սեզոնային է, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը փոփոխական է:

Ֆոկուս խմբերին մասնակցող խոցելի մարդիկ հիմնականում կախված են պետության կողմից սահմանված սոցիալական աջակցությունից: Ֆոկուս խմբերին մասնակցող սոցիալապես անապահովները նշեցին, որ հնարավորության դեպքում ոչ ֆորմալ են աշխատում մեկանգամյա գործունեությամբ, քանի որ պաշտոնական աշխատանքի անցնելու դեպքում կկորցնեն սոցիալապես անապահովի կարգավիճակը և կմնան առանց փոքր, բայց կայուն եկամուտի: Սոցիալապես անապահովի կարգավիճակ ունեցող անձինք հիմնականում զբաղված են հետևյալ հաստիքներով՝ հավաքարար, շինարար, բեռնող, վարորդ և այլն: Նրանց գնահատմամբ՝ իրենք չեն պատկերացնում այնպիսի աշխատանք գտնել, որ կիրառարվեն սոցիալապես անապահովի կարգավիճակից: Որպես կանոն, խոցելի իրավիճակներում գտնվող մարդիկ չունեն անհրաժեշտ գիտելիքներ, որակավորում և կապեր՝ համապատասխան վարձատրությամբ աշխատանք գտնելու համար:

Հատկապես ծանր սոցիալ-տնտեսական վիճակում են Ցխինվալիի շրջանից ներքին տեղահանվածները, ովքեր 2008 թվականի ռուս-վրացական պատերազմից հետո կոմպակտ կերպով բնակություն են հաստատել Թեթրիժլարոյի մունիցիպալիտետի Կոդա գյուղում: Նրանց գնահատմամբ՝ նրանցից շատերը Ցխինվալի շրջանում բնակվելով մասնագիտություն ու աշխատանք են ունեցել, սակայն Կոդա գյուղում հաստատվելուց հետո չեն կարողացել նմանատիպ աշխատանք գտնել:

«Նրանց մեծ մասը աշխատանքի է ունեցել Ցխինվալիում: Օրինակ՝ աշխատողներ կային դպրոցներում, մարզադպրոցներում և այլն: Երբ մենք եկանք այնտեղից, այստեղ դպրոցներ կային, բայց լեյ-լեցուև էին, այնտեղ աշխատողներից շատերն անգործ մնացին» (63-ամյա կին, աշխատող, Թեթրիժլարոյի քամունիցիպալիտետ)

Պետք է հաշվի առնել նաև, որ ներքին տեղահանվածները չունեն գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ գյուղատնտեսական արտադրանք աճեցնելու համար, նույնիսկ անձնական սպառման համար:

Հարցվողների ընտանիքների եկամուտները (համապատասխանաբար՝ տնտեսական վիճակը) գնահատվել է նաև քանակական հետազոտության շրջանակներում:

Հարցվողների տնտեսական վիճակը գնահատվել է երկու մոտեցմամբ՝ բովանդակային (բանավոր) և քանակական:

Բովանդակության գնահատման մեջ առանձնացվել են երեք գերիշխող կատեգորիաներ, որոնց ցուցանիշը միջինում հավասար է 28%-ի՝

- Փողը բավարար է ուտելիքի համար - 28.6%;
- Մենք բավական գումար ունենք սննդի համար, բայց պետք է գումար խնայենք կամ պարտքով վերցնենք հագուստ և կոշիկ գնելու համար - 29.8%;

- Մենք բավական գումար ունենք սննդի, ամենօրյա հագուստի և կոշիկի համար, բայց լավ հագուստ, բջջային հեռախոս, փոշեկուլ և այլ կենցաղային տեխնիկա գնելու համար պետք է գումար խնայել կամ պարտք վերցնել - 27.1% (տես սղյուսակ #2).

Աղյուսակ #2

Հիմա ձեզ կներկայացնեմ որոշ դրույթներ: Խնդրում եմ ասել, ո՞ր արտահայտությունն է լավագույնս բնութագրում ձեր ընտանիքին: (N=1200)	
Փողը բավական է ուտելիքի համար:	28.6 %
Մենք բավական գումար ունենք սննդի համար, բայց պետք է գումար խնայենք կամ պարտքով վերցնենք հագուստ և կոշիկ գնելու համար:	29.8 %
Մենք բավական գումար ունենք սննդի, ամենօրյա հագուստի և կոշիկի համար, բայց լավ հագուստ, բջջային հեռախոս, փոշեկուլ և այլ կենցաղային տեխնիկա գնելու համար պետք է գումար խնայել կամ պարտք վերցնել:	27.1 %
Մենք բավական գումար ունենք սննդի, ամենօրյա հագուստի և կոշիկի համար, բայց մեքենա կամ բնակարան գնելու համար պետք է գումար խնայել կամ պարտք վերցնել:	11.3 %
Մենք ցանկացած պահի կարող ենք գնել այն, ինչ ցանկանում ենք:	1.1%
Հրաժարվում եմ պատասխանել / Դժվարանում եմ պատասխանել	2.2%

Եթե Սամցխե-Ջավախքեթիում հարցվածների ավելի քան մեկ երրորդը (37,7%) նշում է, որ իրենց ընտանիքը ունի բավարար գումար սննդի համար, ապա Քվեմո Քարթլիում միայն 19,5%-ն է համանման կարծիքի: Քվեմո Քարթլիում հարցվածների ավելի քան մեկ երրորդը նշել է, որ իրենք բավականաչափ գումար ունեն սննդի, ամենօրյա հագուստի և կոշիկի համար, սակայն պետք է գումար խնայեն կամ պարտք վերցնեն լավ հագուստ, բջջային հեռախոսներ, փոշեկուլներ և այլ կենցաղային տեխնիկա գնելու համար: Սամցխե-Ջավախքեթիում հարցվածների 31,2%-ը նշում է, որ ընտանիքը բավարար գումար ունի սննդի համար, սակայն ստիպված է գումար խնայել կամ պարտք վերցնել՝ հագուստ և կոշիկ գնելու համար: Նմանատիպ դիրքորոշում է կիսում Քվեմո Քարթլիում հարցվածների 28,4%-ը (տես սղյուսակ #3).

Աղյուսակ #3

Հիմա ձեզ կներկայացնեմ որոշ դրույթներ: Խնդրում եմ ասել, ո՞ր արտահայտությունն է լավագույնս բնութագրում ձեր ընտանիքին: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախքեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Փողը բավական է ուտելիքի համար:	37.7%	19.5%
Մենք բավական գումար ունենք սննդի համար, բայց պետք է գումար խնայենք կամ պարտքով վերցնենք հագուստ և կոշիկ գնելու համար:	31.2%	28.4%
Մենք բավական գումար ունենք սննդի, ամենօրյա հագուստի և կոշիկի համար, բայց լավ հագուստ, բջջային հեռախոս, փոշեկուլ և այլ կենցաղային տեխնիկա գնելու համար պետք է գումար խնայել կամ պարտք վերցնել:	19.3%	34.9%
Մենք բավական գումար ունենք սննդի, ամենօրյա հագուստի և կոշիկի համար, բայց մեքենա կամ բնակարան գնելու համար պետք է գումար խնայել կամ պարտք վերցնել:	10.2%	12.3%

Հիմա ձեզ կներկայացնեմ որոշ դրույթներ: Խնդրում եմ ասել, ո՞ր արտահայտությունն է լավագույնս բնութագրում ձեր ընտանիքին: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Չավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Մենք ցանկացած պահի կարող ենք գնել այն, ինչ ցանկանում ենք:	0.8%	1.4%
Հրաժարվում եմ պատասխանել / Դժվարանում եմ պատասխանել	0.8%	3.5%

Հարցվածների 29,9%-ը դժվարացել է սահմանել ընտանիքի **ամսական եկամուտը** կամ հրաժարվել է կոնկրետ գումար նշել: Ընտանիքների ամսական եկամուտների վերաբերյալ հարցվողների կողմից տրամադրված կոնկրետ տեղեկության հիման վրա որոշվել են տնային տնտեսությունների եկամուտների միջին (Mean) և միմեդիան (Median) **ցուցանիշները. ընտանիքների միջին ամսական եկամուտը սահմանվել է 983 լարի** (Սամցխե-Չավախեթի՝ 1070 լարի, Քվեմո Քարթլի՝ 893 լարի), իսկ մեդիան արժեքը՝ **700 լարի** (Սամցխե-Չավախեթի՝ 805 լարի, Քվեմո Քարթլի՝ 600 լարի):

Քանակական հետազոտությունների տվյալները ցույց են տալիս, որ թիրախային տարածաշրջանների բնակչությունը գտնվում է տնտեսապես խոցելի վիճակում՝ թե՛ ըստ սուբյեկտիվ ընկալման, թե՛ օբյեկտիվ ցուցանիշների (ընտանիքների եկամուտների): Սամցխե-Չավախեթիում հարցվածների մեծամասնությունը (մինչև 70%) և Քվեմո Քարթլիում յուրաքանչյուր երկրորդ հարցվողը համարում է, որ իրենց ընտանիքի եկամուտը բավարար է միայն հիմնական կարիքները (սնունդ, հագուստ) հոգալու համար: Ինչ վերաբերում է կոնկրետ եկամուտներին, ապա այստեղ պետք է հաշվի առնել երկու գործոն՝ ընտանիքի անդամների միջին թիվը և կենսապահովման նվազագույնը: Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ Սամցխե-Չավախեթիի և Քվեմո Քարթլիի տարածա շրջաններում ընտանիքների միջին թիվը կազմում է մոտ 4 անդամ,⁶ իսկ այս թվով ընտանիքների կենսապահովման նվազագույնը ամսական մոտ 340 լարի է:⁷ Եթե այս ֆոնի վրա գնահատենք ընտանիքի միջին եկամուտները (MEAN), ապա կարող ենք եզրակացնել, որ թիրախային տարածաշրջանների բնակչության մեծամասնության եկամուտները գերազանցում են կենսապահովման նվազագույնը, թեև դրանք չեն հասնում տնտեսական վիճակի միջին մակարդակին:⁸

Ծախսեր

Ֆոկուս խմբերին մասնակցող հարցվողների ծախսերը նման են միմյանց: Ընտանիքների առկա եկամուտը հիմնականում ծախսվում է հիմնական կարիքները հոգալու համար, ինչպիսիք են՝

- Սննդամթերք,
- Կոմունալ վճարումներ,
- Դեղորայք,

⁶ Ընտանիքների միջին չափը ըստ տարածաշրջանների՝

http://census.ge/ge/results/census1/households?fbclid=IwAR3_2TR47NqPO9PX2hp4QncMzhACuPCK_4wFw3p6YPvotF_gXDsR-0pZGFx8

⁷ Ընտանիքների կենսապահովման նվազագույնը ըստ ընտանիքի չափի՝

<https://www.geostat.ge/ka/modules/categories/49/saarsebo-minimumi>

⁸ Միջին ամսական աշխատավարձի մասին պաշտոնական տեղեկատվությունը, որը, ըստ 2022

թվականի տվյալների, կազմում է ամսական մոտավորապես 1450 լարի, մեզ պատկերացում է տալիս տնտեսական պայմանների միջին մակարդակի մասին: Տես՝

<https://www.geostat.ge/ka/modules/categories/39/khelfasebi>

- Առաջնային կարիքների իրեր (հագուստ, սարքավորումներ և այլն),
- Բանկային վարկ/հիփոթեքային վճար,
- Բարձրագույն կրթության ուսման վարձեր:

«Այս ամիս էլեքտրաէներգիայի վճարը 110 լարի է եկել: Վառելափայտ չունեի, այդ պատճառով էլեկտրական ջեռոց էի միացրել: Հիմա մտածում եմ թե ինչպես պիտի մուծեմ այդ 110 լարին» (32 տարեկան կին, միայնակ մայր, Էթնիկ հայ, Ծալկա):

«Ավագ աղջիկս սովորում է Թբիլիսիի պետական համալսարանում՝ վճարովի ֆակուլտետում: Սա մեզ համար մեծ ծախս է: Երկրորդ դուստրն այս տարի ավարտում է դպրոցը, և մենք պատրաստվում ենք, որ նա էլ ընդունվի, սա էլ ավելի կբարձրացնի մեր ծախսերը» (52-ամյա կին, տնային տնտեսուհի, Էթնիկ հայ, Լիևոմոնիդա):

«Ես, օրինակ, կախված եմ աշխատավարձից, որն այլևս չի բավականացնում: Երբ մտնում ես շուկա, իրականում գները բարձրացել են ոչ թե 100%-ով, այլ 150%-ով» (44-ամյա կին, աշխատող, 4 երեխայի մայր, Էթնիկ վրացի, Դմանիսի):

«Ես շաքարային դիաբետ ունեմ և փող եմ ծախսում հիմնականում դեղերի վրա, իսկ եկամուտ չունեմ, քանի որ թոշակառու եմ և առօրյան դժվար է, սնունդը շատ թանկ է» (63-ամյա տղամարդ, պատերազմի վետերան, Էթնիկ ադրբեջանցի, Մառնեուլի):

Գյուղական բնակավայրերում ապրող բնակչության համար, ովքեր աճեցնում են գյուղատնտեսական ապրանքներ, նրանք լրացուցիչ ծախսեր ունեն հողը մշակելու համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման համար, ինչը Էական մարտահրավեր է ֆերմերների համար: Հարցվածները հատկապես նշում են վառելիքի թանկացումը, ինչի պատճառով գարնանային աշխատանքները չեն կարողանում նորմալ կատարել:

«Խոտը շատ թանկ է, վառելանյութն էլ շատ է թանկացել, հիմա տրակտոր է պետք, որ ցանքի համար աշխատենք: Սկսվել է հողը վարելու շրջանը: Սա մեր ամենամեծ ծախսն է» (62 տարեկան տղամարդ, ինքնազբաղված, Էթնիկ հայ, Ծալկա):

Առկա մարտահրավերներ

Ֆոկուս խմբի մասնակիցները, խոսելով սոցիալ-տնտեսական վիճակի մասին, նշեցին, որ բնակչության հիմնական խնդիրներից մեկը գործազրկությունն է: Գործազրկության խնդիրը հատկապես սուր է երիտասարդների շրջանում, քանի որ մուկիցիպալիտետներում անհեռանկարային միջավայրն անհնարին է դարձնում նրանց զարգացումն ու ինքնաիրացումը: Եթևիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները նշել են, որ աշխատունակ բնակչությունը, հատկապես երիտասարդները, աշխատանքի են մեկնում արտերկիր: Եթևիկ հայերը հիմնականում մեկնում են Ռուսաստանի Դաշնություն, որտեղ տնտեսապես ուժեղ հայկական սփյուռքն օգնում է նրանց աշխատանք գտնել:

Եթևիկ վրացի երիտասարդները նախընտրում են գաղթել Թբիլիսի: Այն երիտասարդները, ովքեր բարձրագույն կրթություն են ստանում, փորձում են հաստատվել Թբիլիսիում: Զարցվածների մի մասը, որոնք զբաղված են, դժգոհում են ցածր վարձատրությունից, քանի որ նվազագույն կարիքները հնարավոր չէ բավարարել առկա աշխատանքի վարձատրությամբ:

«Քույրս, օրինակ, հոգեբանություն է սովորել, դպրոցում նրան աշխատանք են առաջարկել, իսկ աշխատավարձն այնքան ցածր է եղել, որ ծիծաղել է: Այս աշխատավարձով ես այստեղ չեմ վերադառնա: Նա նախընտրում է աշխատել այլ ոլորտում, ոչ թե իր մասնագիտությամբ» (35-ամյա կին, աշխատող, Եթևիկ վրացի, Ախալցխիսե):

Ֆոկուս խմբերին մասնակցող Եթևիկ փոքրամասնությունների մի մասի գնահատմամբ՝ վրացիների համեմատ նրանք ավելի քիչ զբաղվածության հնարավորություններ ունեն: Դրա պատճառը նրանց սոցիալական ինտեգրվածության ցածր աստիճանն է, որն էլ իր հերթին պայմանավորված է վրացերենի վատ իմացությամբ կամ չիմացությամբ: Մեկ այլ կարևոր խնդիր, որը վերջին շրջանում հատկապես անհանգստացնում է ֆոկուս խմբի մասնակիցներին, առաջնային սպառման ապրանքների գների բարձրացումն է: Նրանք իրենց ընթացիկ եկամուտներով այլևս չեն կարողանում իրենց ընտանիքներին ապահովել անհրաժեշտ սննդով և դեղորայքով:

«Ամեն ինչ թանկացել է, մեր եկամուտը արդեն գրեթե ոչ մի բանի չի բավականացնում, ինչ աշխատավարձ էր 5 տարի առաջ, հիմա էլ նույնն է, գներն էլ եռապատկվել են» (25 տարեկան կին, ուսանող, Եթևիկ վրացի, Ախալցխիսե):

Եվս մեկ կարևոր խնդիր է ներկայացնում ավելացած կոմունալ վճարները, որը բնակչության համար հավելյալ ֆինանսական բեռ է:

Զվեմո Զարթլիի տեղական իշխանության ներկայացուցիչների կարծիքով, բնիկ բնակչությունը (և ոչ միայն խոցելի վիճակում գտնվող անձինք) տառապում է երկու հիմնական խնդրից՝ գործազրկությունից և առողջապահական ծառայությունների ֆինանսավորման պակասից:

Խորացված հարցազրույցների շրջանակում, ըստ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների որոշ ներկայացուցիչների, խոցելի վիճակում գտնվող մարդկանց ուղղված սոցիալական ծառայությունները ոչ բավարար արդյունավետ են, ինչը Էական մարտահրավեր է: Բացի այդ, խնդրահարույց է մնում սոցիալական աշխատողների անբավարար թիվը:

«Չայ բնակչությունը տնային խնամքի կարիք ունի, ֆիզիկական տեղաշարժի հետ կապված խնդիրներ ունի, այս ծրագրերը թույլ են, մեզ պետք են պրոֆեսիոնալ

սոցիալական աշխատողներ, ովքեր ճիշտ կփոխանցեն տեղեկությունը և կուժեղացնեն կարիքավոր մարդկանց» («Տոլերանտ» ասոցիացիա - Սամցխե-Չավախետթի):

Բոլնիսի մոնիցիպալիտետի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները առողջապահական ծառայությունների ուղղությամբ խորացված հարցազրույցների շրջանակում նշել են, որ այս ոլորտն ունի ամենամեծ բյուջեն: Այդուհանդերձ, բյուջեի այս ծավալը բավարար չէ բնակչության կարիքները հոգալու համար, քանի որ հնարավոր չէ ամբողջությամբ ֆինանսավորել տարբեր բժշկական կարիքներ ունեցող մարդկանց վիրահատությունները և հետագայում նրանց դեղորայքով ապահովել:

«Իմ աշխատանքից ելնելով բնակչության համար առողջապահությունը առաջնահերթություն է: Առողջապահության առումով մենք ունենք ամենամեծ դիմողները և բյուջեից ամենամեծ գումարն այս ուղղությամբ է ծախսվում, թեև դա բավարար չէ» (Բոլնիսի քաղաքապետարանի ներկայացուցիչ):

Բոլնիսի մոնիցիպալիտետի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների կարծիքով, առողջապահական ծառայությունների բարելավումն անհրաժեշտ է մի քանի ուղղություններով՝ թանկարժեք վիրահատությունների ֆինանսավորման մասնաբաժնի ավելացում, թթվածնային սարքավորումների ավելացում, մոնիցիպալ ռեզոնանսային հետազոտությունների ֆինանսավորում քաղաքապետարանի բյուջեով:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչները նշում են, որ վրացերենի չիմացությունը կամ ոչ համարժեք իմացությունը տեղի բնակչության համար արդիական խնդիր է (բացառությամբ խոցելի վիճակում գտնվող անձանց): Հարցվածների խոսքով՝ տեղաբնակները ցանկություն ունեն սովորել վրացերենը, սակայն չեն կարողանում դա անել:

«Տեղի բնակիչները ցանկանում են վրացերեն սովորել: Նրանց դուր է գալիս այստեղ ապրելը: Նրանք ունեն բոլոր անհրաժեշտ պայմանները լավ ապրելու համար: Նրանք վրաց լեզուն պետք է, որ հաստատվեն ու ապրեն» (Զվեմո Քարթլիի ազգամիջյան միասնություն – Բոլնիսի):

Վրացերենի չիմացությունը որպես խնդիր են նշել նաև Մառնեուլիում աշխատող սոցիալական աշխատողները: Հարցվածների կարծիքով, Էթնիկ փոքրամասնությունները թույլ են ինտեգրված վրացական հասարակությունում: Մառնեուլիում բնակվող Էթնիկ փոքրամասնությունների մի զգալի մասը տեղեկատվություն ստանալու համար օգտագործում է թուրքական և ադրբեջանական աղբյուրները, ինչն էլ ավելի է խորացնում նրանց օտարացումը Վրաստանում:

«Նրանք չեն կարողանում ինտեգրվել վրացական հասարակությունում՝ լեզվական պատնեշի պատճառով: Ես ունեմ հարևաններ, որոնք Էթնիկ ադրբեջանցի են, և նրանք ֆիզիկապես ապրում են Վրաստանում, բայց նրանք ավելի շատ տեղեկություններ ունեն ադրբեջանական և թուրքական հասարակության կյանքի մասին, քան վրացիները (սոցիալական աշխատող):

Զվեմո Քարթլիի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչները զբաղվածության խնդիրը կարևորեցին որպես տեղի երիտասարդության մարտահրավեր. *երիտասարդները չեն կարողանում իրացվել: Նրանք ավարտում են*

բարձրագույն կրթությունը, բայց աշխատանք չեն գտնում» (Բվեմո Բարթիի էթնիկ միասնության կազմակերպություն):

Բուլնիսիի մուլտիցիպալիտետում աշխատող սոցիալական աշխատողները ևս որպես սուր խնդիր կարևորեցին զբաղվածության հարցը: Գործազրկությունը լուրջ խնդիր է ստեղծում տեղի բնակչության մի մասի համար՝ ապահովելու իրենց հիմնական կարիքները (օրինակ՝ սնունդ):

«Զբաղվածությունը մեծ խնդիր է, մարդիկ եկամուտ չունեն: Բնակչության մի մասն ապրում է միայն հացով ու ապուրով: Մարդիկ սնունդ չունեն, մեր շուրջը սովամահ են լինում» (սոցիալական աշխատող):

Բուլնիսիի քաղաքապետարանի ներկայացուցչի խոսքով՝ բնակչությունը նախընտրում է ստանալ դրամական օգնություն, քան ուղղակիորեն այս կամ այն ծառայությունը: Ըստ հարցվողի՝ քաղաքապետարանում ստացված դիմումների կեսից ավելին դրամական օգնության ուղղությամբ է:

«Ինչ վերաբերում է բնակչությանը, ապա հիմնական պահանջը փողն է: Ծառայությանը դիմելու առումով շատ պասիվ են, դա իրենց դուր չի գալիս: Նրանք ամեն ինչ նյութական են ուզում: Տարեկան ստացվում է ավելի քան 15000 դիմում, որոնցից 7-8 հազարը նյութական օգնության խնդրանքներ են» (Բուլնիսիի քաղաքապետարանի ներկայացուցիչ):

Քանակական հարցման շրջանակում գնահատվել է՝

- Արդյո՞ք թիրախային տարածաշրջաններում հարցված տնային տնտեսությունները ունեն խոցելի իրավիճակը նկարագրող որևէ կարգավիճակ,
- Հարցվողների զբաղվածության իրավիճակը:


Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների 11,9%-ի ընտանիքը սոցիալապես անապահովի կարգավիճակ ունի (Սամցխե-Ջավախեթի՝ 6,1%, Բվեմո Բարթի՝ 17,7%), իսկ 1,8%-ը՝ բռնի տեղահանվածի (Սամցխե-Ջավախեթի՝ 0,5%, Բվեմո Բարթի՝ 3,1%): Ինչպես երևում է, շատ դեպքերում ընտանիքին կարգավիճակ չի տրվել (85,5%): Հազվադեպ է նաև հաշմանդամի կարգավիճակ ունենալը (6,5%); Նման կարգավիճակ չունի 93,5%-ը (Սամցխե-Ջավախեթի՝ 92,8%, Բվեմո Բարթի՝ 94,2%):

Հետազոտության մասնակիցների հիմնական գործունեությունը որոշելիս առանձնացվել են հետևյալ գերիշխող կատեգորիաները՝

- Վարձու աշխատող պետական հատվածում - 16.8%
- Վարձու աշխատող մասնավոր հատվածում - 9%
- Ինքնազբաղված (ձեռնարկատեր, ֆերմեր, մասնագիտական գործունեությամբ զբաղվող անձ) – 11.5%
- Թոշակառու - 17.9%
- Տնային տնտեսուհի - 18.6%
- Գործազուրկ - 17.2% (տես գծապատկեր #1).

Գծապատկեր #1

Հարցվողի աշխատանքային կարգավիճակը (հիմնական գործունեությունը) (N=1200)



Քվեմո Բարթիում հարցվածների զբաղվածության կարգավիճակով առանձնանում են տնային տնտեսուհիները (22.7%), ներկայումս գործազուրկները (18.8%), թոշակառուները (17.5%) և պետական հատվածում աշխատողները (15.1%): Սամցխե-Ջավախեթիում հարցվածների թվում գրեթե հավասարապես ներկայացված են թոշակառուները (18,5%) և պետական հատվածում աշխատող հարցվածները (18,5%): Այս տարածաշրջանում հարցվածների 15.6%-ը գործազուրկ է եղել հետազոտության ընթացքում (տես Աղյուսակ #1):

Աղյուսակ #1

Հարցվողի աշխատանքային կարգավիճակը (հիմնական գործունեությունը) (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Բարթի (N=600)
Վարձու աշխատող պետական հատվածում	18.5%	15.1%
Վարձու աշխատող մասնավոր հատվածում	12.7%	5.4%
Ինքնազբաղված (աշխատանք տրամադրող)	3.4%	1.9%
Ինքնազբաղված (ձեռնարկատեր, ֆերմեր, մասնագիտական գործունեությամբ զբաղվող անձ)	10.8%	12.2%
Թոշակառու	18.4%	17.5%
Դեկրետային արձակուրդում գտնվող	0.1%	-
Տնային տնտեսուհի	14.6%	22.7%
Ուսանող	3.9%	1.6%
Գործազուրկ	15.6%	18.8%
Երբեք չի աշխատել	0.6%	1.9%
Այլ	1.4%	-
Հրաժարվում է պատասխանել	-	3%

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս հետազոտության տվյալները, Սամցխե-Ջավախեթիի բնակչության զբաղվածների տեսակարար կշիռը (45,4%) զգալիորեն գերազանցում է Քվեմո Քարթլիի տարածաշրջանում զբաղվածների (ներառյալ ինքնազբաղվածների) տեսակարար կշիռն (34,6%): Ըստ այդմ, գործազուրկների տեսակարար կշիռն ավելի բարձր է Քվեմո Քարթլիում (20,7%), քան Սամցխե-Ջավախեթիում (16,2%): Նշենք, որ գործազրկության այս թվերը մոտ են Ազգային վիճակագրական ծառայության 2021 թվականի տվյալներին (Քվեմո Քարթլի՝ 25,2%, Սամցխե-Ջավախեթի՝ 14,9%):⁹

Covid-19-ի ազդեցությունը բնակչության վրա և տեղական իշխանությունների օգնությունը

Ֆոկուս խմբերի մասնակիցների թվում եղել են հարցվածներ, որոնք ունեցել են միջին կամ ծանր Covid-19 վարակ: Նրանց թվում եղել են նրանք, ում հարազատները և/կամ սիրելիները մահացել են Covid-19-ով: Համաճարակը բնակչության տնտեսական վիճակի զգալի վատթարացում է առաջացրել, մասնավորապես՝ աշխատատեղերի կորուստ: Համաճարակը հատկապես բացասաբար է ազդել բնակչության այն հատվածի վրա, որը զբաղված է ծառայությունների ոլորտում: Դժվար պայմանների առաջ են կանգնել ինքնազբաղվածները, որոնք ստիպված են եղել դադարեցնել իրենց գործունեությունը, ինչը հանգեցրել է նրանց աղքատացմանը: Ինչպես նշեցին ֆոկուս խմբի մասնակիցները, Covid-19 համաճարակը բացասաբար է ազդել բոլոր ոլորտների վրա, այդ թվում՝ գյուղատնտեսության (ստեղծվել են ապրանքների իրացման հետ կապված խնդիրներ) և կրթության վրա: Հեռավար ուսուցումը հասանելի չէր բնակչության զգալի մասի համար, քանի որ նրանք չունեին համապատասխան տեխնիկական սարքավորումներ (համակարգիչ, Android հեռախոս և այլն), ինտերնետ (վատ կապ, ինտերնետի բարձր արժեք) և տարածք, որտեղից ուսանողները և աշակերտները կարող էին առանց ընդհատումների ներկա գտնվել դասախոսությանը/դասին (այս խնդիրն ի հայտ է եկել հատկապես բազմազավակ ընտանիքներում): Հաշվի առնելով այս գործոնները՝ Covid-19-ով ստեղծված իրավիճակը բացասաբար է ազդել ընդհանուր կրթության որակի վրա:

Ֆոկուս խմբում խոցելի վիճակում գտնվող հարցվողները նշել են, որ համաճարակի ընթացքում իրենք ստացել են միանվագ օգնություն տեղական կառավարությունից, ինչպիսիք են՝ գումարի տեսքով սոցիալական աջակցությունը և տնտեսական աջակցությունը, սննդամթերքի տրամադրումը առաքմամբ: Ֆոկուս խմբերի մասնակիցները անվանել են «Կարմիր խաչ» միջազգային կազմակերպությունը, որը խոցելի վիճակում գտնվող մարդկանց տրամադրում է ապրանքներ և հիգիենայի միջոցներ: Հարկ է նշել, որ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները նույնպես ակտիվորեն ներգրավված են եղել օգնության գործընթացում, որը հիմնականում ներառում էր աջակցություն նյութատեխնիկական ապահովման ոլորտում (պլանավորում և առաքում): Խոցելի վիճակում գտնվող անձինք օգնություն են ստացել նաև մասնավոր հատվածից, հատկապես տարեցները, ինչը դրսևորվել է սննդի տրամադրմամբ: Հետազոտության մասնակից խոցելի վիճակում գտնվող մարդիկ ընդհանուր առմամբ գոհ էին Covid-19 համաճարակի ժամանակ տեղական իշխանությունների կողմից ցուցաբերվող խնամքից, չնայած որոշ հարցվողներ նշել են, որ համաճարակի

⁹ Գործազրկության ցուցանիշ՝ <https://www.geostat.ge/ka/modules/categories/683/dasakmeba-umushevroba>

ընթացքում ավելի շատ կարիքներ են ունեցել, քան կառավարության կողմից տրամադրված օգնությունը:


Ինչ վերաբերում է համաճարակի ժամանակ կենտրոնական կառավարության աջակցությանը, ապա սոցիալապես անապահով ընտանիքները 6 ամսվա ընթացքում ստացել են 100 լարու չափով դրամական օգնություն: Հաշմանդամություն ունեցող անձինք նշել են, որ իրենց թոշակը բարձրացել է: Համաճարակի ժամանակ կոմունալ վճարումների համաֆինանսավորումը կարևոր օգուտ էր հարցվածների համար:

Գլուխ 2. Կրթություն

Նախադպրոցական/Ընդհանուր կրթություն

Հետազոտությանը մասնակցած մարդկանց բացարձակ մեծամասնությունը (97,5%) նշում է, որ իրենց բնակավայրում կա հանրային դպրոց: Համեմատաբար ավելի փոքր թիվը, սակայն մեծամասնությունը (73,7%), վկայում է հանրային մանկապարտեզի գործունեության մասին, հատկանշական է, որ քառորդից ավելին (26,3%) շեշտում է իրենց բնակավայրում հանրային մանկապարտեզի բացակայությունը: Չնայած բնակավայրում կան հիմնականում նախադպրոցական/հանրակրթական հաստատություններ, հարցվածների մեծ մասը չի օգտվում դրանցից և ոչ մեկից՝ հանրային մանկապարտեզից՝ 83,9%, հանրային դպրոցից՝ 57,6% (տես գծապատկեր #2):

Գծապատկեր #2



Ընդհանուր միտումը պահպանվում է հարցը առանձին տարածաշրջանի առումով վերլուծելիս, ինչպես Սամցխե-Չավախեթիում, այնպես էլ Քվեմո Քարթլիում: Հարցվածների մեծամասնությունը նշել է, որ գործում են հանրային մանկապարտեզ և դպրոց, թեև նշված ծառայությունները ցածր են, հատկապես հանրային մանկապարտեզից օգտվողների մասնաբաժինը՝ Սամցխե-Չավախեթի - 18%, Քվեմո Քարթլի - 14,2%: Հարկ է նաև նշել, որ Քվեմո Քարթլիում շատ ավելի փոքր թիվ (63,5%) է վկայում հանրային մանկապարտեզի գոյության մասին, քան Սամցխե-Չավախեթիում (83,7%) (տես աղյուսակ #4):

Աղյուսակ #4

(Ըստ տարածաշրջանի)		Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմն Քրթլիօ (N=600)
Ձեր բնակավայրում գործում է, թե՞ ոչ			
Հանրային մանկապարտեզ	Այո	83.7%	63.5%
	Ոչ	16.3%	36.5%
Հանրային դպրոց	Այո	98.1%	97%
	Ոչ	1.9%	3%
Օգտվում եք, թե՞ ոչ			
Հանրային մանկապարտեզի ծառայությունից	Այո	18%	14.2%
	Ոչ	82%	85.8%
Հանրային դպրոցի ծառայությունից	Այո	40.9%	44%
	Ոչ	59.1%	56%

Հարցվողները, որոնք օգտվում են հանրային մանկապարտեզի կամ դպրոցի ծառայություններից, գնահատել են, թե որքանով են իրենք գոհ լքված ուսումնական հաստատությունների տարբեր ասպեկտներով: Գնահատման համար օգտագործվել է 5 բալանոց սանդղակ, որի վրա 1-ին կետում լքվում է «շատ դժգոհ» կատեգորիան, իսկ 5-րդ կետում՝ «շատ գոհ» կատեգորիան: Հարցվողները դրական են գնահատում և՛ հանրային դպրոցի, և՛ մանկապարտեզի ծառայությունները. մեծամասնությունը գոհ է ստորև լքված ասպեկտներից (կետեր 4 և 5)՝

- Հասանելիություն՝ հանրային մանկապարտեզ - 78.9%, հանրային դպրոց - 73.9%,
- Ենթակառուցվածքներ՝ հանրային մանկապարտեզ - 82.9%, հանրային դպրոց - 66.8%,
- Ղեկավարություն՝ հանրային մանկապարտեզ - 83.9%, հանրային դպրոց - 75.1%,
- Գրանցման գործընթացներ (հեշտ գործընթաց)՝ հանրային մանկապարտեզ - 83.1%, հանրային դպրոց - 78.4%,
- Մանկավարժների որակավորում՝ հանրային մանկապարտեզ - 84.6%, հանրային դպրոց - 74.1%,
- Անվտանգություն՝ հանրային մանկապարտեզ - 82.9%, հանրային դպրոց - 79.5%:

Ինչ վերաբերում է սննդի բաղադրիչին, ապա մանկապարտեզների ծառայություններից օգտվողների 70.8%-ը գոհ է: Քանի որ որոշ հանրային դպրոցներ կարող են չունենալ սննդի տարածք, հարցվածների մեծ մասը (42.1%) հրաժարվել է պատասխանել, իսկ մեկ քառորդից ավելին (26.8%) դժգոհ է սննդից (տես սղյուսակ #5):

Աղյուսակ #5

Որքանով եք բավարարված հետևյալ ասպեկտներով:	Շատ դժգոհ	Դժգոհ	Հավասարաչափ գոհ և դժգոհ	Գոհ	Շատ գոհ	Հրաժարվել է պատասխանել
Հանրային մանկապարտեզ (N=193)						
Հասանելիություն	3.5%	5.1%	12.1%	49.3%	29.6%	0.4%
Ենթակառուցվածքներ	1%	1.4%	14.2%	59.6%	23.3%	0.4%
Ղեկավարություն	0.9%	2.7%	12.1%	57.8%	26.1%	0.4%
Գրանցման գործընթացներ (հեշտ գործընթաց)	-	3.1%	11.5%	61.4%	21.7%	2.4%
Սնունդ	2.6%	6.3%	13.7%	48.3%	22.5%	6.6%
Մանկավարժների որակավորում	1%	2.4%	11%	57.3%	27.3%	0.9%
Անվտանգություն	2%	3.2%	11.1%	57.4%	25.5%	0.9%
Հանրային դպրոց (N=519)						
Հասանելիություն	1.4%	4%	19.8%	55.6%	18.3%	0.9%
Ենթակառուցվածքներ	2.5%	8.5%	22.2%	52.2%	14.6%	-
Ղեկավարություն	0.6%	4.3%	18.5%	55.3%	19.8%	1.5%
Գրանցման գործընթացներ (հեշտ գործընթաց)	1.2%	1.8%	15.2%	60.6%	17.8%	3.4%
Սնունդ	7%	19.9%	12.9%	12.8%	5.4%	42.1%
Մանկավարժների որակավորում	1%	3.6%	19.9%	55.9%	18.3%	1.3%
Անվտանգություն	1%	2.9%	15.7%	59.6%	19.9%	0.9%

Մասնագիտական և բարձրագույն կրթություն

Ի տարբերություն նախադպրոցական և հանրակրթական հաստատությունների, հարցվածների մեծամասնությունը նշում է, որ իրենց մուկիցիպալիտետում/քաղաքում չեն գործում ոչ մասնագիտական ուսումնարան (59.2%), ոչ էլ պետական ֆինանսավորմամբ բարձրագույն ուսումնական հաստատություն (67.6%): Բացահայտվել է, որ տարածաշրջանների/թիրախային մուկիցիպալիտետների միջև զգալի տարբերություն կա.

Սամցխե-Ջավախեթին Քվեմո Քարթլիից առավել աչքի է ընկնում մասնագիտական և բարձրագույն կրթության գործող հաստատություններով: Սամցխե-Ջավախեթի մուկիցիպալիտետի հարցվածների մեծամասնությունը նկարագրում է, որ իրենց մուկիցիպալիտետում/քաղաքում գործում են և՛ մասնագիտական ուսումնարան (56,9%), և՛ պետական ֆինանսավորմամբ բարձրագույն ուսումնական հաստատություն (56,9%): Քվեմո Քարթլիում հարցվածների մեծամասնությունը նշում է նման հաստատությունների բացակայությունը՝ մասնագիտական ուսումնարան - 75,9%, պետական ֆինանսավորմամբ բարձրագույն ուսումնական հաստատություն - 92,5%: Վերջինիս դեպքում մնացած 7,5%-ը հրաժարվել է պատասխանել:

Ինչպես պարզվեց, հարցվածների շատ փոքր մասն է օգտվում մասնագիտական ուսումնարանի (2.7%, N=13) կամ բարձրագույն ուսումնական հաստատության ծառայություններից (8%, N=24): Մասնագիտական ուսումնարանի սպասարկումից գոհ է 8 հարցվող (4 և 5 միավորներ), իսկ 5 հոգի չեզոք դիրք են գրավում (3 միավոր՝ «հավասարապես գոհ և դժգոհ»): Մյուս կողմից, պետական ֆինանսավորմամբ բարձրագույն ուսումնական հաստատություններից օգտվողներից 15 հարցվողներ գոհ են ծառայությունից (4 և 5 միավորներ), իսկ 3-ը դժգոհ են (1 և 2 միավորներ): Ըստ այդմ՝ չեզոք դիրքորոշում են հայտնել 6 հարցվողներ (3 միավոր): Պետության կողմից ֆինանսավորվող բարձրագույն ուսումնական հաստատություններից դժգոհության պատճառների թվում առանձնացվել են հետևյալ արձագանքները՝ սղասախոսների որակավորում, վերապատրաստման ծրագրերի բացակայություն, ոչ արդիական վերապատրաստման ծրագրեր, կառավարում, բյուրոկրատիա, վճարներ:

Գլուխ 3. Իրազեկվածություն մուկիցիպալ ծառայությունների մասին

Ֆոկուս խմբերում նշվել են մուկիցիպալ ծառայությունների մասին տեղեկատվության մի քանի հիմնական աղբյուրներ՝ զանգվածային լրատվության միջոցներ, հիմնականում տեղական հեռուստատեսային և ռադիո լրատվամիջոցներ, սոցիալական ցանցեր (հատկապես «Ֆեյսբուք»), քաղաքապետարանների պաշտոնական կայքեր և ոչ պաշտոնական կայքեր՝ հարազատներ, հարևաններ, ընկերներ և այլն: Հարցվածների մի փոքր մասը ծառայությունների մասին տեղեկատվություն է ստանում՝ մասնակցելով համայնքապետի և գյուղի ներկայացուցչի հետ տեղեկատվական հանդիպումներին կամ ուղղակիորեն այցելելով քաղաքապետարան: Ֆոկուս խմբերի մասնակիցներից պարզվել է, որ նրանք ունեն անբավարար և թերի տեղեկատվություն քաղաքային ծառայությունների վերաբերյալ:

«Շատերը չգիտեն ծառայությունների մասին և կարծում են որ նրանց ունեցած տեղեկությունները կարող են ստույգ չլինել» (63 տարեկան կին, ուսուցչուհի, Էթնիկ վրացի, Բուկխի)

Սոցիալական և առողջապահական ծառայությունների մասին տեղեկատվության պակասը հատկապես ակնհայտ է Էթնիկ փոքրամասնությունների՝ ադրբեջանցիների և հայերի շրջանում, քանի որ լեզվական խոչընդոտի և ավելի քիչ ինտեգրվածության պատճառով տեղեկատվություն ստանալու հնարավորությունները քիչ են՝ համեմատած վրացիների հետ: Այդ իսկ պատճառով ծառայությունների մասին տեղեկատվություն ստանալու համար առավելապես օգտագործվում են ոչ պաշտոնական ուղիները: Բնակչությունը փորձում է տեղեկատվություն ստանալ այն անձանցից, որոնք չեն օգտվում ծառայություններից, կամ

որոնք հնարավորություն ունեն քաղաքապետարանից ամբողջական տեղեկատվություն ստանալու: Ֆոկուս խմբերում որպես ծառայությունների մասին տեղեկատվության աղբյուր նշվել են տեղական, էթնիկ փոքրամասնությունների լեզվով լրատվամիջոցները, թեև նշվել է նաև, որ ծառայությունների մասին տեղեկատվությունը համակարգված չի տարածվում լրատվամիջոցների միջոցով, և հնարավոր է, որ անհրաժեշտ տեղեկատվությունը հնարավոր չլինի ստանալ: Ծալկայի և Նինոծմինդայի բնակիչները նշել են կոնկրետ լրատվամիջոցներ: Դրանք են «Փարվանա» հեռուստաընկերությունը և «Նոր» ռադիոն: «Marneuli» ռադիոկայանը, actual.ge կայքը և Marneuli TV-ն հայտնի են էթնիկ ադրբեջանցիների շրջանում: Մառնեուլիի բնակիչները ֆոկուս խմբում նշեցին, որ մուսիցիպալիտետի գործունեության մասին տեղեկատվություն ստանում են հիմնականում սոցիալական ցանցերի՝ «Ֆեյսբուքի» միջոցով:

«Մառնեուլիի մուսիցիպալիտետը ֆեյսբուքյան իր էջում տեղեկատվություն է հրապարակում երկու լեզվով՝ ադրբեջաներեն և վրացերեն: Բացի դրանից, ադրբեջաներենով այլ տեղեկություն չկա» (28-ամյա կին, աշխատող, էթնիկ ադրբեջանցի, Մառնեուլի)

Եթե քաղաքացին դիմում է մուսիցիպալ մարմնին ադրբեջաներենով, ապա պատասխան չստանալու հավանականությունը մեծ է, հետևաբար, գործող պրակտիկայի համաձայն, վրացերեն չիմացող քաղաքացիները օգնություն են խնդրում վրացերեն իմացող անձից՝ մուսիցիպալիտետին դիմելու համար: Նինոծմինդայիցիները նշել են, որ երբեմն ստիպված են լինում ստորագրել վրացերեն գրված փաստաթղթեր, որոնց բովանդակությունը չեն հասկանում: Նինոծմինդայի մուսիցիպալիտետի առանձնահատկությունն այն է, որ մուսիցիպալ մարմիններում աշխատողների մեծամասնությունը ազգությամբ հայեր են, և լեզվական խոչընդոտն էական խնդիր է աշխատակիցների շրջանում:

Ֆոկուս խմբերին մասնակցող գյուղացիները նշել են, որ անհրաժեշտ է, որ մուսիցիպալիտետի աշխատակիցները պրեզենտացիաներ անցկացնեն և առկա ծառայությունների մասին տեղեկությունն անձամբ տրամադրեն անձամբ բնակչությանը: Տեղեկության տրամադրման անհրաժեշտություն կա հատկապես էթնիկ փոքրամասնությունների բնակավայրերում, որտեղ տեղեկվություն ստանալու քիչ հնարավորություններ կան: Որպես տեղեկության տարածման մեկ այլ միջոց նշվել է փոքրամասնությունների լեզուներով գրված բրոշուրների բաժանումը:

Ֆոկուս խմբերի մասնակիցները նշել են, որ մուսիցիպալիտետի ներկայացուցիչների հետ տեղեկատվական հանդիպմանը հիմնականում ներկա են նույն անձինք, ովքեր արդեն տեղեկություններ ունեն մուսիցիպալիտետի գործունեության մասին: Հաշվի առնելով դա՝ ցանկալի է տեղեկատվություն տրամադրել բնակչության այն հատվածին, ում այն հասանելի:


Գլուխ 4. Սոցիալական և առողջապահական ծառայություններ

Սոցիալական ծառայություններ

Հետազոտության շրջանակներում հարցվողներին ներկայացվել է մի կողմից մուսիցիպալ, իսկ մյուս կողմից՝ պետական (կենտրոնական) սոցիալական ծառայությունների ցանկը: Ինչպես պարզվեց, հարցվածների մեծ մասը (81.2%)՝ ոչ իրենք, ոչ էլ իրենց ընտանիքի անդամները չեն օգտվում մուսիցիպալ սոցիալական ծառայություններից: 6.4%-ն ունի միանվազ (կանխիկ կամ այլ) սոցիալական աջակցություն ստանալու փորձ, իսկ 4.3%-ը սոցիալապես անապահով երեխաներին և նորածիններին աջակցող ծրագրի շահառու է: Հարկ է նշել, որ հարցվողներից և ոչ մեկը չի օգտվում տնային խնամքի ծրագրից և տարբեր տեսակի բռնության ենթարկված անձանց օգնությունից (տե՛ս գծապատկեր #3):

Գծապատկեր #3

Դուք կամ ձեր ընտանիքի անդամը օգտվո՞ւմ եք հետևյալ մունիցիպալ սոցիալական ծառայություններից որևէ մեկից: (N=1200)



Առանձին մունիցիպալ սոցիալական ծառայություններից օգտվելու մակարդակը ցածր է ինչպես Սամցխե-Չավախքերթում, այնպես էլ Քվեմո Բարթլիում: Երկու տարածաշրջաններում էլ մեծամասնությունը նշում է, որ ոչ իրենք, ոչ էլ նրանց ընտանիքի անդամները չեն օգտվել որևէ ծառայություններից՝ Սամցխե-Չավախքերթի - 87,8%, Քվեմո Բարթլի - 74,9%: Մյուս կողմից, պարզվել է, որ Քվեմո Բարթլիում տարբեր սոցիալական ծառայություններից օգտվողների ընդհանուր մասնաբաժինը որոշ չափով բարձր է: Բացի այդ, պետք է նշել, որ Քվեմո Բարթլիում գրեթե յուրաքանչյուր տասներորդ հարցվողն օգտվում է միանվագ (կանխիկ կամ այլ տեսակի) սոցիալական աջակցությունից, մինչդեռ Սամցխե-Չավախքերթում համեմատաբար ակնառու է սոցիալապես անապահով երեխաների և նորածինների աջակցության ծրագրի շահառուների մասնաբաժինը (տես աղյուսակ թիվ 6):

Աղյուսակ #6

Դուք կամ ձեր ընտանիքի անդամը օգտվում եք հետևյալ մուլտիցիպալ սոցիալական ծառայություններից որևէ մեկից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Ոչ, ոչ մեկից	87.8%	74.9%
Միանվագ (կանխիկ կամ այլ տեսքով) սոցիալական օգնություն	3%	9.6%
Անօթևանների համար կացարանի տրամադրում (սոցիալական կացարան)	-	0.1%
Բազմազավակ ընտանիքների/միայնակ ծնողների սոցիալական օգնություն	1.7%	5.4%
Սոցիալապես անապահով երեխաների և նորածինների աջակցության ծրագիր	4.8%	3.9%
Հաշմանդամություն ունեցող անձանց օգնություն	2%	1.2%
Անվճար երթևեկություն	-	0.6%
Անվճար ճաշի ծրագիր	0.3%	-
Տնային խնամքի ծրագիր	-	-
Տարբեր տեսակի բնությունների զոհերի օգնություն	-	-
Վրաստանի օկուպացված տարածքներից ներքին տեղահանվածների և վերտրանսներին և նրանց ընտանիքների օգնություն	0.3%	1.6%
Աջակցություն բնական աղետներից տուժած և դժվարին կենսապայմաններում գտնվող մարդկանց	-	0.1%
Ծիսական օգնություն	-	0.5%
Նոր ամուսնացած ընտանիքների խրախուսում	-	0.1%
Առցանց ուսուցման ընթացքում սոցիալապես անապահով ընտանիքների կրթության հասանելիություն	-	1.3%
Ուսանողների և մարզիկների օգնություն	-	0.5%
Այլ	0.1%	0.2%

Ինչպես պարզվեց, հարցվածների մեծամասնությունը ժամանակին ստանում է վերը նշված համայնքային սոցիալական օգնությունը/ծառայությունները: Նույն միտումը բնորոշ է ինչպես Սամցխե-Ջավախեթի, այնպես էլ Քվեմո Քարթլիի համար: Բացի այդ, տարբեր ծառայություններից օգտվողների մեծամասնությունը ծառայությունը ստանալու համար անհրաժեշտ գրանցման ընթացակարգերը գնահատում է որպես հեշտ (3 և 4 միավոր՝ 4 բալանոց սանդղակով): Անհատական ծառայությունների դեպքում 65%-ից ավելին ունի նմանատիպ փորձ: Անվճար սննդի ծրագիրը գնահատելիս այդ ցուցանիշը նվազում է մինչև 57,9%: Մյուս կողմից, հարկ է նշել, որ յուրաքանչյուր երրորդ հարցվողը, ով օգտվում է հաշմանդամություն ունեցող անձանց օգնությունից, նշում է, որ գրանցման գործընթացը դժվար է (34.5%, N=7): Նրանց գրեթե մեկ հինգերորդը գնահատում է, որ միանվագ (կանխիկ կամ այլ տեսակի) և բազմազավակ ընտանիքների/միայնակ ծնողների համար սոցիալական օգնություն ստանալու համար պահանջվող գրանցման ընթացակարգը դժվար է (1 և 2 միավոր 4 բալանոց սանդղակով) (տես Աղյուսակ. #7):

Հաշվի առնելով առկա իրավիճակը՝ հարցվածները գոհ են մուլտիցիպալիտետների կողմից մատուցվող հիմնական սոցիալական ծառայություններից՝ ցուցանիշը գերազանցում է 57%-ը (5 բալանոց սանդղակով 4 և 5 միավոր): Սակայն որոշ ծառայությունների դեպքում հարցված

անձինք չեզոք դիրք են գրավում (3 միավոր): Ավելի կոնկրետ, առավել հաճախ օգտագործվող ծառայությունների գոհունակության ցուցանիշները հետևյալն են՝

- Միանվագ (կանխիկ կամ այլ տեսքով) սոցիալական օգնություն - 76%, N=79
- Սոցիալապես անապահով երեխաների և նորածինների աջակցության ծրագիր - 89.8%, N=55
- Բազմազավակ ընտանիքների/միայնակ ծնողների սոցիալական օգնություն - 71.4%, N=43

(մանրամասն տվյալները տե՛ս աղյուսակ #7-ում)

Աղյուսակ #7

	Ինչպե՞ս կգնահատեք մուկիցիպալ սոցիալական ծառայություններ ստանալու համար անհրաժեշտ գրանցման ընթացակարգը: (%)						Որքանո՞վ եք գոհ մուկիցիպալիտետների կողմից մատուցվող սոցիալական ծառայություններից: (%)					
	Շատ դժվար	Դժվար	Չեչտ	Շատ հեշտ	Չհանցել գրանցում	Չգիտեմ	Շատ դժոհ	Դժոհ	Նույն քան հոգի	Գոհ	Ժամանակ	Դժվարանում են
Միանվագ (կանխիկ կամ այլ տեսքով) սոցիալական օգնություն (N=79)	2.6	16	61.5	11.5	7	1.3	1	9.5	13.6	62.2	13.8	-
Անօթևանների համար կացարանի տրամադրում (սոցիալական կացարան) (N=1)	-	-	100	-	-	-	-	-	-	100	-	-
Բազմազավակ ընտանիքների/միայնակ ծնողների սոցիալական օգնություն (N=43)	2.1	16.7	66.2	15	-	-	-	2.1	24.7	60.8	10.6	1.8
Սոցիալապես անապահով երեխաների և նորածինների աջակցության ծրագիր (N=55)	6.7	12.5	59.2	15.1	-	6.4	1.3	1.7	7.2	73.1	16.7	-
Հաշմանդամություն ունեցող անձանց օգնություն (N=21)	-	34.5	57.9	7.6	-	-	-	10.6	53.9	30.6	4.9	-
Անվճար երթևեկություն (N=5)	-	-	63.5	36.5	-	-	-	-	-	55.3	44.7	-
Անվճար ճաշի ծրագիր (N=2)	-	-	57.9	-	-	42.1	-	-	42.1	57.9	-	-

	Ինչպե՞ս կզնահատեք մունիցիպալ սոցիալական ծառայություններ ստանալու համար անհրաժեշտ գրանցման ընթացակարգը: (%)						Որքանո՞վ եք գոհ մունիցիպալիտետների կողմից մատուցվող սոցիալական ծառայություններից: (%)					
	Շատ դժվար	Դժվար	Հեշտ	Շտտ հեշտ	Չհանցել գրանցում	Չգիտեմ	Շատ դոհ	Դոհ	Նոլլնքան գոհ	Գոհ	Ժոոոոոո	Դժվարանում եմ պատասխանել
Վրաստանի օկուպացված տարածքներից ներքին տեղահանվածների և վետերաններին և նրանց ընտանիքների օգնություն (N=14)	-	-	70	12.6	-	17.5	13	8.2	53.8	25	-	-
Աջակցություն բնական աղետներից տուժած և դժվարին կենսապայմաններում գտնվող մարդկանց (N=1)	-	100	-	-	-	-	-	-	100	-	-	-
Ծիսական օգնություն (N=3)	-	-	69.7	30.3	-	-	-	-	-	-	100	-
Նոր ամուսնացած ընտանիքների խրախուսում (N=1)	-	100	-	-	-	-	-	-	100	-	-	-
Առցանց ուսուցման ընթացքում սոցիալապես անապահով ընտանիքների կրթության հասանելիություն (N=8)	9.1	-	37.8	53.1	-	-	-	-	9.1	50.2	40.7	-
Ուսանողների և մարզիկների օգնություն (N=3)	-	-	100	-	-	-	-	-	-	100	-	-
Այլ (N=2)	42.3	-	57.7	-	-	-	-	-	-	100	-	-


Գրանցման ընթացակարգերը տարածաշրջանային տեսանկյունից դիտարկելիս բացահայտվեց այլ փորձ: Ճիշտ է, և՛ Սամցխե-Ջավախեթիում, և՛ Քվեմո Քարթլիում հարցվածների հիմնական մասը կարծում է, որ ծառայությունը ստանալու համար անհրաժեշտ գրանցման ընթացակարգը հեշտ է, թեև կան տարբեր բացառություններ: Սամցխե-Ջավախեթիում հարցվածների 41,7%-ի փորձի համաձայն՝ միանվագ (կանխիկ կամ այլ) սոցիալական աջակցության գրանցման գործընթացը շատ դժվար է կամ դժվար (1 և 2

միավոր): Թերևս դա է պատճառը, որ այս ծառայությունից օգտվողների տեսակարար կշիռը ցածր է (3%): Իսկ Քվեմո Քարթլիում միայն 11,6%-ն է կարծում, որ այս ծառայությունը ստանալու համար անհրաժեշտ գրանցման ընթացակարգը դժվար է (1 և 2 միավոր): Մյուս կողմից, Քվեմո Քարթլիում որպես խնդրահարույց խնդիր է սահմանվել սոցիալապես անապահով երեխաների և նորածինների աջակցության ծրագրից օգտվելը (գրանցման ընթացակարգերը դժվար են կամ շատ դժվար` 24,9% (1 և 2 միավոր): Սամցխե-Ջավախեթիում հարցվածների մեծամասնությունը, անհատական ծառայություններ ստանալու առումով, գոհունակություն է հայտնում (4 և 5 միավոր)` յուրաքանչյուր ծառայությունից գոհունակության մակարդակը գերազանցում է 57%-ը: Քվեմո Քարթլիում ավելի քան 71%-ը գոհ է անհատական ծառայություններից: Երկու տարածաշրջանների դեպքում էլ բացառություն է հաշմանդամություն ունեցող անձանց օգնությունը: Սամցխե-Ջավախեթիում նշված ծառայությունից գոհ է միայն 29%-ը, իսկ Քվեմո Քարթլիում` 44,3%-ը:

Ջեոթաբայում գնահատվել է պետական (կենտրոնական) սոցիալական ծառայություններից օգտվելու փորձը: Ինչպես պարզվել է, հարցվածների մեկ քառորդից ավելիի դեպքում (26,4%) ոչ նրանք, ոչ էլ նրանց ընտանիքի անդամները չեն օգտվում որևէ ծառայությունից: Մյուս կողմից` 29%-ն ունի ծերության կենսաթոշակից օգտվելու փորձ, 19,9%-ը` պետական ապահովագրությունից և 18%-ը` կոմունալ ծառայությունների սուբսիդավորումից (տես գծապատկեր #4):

Գծապատկեր #4

Դուք կամ ձեր ընտանիքի անդամը օգտվում եք ստորև թվարկված պետական (կենտրոնական) սոցիալական ծառայություններից: (N=1200)



Ե՛վ Սամցխե-Ջավախեթիում, և՛ Քվեմո Քարթլիում հարցվածների մեծ մասը նշում է, որ օգտվում է հետևյալ կենտրոնական սոցիալական ծառայություններից`

- Տարիքային կենսաթոշակ` Սամցխե-Ջավախեթի - 29.2%, Քվեմո Քարթլի - 28.8%
- Պետական բժշկական ապահովագրություն` Սամցխե-Ջավախեթի - 21.1%, Քվեմո Քարթլի - 18.6%
- Կոմունալ ծառայությունների սուբսիդիաներ` Սամցխե-Ջավախեթի - 20.1%, Քվեմո Քարթլի - 15.8%

Մասնավորապես, ինչի՞ց եք դժգոհ ձեր բնակավայրի հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված միջավայրից: (ըստ տարածաշրջանի)		
	Սամցխե-Ջավախեթի (N=65)	Քվեմո Քարթլի (N=155)
Սայլակից օգտվող անձանց համար թեքահարթակների բացակայություն	35.3%	42%
Վնասված թեքահարթակներ	12.6%	10.5%
Սայլակից օգտվողների համար չհարմարեցված տրանսպորտ	20.8%	26.2%
Սայլակից օգտվողների համար չհարմարեցված շինություններ	26.3%	18.5%
Այլ	-	-
Հրաժարվում է / դժվարանում է պատասխանել	5.1%	2.9%

Բոլոր ութ մոնիցիցիալիտետների բնակիչների հետ անցկացված ֆոկլուս խմբերում ընդգծվել է առկա պետական ծրագրերի մասին ավելի շատ տեղեկություն ստանալու ցանկությունը:

Բնակիչները պետք է տեղեկություն ստանան ըստ իրենց հետաքրքրության և գործունեության ոլորտի: Մասնավորապես, ֆերմերները կցանկանային տեղեկություն ստանալ գյուղատնտեսության ոլորտում ծառայությունների/աջակցության ծրագրերի մասին, երիտասարդները՝ ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթության և զբաղվածության հնարավորությունների մասին, հաշմանդամություն ունեցող անձինք՝ սոցիալական ծրագրերի մասին, որոնք կօգնեն իրենց անկախ կյանքում, փոքր ձեռնարկատերերը կցանկանային տեղեկատվություն ստանալ բիզնեսի աջակցության ծրագրերի մասին և այլն:

Գլուխ 6. Ծառայությունների հավասար հասանելիություն

Որակական հետազոտության համար հետաքրքիր էր հասկանալ բնակչության կարծիքն այն մասին, թե որքանով ունեն պետական ծառայությունների հավասար հասանելիություն էթնիկ վրացիները և այլ ազգությունների ներկայացուցիչները (ադրբեջանցիներ, հայեր): Էթնիկ փոքրամասնությունների հետ անցկացված Ֆոկուս խմբերում հստակ արտահայտվել է այն կարծիքը, որ առկա ծառայություններն ավելի մատչելի են վրացիներին, քան մյուս էթնիկ խմբերին:

«Կոնկրետ ոչինչ ասել չեմ կարող, բայց կարծում եմ, որ վրացիներն օգտվում են ամեն ինչից, որտեղ էլ որ գնան: Բայց մենք չգիտենք մեր իրավունքները» (62-ամյա տղամարդ, գործազուրկ, էթնիկ հայ, Ծալկա):

Քվեմո Բարթիլում բնակվող ադրբեջանցիները նշել են, որ մուսլիմիպալ մարմիններում հիմնականում աշխատում են էթնիկ վրացիներ, և, հետևաբար, դժվար է տեղեկատվություն ստանալ վրացերեն չիմացող բնակչության համար: Ծառայությունը ստանալու համար անհրաժեշտ է վրացերենով դիմում պատրաստել և փաստաթղթեր հավաքել, որոնցում **անհրաժեշտ է վրացերենին տիրապետող անձի օգնություն**: Ֆոկուս խմբերի մասնակիցները նշեցին, որ հավասար հասանելիության խնդրին առավելապես բախվում են ավագ սերնդի ներկայացուցիչները, քանի որ նրանք չեն տիրապետում/վատ են տիրապետում վրացերենին: Վերջին տարիներին «1+4 կրթական ծրագրի» միջոցով էթնիկ փոքրամասնություններից ավելի ու ավելի շատ երիտասարդներ են սովորում վրացերեն լեզուն գրեն այն մակարդակով, որ կարողանան տեղեկություն ստանալ և օգտվել ծառայություններից: Սակայն, ինչպես նշվեց, տեղեկության պակասի խնդիրը սուր է վրացերեն չիմացող էթնիկ փոքրամասնությունների միջին և տարեց ներկայացուցիչների շրջանում:

«Ես բանկում էի աշխատում, երբ հայեր էին ներս մտնում, ինձ ճանաչելով, որ հայ եմ, բոլորն ինձ մոտ էին գալիս՝ վրացերեն չգիտենալու պատճառով: Եթե բանկում չաշխատեի, չգիտեմ՝ արդյո՞ք կգային տեղեկություն ստանալու: Իմ կարծիքով հիմնական խնդիրը լեզվի չիմացությունն է» (27-ամյա երիտասարդ, ազգությամբ հայ, աշխատող, Ծալկա):

Ֆոկուս խմբերին մասնակցող էթնիկ վրացիները դժվարանում էին խոսել ծառայությունների հավասար հասանելիության մասին, քանի որ այդ հարցը նրանց համար ակտուալ չէ: Հատկապես այն մասը, որը հարաբերություններ չունի տարբեր էթնիկ խմբերի ներկայացուցիչների հետ. «Չգիտեմ, ես չունեմ որևէ մեկը, ով խնդիրներ կունենա, որքան գիտեմ, նրանք օգտվում են այն ամենից, ինչից մենք ենք օգտվում» (50 տարեկան կին, գործազուրկ, էթնիկ վրացի, Ախալցխիս):

Վրացիների հետ անցկացված ֆոկուս խմբի մի քանի մասնակիցների գնահատմամբ՝ էթնիկ փոքրամասնություններին ակտիվորեն տրամադրվում է ծրագրերի/ծառայությունների մասին տեղեկություն իրենց մայրենի լեզվով, և, հետևաբար, դրանց օգտագործման բոլոր նախադրյալները կան:


Գլուխ 7. Կոմունալ ենթակառուցվածքներ

Էլեկտրաէներգիա

Հետազոտությանը մասնակցած մարդկանց մեծամասնությանը (96,6%) էլեկտրաէներգիա է մատակարարվում ամեն օր, օրը 24 ժամ (Սամցխե-Ջավախեթի՝ 99,7%, Քվեմո Քարթլի՝ 93,4%), իսկ 3,4%-ը՝ առանց գրաֆիկի (հաճախ է անջատվում) (Սամցխե- Ջավախեթի՝ 0,3%, Քվեմո Քարթլի՝ 6,6%): Հարցվողներն իրենց գոհունակությունը ձմռանը և այլ սեզոններին մատակարարվող էլեկտրաէներգիայից գնահատել են 5 բալանոց սանդղակով, որի 1 միավորով նշվում է «չատ դժգոհ» կատեգորիան, իսկ 5 միավորով՝ «չատ գոհ» կատեգորիան: Հարցվածների գրեթե հավասար մասնաբաժինը գոհ է էլեկտրաէներգիայի հզորությունից (4 և 5 միավոր) ինչպես ձմռանը (83.8%), այնպես էլ մյուս սեզոններին (86.7%): Դժգոհողների թիվը միջինում հավասար է 6%-ի (տե՛ս գծապատկեր #9):

Գծապատկեր #9


Որքանով եք գոհ մատակարարվող էլեկտրաէներգիայի հզորությունից



Էլեկտրաէներգիայի հզորությունից գոհունակությունը բնորոշ է երկու տարածաշրջանների բնակիչներին, սակայն Սամցխե-Ջավախեթիում այդ ցուցանիշն ավելի բարձր է, եթե հաշվի առնենք ինչպես ձմեռը, այնպես էլ մյուս սեզոնները (տես գծապատկեր #10):

Գծապատկեր #10

Որքանով եք գոհ մատակարարվող էլեկտրաէներգիայի հզորությունից (ըստ տարածաշրջանի)



Գազամատակարարում


Հարցվածների 83,5%-ը նշել է, որ իրենց բնակավայրում գործում է կենտրոնական գազամատակարարում: Մեծամասնությունը (98,6%) գազաֆիկացված է կենտրոնական համակարգից՝ բոլոր եղանակներին: 0,8% (N=9) միայն սեզոնային մատակարարվողների մասնաբաժինն է, իսկ 4 հոգու փորձի համաձայն՝ նրանց ընտանիքին կենտրոնական համակարգից գազ չի մատակարարվում: Քվեմո Բարթիի տարածաշրջանում հարցվածների մասնաբաժինը, ովքեր գնահատում են, որ իրենց բնակավայրում գործում է կենտրոնական գազամատակարարում, ավելի մեծ է՝ 88,1% (Սամցիե-Ջավախեթի՝ 79%): Երկու տարածաշրջաններում էլ բոլոր սեզոններին կենտրոնացկան համակարգից գազ է ստանում միջինը 98%-ը:

Հարցվածների 16,3%-ի գնահատմամբ՝ իրենց բնակավայրում կենտրոնական գազատար չկա: Նրանց զգալի մասը (46,5%) գազի բալոն է օգտագործում բոլոր եղանակներին, իսկ գրեթե մեկ քառորդը (24%)՝ միայն սեզոնային: Հարցվածների 29,5%-ը, ում բնակավայրը չունի կենտրոնական գազամատակարարում, նշում է, որ չի օգտագործում նաև գազի բալոն: Սամցիե-Ջավախեթիում կենտրոնական գազամատակարարում չունեցող հարցվածների 72,3%-ը գազաբալոն է օգտագործում բոլոր սեզոններին կամ սեզոնային, իսկ Քվեմո Բարթիում այս ցուցանիշը կրճատվել է մինչև 67,7%:

Պարզվել է, որ հարցվածների մեծ մասը (78,2%) գոհ է գազամատակարարումից (ինչպես կենտրոնական գազամատակարարում, այնպես էլ գազաբալոններ) (4 և 5 միավոր): Դժգոհների տեսակարար կշիռը փոքր-ինչ գերազանցում է մեկ տասներորդը (11,8%) (տե՛ս գծապատկեր #11):

Գծապատկեր #11

Որքանով եք գոհ գազամատակարարումից (նկատի ունենք և՛ կենտրոնական գազամատակարարումը, և՛ գազաբալոնները): (N=1146)



Չնայած գազի օգտագործման տարբեր փորձին, թե՛ Սամցխե-Ջավախեթիում և թե՛ Քվեմո Քարթլիում հարցվածների 78%-ը գոհ է գազամատակարարումից (4 և 5 միավոր): Սակայն, պետք է նշել, որ Քվեմո Քարթլիում հարցվածների ավելի քան մեկ տասներորդը չեզոք դիրքորոշում է ցուցաբերում՝ 11,8%: Սամցխե-Ջավախեթիում այդ ցուցանիշը նվազեցված է մինչև 7,5% (տես աղյուսակ #17):

Աղյուսակ #17


Որքանով եք գոհ գազամատակարարումից (նկատի ունենք և՛ կենտրոնական գազամատակարարումը, և՛ գազաբալոնները): (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=567)	Քվեմո Քարթլի (N=579)
Շատ դժգոհ	4.5%	5.1%
Ավելի շատ դժգոհ, քան գոհ	9.2%	4.7%
Հավասարապես գոհ և դժգոհ	7.5%	11.8%
Ավելի շատ գոհ, քան դժգոհ	29.4%	22.1%
Շատ գոհ	49%	55.9%
Հրաժարվում է պատասխանել	0.3%	0.4%

Ջրամատակարարում

Հարցվածների մեծամասնությունը (52.6%) կենցաղային ջրամատակարարման համար (ջրամատակարարման ընկերության խողովակաշարից) տանը (բնակարանում) օգտագործում է ծորակի ջուրը: Նրանց մեկ տասներորդից ավելին ասաց, որ այդ նպատակով ջուրը օգտագործում են տնից դուրս գտնվող ջրմուղ ընկերության ընդհանուր ծորակից: 8.4%-ը տնային տնտեսությանը ջուր է մատակարարում գետերից, լճերից, լճակներից և այլ բնական պաշարներից (տես՝ գծապատկեր #12):

Գծապատկեր #12

Խնդրում ենք գնահատել հետևյալ աղբյուրներից ո՞րն եք օգտագործում կենցաղային ջրամատակարարման համար: (N=1200)



Ընդհանուր միտումը պահպանվում է ինչպես Սամցխե-Ջավախեթիում, այնպես էլ Քվեմո Քարթլիում: Սամցխե-Ջավախեթիում հարցվածների մեծամասնությունը (58.3%) նշում է, որ իրենք օգտագործում են ծորակի ջուրը տանը (քնակարանում) կենցաղային ջուր մատակարարելու համար: Այս աղբյուրից օգտվողների մասնաբաժինը Քվեմո Քարթլիում կազմում է 47,8%: Այստեղ հարկ է նշել, որ եթե Սամցխե-Ջավախեթիում յուրաքանչյուր հինգերորդ հարցվողն օգտագործում է ջուրը ջրամատակարարման ընկերության ընդհանուր ծորակից, որը գտնվում է տնից դուրս, ապա Քվեմո Քարթլիում այդ ցուցանիշը կրճատվում է մինչև 7,4%: Մյուս կողմից, Քվեմո Քարթլիում ջրամատակարարման համար օգտագործում են ջրհոր (սեփական կամ ընդհանուր)՝ հարցվածների գրեթե հինգերորդն օգտվում է այս աղբյուրից, մինչդեռ Սամցխե-Ջավախեթիում ջրհորներից օգտվողների մասնաբաժինը չի հասնում նույնիսկ 1%-ի (տես աղյուսակ #18):

Աղյուսակ #18

Խնդրում ենք գնահատել հետևյալ աղբյուրներից ո՞րն եք օգտագործում կենցաղային ջրամատակարարման համար: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Ծորակի ջուր տանը (քնակարանում), ջրամատակարարման ընկերության խողովակաշարից	58.3%	47.8%
Ջուր ջրամատակարարման ընկերության ընդհանուր ծորակից, որը գտնվում է տնից դուրս	22.5%	7.4%
Տանը գտնվող սեփական ջրհոր, էլեկտրական ջրի պոմպով կամ առանց դրա	0.7%	8.4%
Ընդհանուր ջրհոր, էլեկտրական ջրի պոմպով կամ առանց դրա	0.1%	10.6%

Խնդրում ենք գնահատել հետևյալ աղբյուրներից ո՞րն եք օգտագործում կենցաղային ջրամատակարարման համար: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Բարթևի (N=600)
Հարևանի ջրհոր	0.4%	2.5%
Խանութից գնված շալցված ջուր	0.6%	6%
Գետ, լիճ, լճակ և այլ բնական ռեսուրսների ջուր	10.8%	6.4%
Ոռոգման կամ ջրահեռացման համակարգ (օրինակ՝ լվացման, գյուղատնտեսական և այլ նպատակներով)	3.7%	4.8%
Տրանսպորտային միջոցով բերված ջուր	0.3%	6%
Չեմ օգտագործում վերևում թվարկված ոչ մի աղբյուր	2.6%	0.2%


Հաջորդ մի քանի հարցերին պատասխանել են միայն այն հարցվողները, որոնք նշել են, որ օգտագործում են կենցաղային ջրամատակարարման հետևյալ աղբյուրները՝

- Ծորակի ջուր տանը (բնակարանում), ջրամատակարարման ընկերության խողովակաշարից,
- Ջուր ջրամատակարարման ընկերության ընդհանուր ծորակից, որը գտնվում է տնից դուրս,
- Տանը գտնվող սեփական ջրհոր, էլեկտրական ջրի պոմպով կամ առանց դրա,
- Ընդհանուր ջրհոր, էլեկտրական ջրի պոմպով կամ առանց դրա,
- Հարևանի ջրհոր,
- Գետ, լիճ, լճակ և այլ բնական ռեսուրսների ջուր:

Այս հարցվածների կեսի (51%) գնահատմամբ՝ խմելու ջուրը մատակարարվում է գրեթե անընդհատ, իսկ մոտ մեկ երրորդի փորձի համաձայն՝ ամեն օր որոշ ժամանակահատվածով. Նրանց մասնաբաժինը, ում խմելու ջուրը մատակարարվում է շաբաթական մի քանի անգամ, գերազանցում է տասներորդը (13,6%): Հայտնաբերվել է ընդամենը 6 հարցվող, ովքեր նշել են, որ խմելու ջուրը մատակարարվում է ամիսը մեկ անգամ կամ ավելի քիչ հաճախականությամբ (տե՛ս գծապատկեր #13):

Գծապատկեր #13


Ի՞նչ հաճախականությամբ է մատակարարվում խմելու ջուրը: (N=1158)



Սամցխե-Ջավախեթիում խմելու ջրի մատակարարման հաճախականության հետ կապված փորձն ավելի լավ է. հարցվածների մեծամասնությունը (95.2%) նշում է, որ խմելու ջուրը մատակարարվում է գրեթե անընդհատ կամ ամեն օր՝ որոշ ժամանակահատվածով: Քվեմո Քարթլիի դեպքում այդ ցուցանիշը կրճատվել է մինչև 70,7%, և գրեթե յուրաքանչյուր չորրորդը նշում է, որ խմելու ջուր մատակարարվում է շաբաթական մի քանի անգամ (23,6%) (տե՛ս գծապատկեր #14):

Գծապատկեր #14


Ի՞նչ հաճախականությամբ է մատակարարվում խմելու ջուրը: (ըստ տարածաշրջանի)



Նույն հարցվողները խմելու ջրի որակը գնահատել են 5 բալանոց սանդղակով (1 միավորը համապատասխանում է «շատ վատ որակի» կատեգորիային, իսկ 5 միավորը «շատ բարձրորակ» կատեգորիային): Հարցվածների 41,2%-ը խմելու ջուրը գնահատել է որակյալ (4 և 5 միավոր) (Սամցխե-Ջավախեթի՝ 41,4%, Քվեմո Քարթլի՝ 41%), թեև պետք է նշել, որ ավելի քան մեկ երրորդի կարծիքով՝ ջուրն անորակ է (37,6%): Մեկ հինգերորդը չեզոք դիրք է գրավել (տե՛ս գծապատկեր #15):

Գծապատկեր #15


Խնդրում ենք գնահատել 5 բալանոց սանդղակով տարբեր աղբյուրներից ձեր կողմից օգտագործվող խմելու ջրի որակը: (N=1158)



Հաջորդ փուլում բոլոր հարցվողները, որոնք օգտագործել են նշված աղբյուրներից որևէ մեկը կենցաղային ջրամատակարարման համար, գնահատել են, թե որքան է մատակարարված ջուրը բավարար իրենց կենցաղային կարիքները հոգալու համար: Պարզվել է, որ հարցվածների 53.7%-ի գնահատմամբ՝ դա բավարար է (4 և 5 միավոր), իսկ 35.3%-ի դիրքը ընկնում է բացասական գնահատման դաշտ (1 և 2 միավոր): Յուրաքանչյուր տասներորդ հարցվողը գրադեցնում է միջանկյալ դիրք (3 միավոր) (տես գծապատկեր #16):

Գծապատկեր #16

Որքանով է մատակարարված ջուրը բավարար ձեր կենցաղային կարիքները հոգալու համար: (N=1180)



Պարզվել է, որ հարցվածների տնային տնտեսությունների 35,5%-ը չի վճարում ջրի վարձ, 34,9%-ի դեպքում՝ նշված վճարը հաշվարկվում է ըստ հաշվիչի, իսկ քառորդը (25,6%)՝ ըստ ընտանիքի անդամների թվի (3.1%-ը դժվարացել է պատասխանել կամ հրաժարվել է պատասխանել):


Տարածաշրջանների կտրվածքով տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Սամցխե-Ջավախեթիում հարցվածների տնային տնտեսությունների 40%-ը ջրի վարձ չի վճարում, Քվեմո Բարթևից գրեթե յուրաքանչյուր երրորդ հարցվողը նման դիրքորոշում ունի: Այս տարածաշրջանում հարցվածների կեսը ջրի համար գանձվում է ըստ հաշվիչի (49%), իսկ 17.3%-ը՝ ըստ տնային տնտեսությունների/ընտանիքի անդամների թվի: Մյուս կողմից,

Սամցխե-Ջավախեթիում հարցվածների ավելի քան մեկ երրորդը (34%) վճարում է ըստ մարդկանց քանակի, իսկ յուրաքանչյուր հինգերորդը՝ ըստ հաշվիչի (20,5%):

Ջրի վարձ վճարողների մեծամասնությունը նշում է, որ գոյություն ունեցող վճարներն իրենց համար մատչելի են (5 բալանոց սանդղակով՝ 4 և 5 միավոր): Ներկայիս վճարները ոչ մատչելի գնահատողների մասնաբաժինը (9%, 5 բալանոց սանդղակով՝ 1 և 2 միավոր) նույնիսկ տասներորդին չի հասնում, մինչդեռ քառորդից ավելին (27,5%) չեզոք դիրք է գրավում (3 միավոր) (տես գծապատկեր #17):

Գծապատկեր #17

Որքանով է ձեզ համար մատչելի ջրի ներկայիս վարձը: (N=776)




Ոռոգման համակարգ

Ջետազոտությանը մասնակցած մարդկանց մեծամասնությունը (71,6%) նշել է, որ իրենց բնակավայրում չի գործում կենտրոնացված ոռոգման համակարգ (Սամցխե-Ջավախեթի՝ 84,9%, Քվեմո Քարթլի՝ 67,2%): Դրական փորձ ունի միայն 21,8%-ը (Սամցխե-Ջավախեթի՝ 13,6%, Քվեմո Քարթլի՝ 30%): Նրանց 67,6%-ի կարծիքով՝ նշված ոռոգման համակարգը լավ է գործում (4 բալանոց սանդղակով՝ 3 և 4 միավոր) (տես գծապատկեր #18):

Գծապատկեր #18


Որքանով է սարքին գործող ոռոգման համակարգը: (N=246)



Հարցվածների զգալի մասը (44.9%), որոնց բնակավայրում գործում է կենտրոնական ոռոգման համակարգ, գոհ է գործող համակարգից (4 և 5 միավոր՝ 5 բալանոց սանդղակով), նրանցից գրեթե հինգերորդը շատ գոհ է: Մյուս կողմից, հարցվածների ավելի քան մեկ երրորդը (36.6%) դժգոհ է (1 և 2 միավոր՝ 5 բալանոց սանդղակով) (տե՛ս գծապատկեր #19):

Գծապատկեր #19

Որքանով եք գոհ ձեր բնակավայրում առկա ոռոգման համակարգից: (N=246)



Սամցխե-Ջավախեթիում հարցվածների 44,3%-ը գոհ է բնակավայրում առկա ոռոգման համակարգից (4 և 5 միավոր): Նմանատիպ դիրքորոշում ունի Քվեմո Քարթլիում գրեթե նույնքանը՝ 45,2% (ներառում է այն հարցվածներին, որոնց բնակավայրերում գործում է կենտրոնացված ոռոգման համակարգ): Դժգոհողների տեսակարար կշիռը երկու տարածաշրջաններում էլ հավասար է և գերազանցում է մեկ երրորդը (միջինում 36%) (տե՛ս աղյուսակ #19):

Աղյուսակ #19

Որքանով եք գոհ ձեր բնակավայրում առկա ոռոգման համակարգից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=78)	Քվեմո Քարթլի (N=168)
Շատ դժգոհ	13.8%	14.9%
Ավելի շատ դժգոհ, քան գոհ	22.7%	21.8%
Հավասարապես գոհ և դժգոհ	19.3%	15.9%
Ավելի շատ գոհ, քան դժգոհ	33.7%	23.7%
Շատ գոհ	10.5%	21.6%
Հրաժարվում է պատասխանել	-	2.2%


Կոյուղու համակարգ

Չեռագոտությանը մասնակցած մարդկանց մեծամասնությունը (65.1%) նշում է, որ իրենց բնակավայրում չկա կենտրոնական կոյուղու համակարգ: Այս առումով իրավիճակը Քվեմո Քարթլիում ավելի դրամատիկ է (77,9%-ը նշում է տալիս կենտրոնական կոյուղու համակարգի բացակայությունը), քան Սամցխե-Ջավախեթիում (52,4%): Մեկ երրորդին փոքր-ինչ գերազանցում է նրանց տեսակարար կշիռը, ում բնակավայրերում գործում է նշված համակարգը (34,7%) (Սամցխե-Ջավախեթի՝ 47,3%, Քվեմո Քարթլի՝ 22,1%): Եթե կա կոյուղու համակարգ, ապա հարցվածների 89,8%-ի տունը միացված է կենտրոնական կոյուղու համակարգին (Սամցխե-Ջավախեթի՝ 95,6%, Քվեմո Քարթլի՝ 77,3%):

Այն հարցվածների 85,6%-ը, որն օգտվում է կենտրոնական կոյուղու համակարգից՝ նշում է որ համակարգը սարքին է (3 և 4 միավոր՝ 4 բալանոց սանդղակով), և ըստ յուրաքանչյուր տասներորդի՝ համակարգը անսարք է (10,3%) (տես գծապատկեր #20):

Գծապատկեր #20

Ձեր կարծիքով, որքանով է սարքին գործող կենտրոնական կոյուղու համակարգը: (N=384)



Ընդհանուր միտումը պահպանվում է նաև Սամցխե-Ջավախեթիում և Քվեմո Քարթլիում: Չարկ է նշել, որ Սամցխե-Ջավախեթիում կենտրոնական կոյուղու համակարգի սարքին լինելու մասին վկայողների մասնաբաժինը կազմում է 89,3%, իսկ Քվեմո Քարթլիում այն նվազում է մինչև 75,8% (տես աղյուսակ #20):


Աղյուսակ #20

Ձեր կարծիքով, որքանով է լավ գործում առկա կենտրոնական կոյուղու համակարգը: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=276)	Քվեմո Քարթլի (N=108)
Ամբողջովին անսարք է	0.3%	3.5%
Անսարք է	6.1%	17.2%
Սարքին է	57%	72%
Ամբողջովին սարքին է	32.3%	3.8%
Չգիտեմ / Դժվարանում է պատասխանել	4.3%	3.5%

Չարգվածների 71%-ը գոհ է գործող կենտրոնական կոյուղու համակարգից (4 և 5 միավոր 5 բալանոց սանդղակով), այդ թվում՝ 30,9%-ը՝ շատ գոհ (5 միավոր): Դժգոհ հարցվածների տեսակարար կշիռը կազմում է 13.1% (1 և 2 միավոր) (տես գծապատկեր #21):

Գծապատկեր #21

Որքանով եք գոհ կենտրոնական կոյուղու համակարգից: (N=384)



Թեև Սամցխե-Ջավախեթիի (78%) և Քվեմո Քարթլիի (52.4%) հարցվածների մեծամասնությունը գոհ է կենտրոնական կոյուղու համակարգից (4 և 5 միավոր), այնուամենայնիվ, դժգոհ հարցվածների մասնաբաժինը Քվեմո Քարթլիում (26%) Սամցխե-Ջավախեթիի (8.2%) համեմատությամբ զգալիորեն ավելի մեծ է (տես աղյուսակ #21):

Աղյուսակ #21

Որքանով եք գոհ կենտրոնական կոյուղու համակարգից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=276)	Քվեմո Քարթլի (N=108)
Շատ դժգոհ	0.9%	6.4%
Ավելի շատ դժգոհ, քան գոհ	7.3%	19.6%
Հավասարապես գոհ և դժգոհ	12.7%	21.6%
Ավելի շատ գոհ, քան դժգոհ	44.1%	29.7%
Շատ գոհ	33.9%	22.6%
Հրաժարվում է պատասխանել	1.1%	-


Թափոնների հեռացում

Հարցվածների 91,8%-ի գնահատմամբ՝ առկա է իրենց բնակավայրից/թաղամասից (Սամցխե-Ջավախեթի՝ 98,7%, Քվեմո Քարթլի՝ 84,8%) թափոնները հեռացնելու պրակտիկա: Միայն 6,1%-ն է բացասական պատասխան տվել (Քվեմո Քարթլի՝ 12,2%, Սամցխե-Ջավախեթիում բացասական պատասխան չի տրվել) (1,3%-ը հրաժարվել է պատասխանել):

Հարցվածների գրեթե մեկ երրորդը, ում բնակավայրում/թաղամասից հեռացվում է թափոնները, նշում է, որ դա ամենօրյա պրակտիկա է (31.6%): 28,8%-ը նշում է, որ թաղամասից/բնակավայրից աղբը հեռացվում է շաբաթը մեկ անգամ, իսկ 23,6%-ը՝ երկու օրը մեկ: Հարցվածների ավելի քան մեկ տասներորդը (12.9%) դժվարացել է պատասխանել կամ հրաժարվել է պատասխանել (տես գծապատկեր #22):

Գծապատկեր #22

Որքան հաճախ են թափոնները հեռացնում ձեր բնակավայրից/թաղամասից: (N=1095)




Ընդհանուր միտումը պահպանվում է նաև առանձին տարածաշրջանի տեսանկյունից: Երկու տարածաշրջաններում էլ թափոնների հեռացման հաճախականությունը նկարագրող կատեգորիաները ցույց են տալիս հետևյալ արդյունքները`

- Ամեն օր` Սամցխե-Ջավախեթի - 34%, Քվեմո Քարթլի - 28.8%
- Ամեն երկրորդ օրը` Սամցխե-Ջավախեթի - 17%, Քվեմո Քարթլի - 31.3%
- Շաբաթը մեկ անգամ` Սամցխե-Ջավախեթի - 29.7%, Քվեմո Քարթլի - 27.7% (տես գծապատկեր #23)

Գծապատկեր #23


Որքան հաճախ են թափոնները հեռացնում ձեր բնակավայրից/թաղամասից: (ըստ տարածաշրջանի)



Թափոնների հեռացման ծառայությունից օգտվող հարցվածների 73,3%-ը գոհ է նշված ծառայությունից (4 և 5 միավոր 5 բալանոց սանդղակով), որոնցից շատ գոհ է 40,8%-ը (5 միավոր): Դժգոհների մասնաբաժինը չի հասնում նույնիսկ 10%-ի (տես գծապատկեր #24):

Գծապատկեր #24

Որքանով եք գոհ թափոնների հեռացման ծառայությունից: (N=1095)



Հարցվածների 47,8%-ի կարծիքով՝ իրենց մոնիցինգայալիտետում կա աղբավայր: Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանն այս առումով շատ ավելի լավ տեսք ունի (61.9%), քան Քվեմո Քարթլին (31.3%): Հարցվածների մեկ քառորդից ավելին նշում է, որ իրենց մոնիցինգայալիտետում աղբավայր չկա (27.7%): Սամցխե-Ջավախեթիում 21,5%-ը նշում է աղբավայրի բացակայությունը, իսկ Քվեմո Քարթլիում՝ 34,9%-ը: (Հարկ է նշել նաև, որ հարցվածների ավելի քան մեկ հինգերորդը (23,7%) դժվարացել է պատասխանել, իսկ 0,8%-ը հրաժարվել է պատասխանել):


Մաքրման աշխատանքներ

Հետազոտությանը մասնակցած մարդկանց 65.9%-ի փորձի համաձայն՝ իրենց բնակավայրի/թաղամասի փողոցները չեն մաքրում (այս առումով իրավիճակը շատ ավելի վատ է Քվեմո Քարթլիում (79.9%), քան Սամցխե-Ջավախեթիում՝ 51.9%): Հարցվածների միայն մեկ երրորդն է (33,7%) նշում փողոցների մաքրման աշխատանքները (19,5%՝ Քվեմո Քարթլիում և 48%՝ Սամցխե-Ջավախեթիում):

Հարցվածներից, ովքեր նշել են, որ իրենց բնակավայրի/թաղամասի փողոցները մաքրվում են, 42,3%-ը նշել է, որ մաքրվում է ամեն օր, իսկ տասներորդից ավելին ասում է, որ մաքրվում է երկու օրը մեկ (13,9%) կամ շաբաթը մեկ անգամ (11,5%): Հարցվածների 17.3%-ը դժվարացել է որոշակի հաճախականություն նշել (տես գծապատկեր #25):

Գծապատկեր #25


Որքան հաճախ են մաքրվում փողոցները ձեր բնակավայրում/թաղամասում: (N=415)



Ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, թեև Քվեմո Քարթլիում փողոցների մաքրման պրակտիկան ավելի հազվադեպ է (համեմատած Սամցխե-Ջավախեթիի հետ), այն բնակավայրերում/շրջաններում, որտեղ դա արվում է, Քվեմո Քարթլին ավելի լավ տեսք ունի մաքրման հաճախականության առումով՝ 61,5% գնահատում են, որ փողոցների մաքրում տեղի է ունենում ամեն օր, իսկ Սամցխե-Ջավախեթում նշված ցուցանիշը կրճատվում է մինչև 34,5%: Այս տարածաշրջանում հարցվածների ավելի քան մեկ հինգերորդը դժվարանում է որոշակի հաճախականություն սահմանել, և 15,6%-ի մոտ փողոցները մաքրվում են երկու օրը մեկ (տես գծապատկեր #26):

Գծապատկեր #26


Որքան հաճախ են մաքրվում փողոցները ձեր բնակավայրում/թաղամասում: (ըստ տարածաշրջանի)



Մաքրման ծառայությունից օգտվող հարցվածների 74,9%-ը գոհ է ծառայությունից (4 և 5 միավոր՝ 5 բալանոց սանդղակով), իսկ գրեթե հինգերորդը չեզոք դիրք է զբաղում (19,1%, 3 միավոր): Մաքրման ծառայությունից դժգոհ հարցվածների մասնաբաժինը (1 և 2 միավոր 5՝ բալանոց սանդղակով) մի փոքր գերազանցում է 5%-ը (տես գծապատկեր #27):

Գծապատկեր #27

Որքանով եք գոհ մաքրման ծառայությունից: (N=415)



Ե՛վ Սամցխե-Ջավախեթիում (79,2%), և՛ Քվեմո Քարթլիում (64,3%) հարցվածների մեծամասնությունը գոհ է մաքրման ծառայությունից (4 և 5 միավոր): Մյուս կողմից, Քվեմո

Քարթիկում գերակշռում է ծառայությունից դժգոհ հարցվածների մասնաբաժինը (8,9%): Հատկանշական է, որ Սամցխե-Ջավախեթիում հարցվածների մեջ անհատներից և ոչ մեկը ծայրահեղ դժգոհ չէ մաքրման ծառայությունից (1 միավոր) (տես աղյուսակ #22):

Աղյուսակ #22

Որքանով եք գոհ մաքրման ծառայությունից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե- Ջավախեթի (N=291)	Քվեմո Քարթլի (N=124)
Շատ դժգոհ	-	3.2%
Ավելի շատ դժգոհ, քան գոհ	4.1%	5.7%
Հավասարապես գոհ և դժգոհ	16.5%	25.5%
Ավելի շատ գոհ, քան դժգոհ	41.3%	23.9%
Շատ գոհ	37.9%	40.4%
Հրաժարվում է պատասխանել	0.3%	1.2%

Այնուհետև այն հարցվածները, ովքեր դժգոհ են մաքրման ծառայությունից, խոսել են նման վերաբերմունքի պատճառների մասին: Նրանց 42,7%-ը դժգոհ է սպասարկման որակից, գրեթե մեկ երրորդը՝ հիգիենիկ նորմերի պահպանումից (32,6%), իսկ մեկ քառորդը՝ հաճախականությունից (24,7%):

* * *

Որակական հետազոտության շրջանակներում բոլոր ութ մունիցիպալիտետներում անցկացված ֆոկլուս խմբերը բացահայտեցին այն կարծիքը, որ վերջին տարիներին համայնքներում բարելավվել են կոմունալ և ճանապարհային ենթակառուցվածքները: Սակայն, չնայած դրան, բացահայտվեցին խնդիրներ, որոնց լուծումը զգալիորեն կբարելավի տեղի բնակչության ընդհանուր վիճակը:

Գյուղատնտեսությամբ զբաղվողների համար խնդրահարույց է ոռոգման ջրի անսարք համակարգը, ինչը զգալիորեն խոչընդոտում է գյուղատնտեսության զարգացմանը: Սակայն նշվեց նաև, որ աշխատում են այս հարցի լուծման ուղղությամբ, և ոռոգման ջրի խնդիրը մոտ ապագայում հնարավոր կլինի լուծել: Քվեմո Քարթլիում խմելու ջրի խնդիրն ի հայտ է գալիս հատկապես ամռանը: Խնդրահարույց է նաև անկարգ կոյուղու համակարգը, որը որոշ բնակավայրեր էկոլոգիական վտանգի տակ է դնում: Բնակիչները նշեցին, որ հին աղբավայրերը մնացել են առանց հսկողության: Խնդրահարույց է նաև այն, որ նոր աղբավայրը կառուցվել է բնակավայրին մոտ:

Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի Կոդա գյուղում կոմպակտ կերպով բնակվող հարկադիր վտեղահանվածները նշել են, որ դեպի բնակավայր տանող ճանապարհին անբարեկարգ է. Նրանք չեն կարող օգտվել հասարակական տրանսպորտից կամ ստիպված են երկար ճանապարհ անցնել:

Բոլոր ութ մունիցիպալիտետներում ֆոկլուս խմբերում ներգրավված անձինք նշել են, որ հանրային օբյեկտները/տարածքները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Մասնակիցներից ոմանք նշեցին, որ վերջերս կառուցված հասարակական հաստատությունները հարմարեցված են սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց համար, սակայն հարցվողները չգիտեն, թե որքանով են դրանք համապատասխանում գործող

չափանիշներին, քանի որ չեն տեսել հարմարեցված միջավայրն օգտագործող հաշմանդամություն ունեցող անձանց:

«Աղապտացիայի հարցով աշխատանքները արդեն մի քանի տարի ՝ ինչ սկսվել են: Մի քանի շենքեր, միջավայրեր հարմարեցված են, ուղղակի չգիտեմ, թե չափորոշիչներին որքանով են համապատասխանում, հաշմանդամ չեմ տեսել այնտեղ» (32-ամյա կին, աշխատող, Էթնիկ վրացի, Բոլնիսցի):

Մառնեուլիի ֆոկլուս խմբի մասնակից հաշմանդամություն ունեցող հարցվողը, ով «Մոդուս» մասնագիտական ուսումնարանի սան է, նշեց, որ դպրոցը հարմարեցված է հաշմանդամություն ունեցող անձանց համար:


Գլուխ 8. Կլիմայի փոփոխություն և դրանից բխող առողջական խնդիրներ

Հարցումնան միջոցով գնահատվել է կլիմայի փոփոխության վերաբերյալ հարցվածների տեղեկացվածությունը: Ինչպես պարզվեց, նրանց մեծամասնությունը (71%) լսել է ուսումնասիրվող հարցի մասին (Սամցխե-Ջավախեթի՝ 74%, Քվեմո Քարթլի՝ 68%): Համեմատաբար բարձր է անտեղյակ հարցվածների տեսակարար կշիռը, Քվեմո Քարթլիում՝ 30%, իսկ Սամցխե-Ջավախեթիում այս ցուցանիշը նվազել է մինչև 23,6%:

Կլիմայի փոփոխության մասին տեղեկացված հարցվածների միջինը մեկ հինգերորդը վերջին 5 տարում նկատում է երաշտի (22,5%) և տեղումների (անձրև, կարկուտ) (18,9%) աճ իրենց բնակության վայրում: 16,5%-ը վկայում է քամիների հաճախականության մասին, իսկ 8,7%-ը կլիմայի փոփոխության առումով նշում ջրի որակի վատթարացումը (տե՛ս գծապատկեր #28):

Գծապատկեր #28

Վերջին 5 տարվա ընթացքում ձեր բնակության վայրում (քաղաք/մունիցիպալ կենտրոն/ավան/գյուղ) նկատել էք կլիմայի/շրջակա միջավայրի փոփոխության որևէ իրադարձություն: (N=860)



Սամցխե-Ջավախեթիում և Քվեմո Քարթլիում գերիշխող են վերոնշյալ կատեգորիաները, սակայն հարկ է նշել, որ Քվեմո Քարթլիում շրջակա միջավայրի փոփոխությունների մասին տեղեկացված հարցվածների ավելի քան մեկ քառորդի գնահատմամբ՝ վերջին 5 տարիներին երաշտներն աճել են (27.1%) իրենց բնակության վայրում, մինչդեռ Սամցխե-Ջավախեթիում հարցվածների գրեթե մեկ քառորդի գնահատմամբ ավելացել է քամիների հաճախականությունը (24.3%) (տե՛ս աղյուսակ #23):

Աղյուսակ #23

Վերջին 5 տարվա ընթացքում ձեր բնակության վայրում (քաղաք/մունիցիպալ կենտրոն/ավան/գյուղ) նկատե՞լ եք կլիմայի/շրջակա միջավայրի փոփոխության որևէ իրադարձություն: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=448)	Քվեմո Քարթլի (N=412)
Անտառների հատում	4.9%	5.7%
Չողի երոզիա և անապատացում	5.5%	7.2%
Վայրի կենդանիների քանակի կամ տեսակների նվազում	0.9%	0.9%
Բույսերի քանակի կամ տեսակների նվազում	1.3%	4.5%
Ինվազիվ (ներխուժած) նոր տեսակներ (օրինակ՝ մարմարե փայտոջիլ)	3.1%	5.5%
Բնական աղետների հաճախականության աճ (ջրհեղեղներ, սողանքներ, սելավներ)	3.8%	2.2%
Ջրի որակի վատացում	7.1%	10.5%
Երաշտների հաճախականության աճ	18.3%	27.1%
Տեղումների (անձրև, կարկուտ) հաճախականության աճ	19.7%	18.1%
Քամիների հաճախականության աճ	24.3%	8%
Այլ	2.4%	3.3%
Դժվաչանում է պատասխանել/հրաժարվում է պատասխանել	8.7%	7.1%

Տեղեկացված հարցվողները գնահատել են նաև, թե արդյոք կլիմայի փոփոխությունը առողջության հետ կապված բացասական հետևանքներ է առաջացնում իրենց բնակության վայրում: Գնահատման համար օգտագործվել է 5 բալանոց սանդղակ, որի վրա 1 միավորով նշվում է «ընդհանրապես չի առաջացնում» կատեգորիան, իսկ 5 միավորով նշվում է «միանշանակ առաջացնում է» կատեգորիան: Հարցվածների մեծամասնությունը կարծում է, որ շրջակա միջավայրի փոփոխությունները չեն առաջացնում հետևյալ առողջական խնդիրները (1 և 2 միավոր)՝

- Տարբեր տեսակի վարակների տարածում, որոնց կրողները միջատներն ու անողնաշարավորներն են (օրինակ՝ մալարիա և այլն) – 57,2%,
- Վիրուսային հիվանդությունների ծագումը/տարածումը (գրիպ, հեպատիտ C, ջրծաղիկ և այլն)՝ 48,9%,
- Քաղցկողի աճ, որը պայմանավորված է միջավայրի բացասական փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սևուկ, բարձր ջերմություն և այլն) – 31.4%,
- Մահացության - 34.8%:

Մյուս կողմից, յուրաքանչյուր երրորդ հարցվողը կարծում է, որ կլիմայի փոփոխությունը հանգեցնում է սրտային հիվանդությունների (31.9%) և ինսուլտի (31.3%) աճի՝ բացասաբար փոփոխված միջավայրի պատճառով (4 և 5 միավոր) (տես աղյուսակ #24):

Աղյուսակ #24

Ձեր կարծիքով, ձեր բնակության վայրում (քաղաք/մունիցիպալ կենտրոն/ավան/գյուղ) կլիմայի/շրջակա միջավայրի փոփոխությունը առաջացնում է առողջության վրա հետևյալ բացասական հետևանքներից որևէ մեկը: (N=860)	Ը ն դի ա նր ա պ ես չի ա ն ա ջ ա ց ն ու մ	2	3	4	Մ ի ա ն շ ա ն ա կ ա ն ա ջ ա ց ն ու մ է	Դժվ ար անո ւմ է/ հրա ժար վու մ է պա տա սխ անե ւ
Տարբեր տեսակի վարակների տարածում, որոնց կրողները միջատներն ու անողնաշարավորներն են (օրինակ՝ մալարիա և այլն)	30.1 %	27.1 %	16.8 %	6.4 %	8.1%	11.5%
Վիրուսային հիվանդությունների ծագումը/տարածումը (գրիպ, հեպատիտ C, ջրծաղիկ և այլն)	25.2 %	23.8 %	21.3 %	7.3%	11.2 %	11.2%
Սրտի հիվանդությունների աճ, որը պայմանավորված է շրջակա միջավայրի բացասաբար փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սևուևղ, բարձր ջերմություն և այլն)	15%	17.6 %	28.6 %	17.1 %	14.8 %	7%
Ինսուլտների աճ, որը պայմանավորված է շրջակա միջավայրի բացասաբար փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սևուևղ, բարձր ջերմություն և այլն)	13.9 %	16.6 %	28.7 %	18.5 %	12.9 %	9.5%
Քաղցկեղի աճ, որը պայմանավորված է շրջակա միջավայրի բացասաբար փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սևուևղ, բարձր ջերմություն և այլն)	15.4 %	16.1 %	31.5 %	13.6 %	12.2 %	11.3%
Մահացության աճ	15.5 %	19.3 %	26.6 %	13.8 %	11.1 %	13.6%

Տարածաշրջանային տեսանկյունից, հարցվածների մեծամասնության կարծիքով, կլիմայի փոփոխությունը չի առաջացնում վարակների տարբեր տեսակների տարածում (1 և 2 միավոր)՝ Սամցխե-Ջավախեթի - 56,6%, Քվեմո Քարթլի - 57,8%: Նմանատիպ գնահատականներ կան նաև վիրուսային հիվանդությունների դեպքում. հարցվածների հիմնական մասը կարծում է, որ չկան միջավայրի փոփոխություններ, որոնք առաջացնում են նմանատիպ առողջական խնդիրներ՝ Սամցխե-Ջավախեթի - 45,5%, Քվեմո Քարթլի - 52,7%: Տրամաբանական է, որ տարածաշրջանային համատեքստում նույնպես համաձայնությունը համեմատաբար բարձր է այն կատեգորիաների դեպքում, որոնք կապված են փոփոխված միջավայրի հետ, այդ թվում՝ աղտոտված ջուր, օդ, սևուևղ, բարձր ջերմաստիճան և այլն: Ե՛վ Սամցխե-Ջավախեթիում, և՛

Քվեմո Քարթլիում հարցվածների զգալի մասը կարծում է, որ կլիմայի փոփոխությունն առաջացնում է սրտի հիվանդությունների (Սամցխե-Ձավախեթի՝ 32,6%, Քվեմո Քարթլի՝ 31,1%) և ինսուլտի (Սամցխե-Ձավախեթի՝ 32,4%, Քվեմո Քարթլի - 30,1%) աճ (4 և 5 միավոր) (տես աղյուսակ #25):

Աղյուսակ #25

Ձեր կարծիքով, ձեր բնակության վայրում (քաղաք/մուկնիցիպալ կենտրոն/ավան/գյուղ) կլիմայի/չրջակա միջավայրի փոփոխությունը առաջացնո՞ւմ է առողջության վրա հետևյալ բացասական հետևանքները (ըստ տարածաշրջանի)		Ը ն դ հ ա ն ր ա պ ե ս չի ա ն ա ջ ա ց ն ու մ	2	3	4	Մ ի ա ն շ ա ն ա կ ա ն ա ջ ա ց ն ու մ է	Դ ժ վ ա ր ա ն ու մ է / հ ր ա ժ ա ր վ ու մ է պ ա տ ա խ ա ն ել
Տարբեր տեսակի վարակների տարածում, որոնց կրողները միջատներն ու անողնաշարավորներն են (օրինակ՝ մալարիա և այլն)	Սամցխե-Ձավախեթի (N=448)	28.8 %	27.9 %	16%	6.7 %	9.7 %	11%
	Քվեմո Քարթլի (N=412)	31.6 %	26.2 %	17.6 %	6.1%	6.4 %	12%
Վիրուսային հիվանդությունների ծագումը/տարածումը (գրիպ, հեպատիտ C, ջրծաղիկ և այլն)	Սամցխե-Ձավախեթի (N=448)	24.9 %	20.6 %	20.6 %	7.4 %	15%	11.4 %
	Քվեմո Քարթլի (N=412)	25.5 %	27.2 %	22.1 %	7.1%	7.1%	11%
Սրտի հիվանդությունների աճ, որը պայմանավորված է շրջակա	Սամցխե-Ձավախեթի (N=448)	16.2 %	15.7 %	28.8 %	14.8 %	17.8 %	6.7 %

Ձեր կարծիքով, ձեր բնակության վայրում (քաղաք/մուկնիցիպալ կենտրոն/ավան/գյուղ) կլիմայի/շրջակա միջավայրի փոփոխությունը առաջացնո՞ւմ է առողջության վրա հետևյալ բացասական հետևանքները (ըստ տարածաշրջանի)		Ը ն դ հ ա ն ը ա պ ե ս չի ա ն ա շ ա ց ն ու մ	2	3	4	Մ ի ա ն շ ա ն ա կ ա ն ա շ ա ց ն ու մ է	Դ ժ վ ա ր ա ն լ մ է / հ ր ա ժ ա ր վ ու մ է պ ա տ ա ս խ ա ն ե լ
միջավայրի բացասաբար փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սևուկ, բարձր ջերմություն և այլն)	Քվեմո Քարթլի (N=412)	13.7 %	19.6 %	28.4 %	19.6 %	11.5 %	7.3%
Ինտուկտների աճ, որը պայմանավորված է շրջակա միջավայրի բացասաբար փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սևուկ, բարձր ջերմություն և այլն) Քաղցկեղի աճ, որը պայմանավորված է շրջակա միջավայրի բացասաբար փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սևուկ, բարձր ջերմություն և այլն)	Սամցխե-Ջավախեթի (N=448)	15.2 %	17%	26.6 %	17.2 %	15.2 %	8.7 %
	Քվեմո Քարթլի (N=412)	12.5 %	16.2 %	30.9 %	19.9 %	10.3 %	10.3 %
Մահացության աճ	Սամցխե-Ջավախեթի (N=448)	19.3 %	19.5 %	24.7 %	12.1 %	15.7 %	8.7 %


Ձեր կարծիքով, ձեր բնակության վայրում (քաղաք/մուկնիցիպալ կենտրոն/ավան/գյուղ) կլիմայի/շրջակա միջավայրի փոփոխությունը առաջացնո՞ւմ է առողջության վրա հետևյալ բացասական հետևանքները (ըստ տարածաշրջանի)		Ը ն դ հ ա ն ր ա պ ե ս չի ա ն ա շ ա ց ն ու մ	2	3	4	Մ ի ա ն շ ա ն ա կ ա ն ա շ ա ց ն ու մ է	Դ ժ վ ա ր ա ն ու մ է / հ ր ա ժ ա ր վ ու մ է պ ա տ ա ս խ ա ն է
հնտվտների աճ, որը պայմանավորված է շրջակա միջավայրի բացասաբար փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սևուկ, բարձր ջերմություն և այլն)	Քվեմո Քարթլի (N=412)	11.1%	12.3 %	39.1 %	15.2 %	8.4 %	14%
Քաղցկեղի աճ, որը պայմանավորված է շրջակա միջավայրի բացասաբար փոփոխությամբ (աղտոտված ջուր, օդ, սևուկ, բարձր ջերմություն և այլն)	Սամցխե-Ջավախեթի (N=448)	18.2 %	24.5 %	19.6 %	13.5 %	12.8 %	11.5 %
	Քվեմո Քարթլի (N=412)	12.5 %	13.7 %	34.3 %	14.2 %	9.3%	15.9 %

Չարցն ամփոփելիս գնահատվել է, թե հարցվողները որքան կարևոր են համարում կլիմայի փոփոխության խնդիրը իրենց տարածաշրջանի համար: Այն գնահատվել է 5 բալանոց սանդղակով, 1 միավորը ցույց է տալիս «բոլորովին կարևոր չէ» կատեգորիան, իսկ 5 միավորը ցույց է տալիս «շատ կարևոր» կատեգորիան: Չարցվածների մեծամասնությունը (59,8%) կարևոր է համարում կլիմայի փոփոխության խնդիրը (4 և 5 միավոր), այդ թվում 41,3%-ը՝ շատ

կարևոր (5 միավոր): Հարցը ոչ կարևոր գնահատողների տեսակարար կշիռը (12,8%) տասներորդից մի փոքր ավելի է: Իսկ յուրաքանչյուր տասներորդը դժվարանում էր, կամ խուսափում էր պատասխանել (տես գծապատկեր #29):

Գծապատկեր #29


Խնդրում ենք գնահատել, թե որքան կարևոր է կլիմայի/չրջակա միջավայրի փոփոխությունը ձեր տարածաշրջանի համար: (N=860)



Ընդհանուր միտումը պահպանվում է ինչպես Սամցխե-Ջավախեթիում, այնպես էլ Քվեմո Քարթլիում: Սակայն, պետք է նշել, որ կլիմայի փոփոխությունն ավելի էական է Քվեմո Քարթլիի համար, քան Սամցխե-Ջավախեթիի (4 և 5 միավոր)՝ Քվեմո Քարթլի - 71,6%, Սամցխե-Ջավախեթի - 49%: Մյուս կողմից, Սամցխե-Ջավախեթիում մոտավորապես յուրաքանչյուր հինգերորդը հարցվողը կլիմայի փոփոխությունները համարում է աննշան (19,3%), Քվեմո Քարթլիում նշված ցուցանիշը կրճատվել է մինչև 5,7% (տես գծապատկեր #30):

Գծապատկեր #30


Խնդրում ենք գնահատել, թե որքան կարևոր է կլիմայի/չրջակա միջավայրի փոփոխությունը ձեր տարածաշրջանի համար: (ըստ տարածաշրջանի)



Գլուխ 9. Անվտանգություն

Չաչորդ փուլում, գնահատվել է, թե հարցվողների կարծիքով որքանով է իրենց բնակավայրում պաշտպանված բնակչության անվտանգությունը: Գնահատման համար օգտագործվել է 5 բալանոց սանդղակ, որտեղ 1 միավորով նշվում է «ընդհանրապես պաշտպանված չէ» կատեգորիան, իսկ 5 միավորով՝ «լիովին պաշտպանված» կատեգորիան: Ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, մեծամասնությունը (57.7%) կարծում է, որ իրենց բնակավայրում անվտանգությունը պաշտպանված է, նրանց մասնաբաժինը, ովքեր իրենց բնակավայրում բնակչության անվտանգությունը համարում են չպաշտպանված, հավասար է 20%-ի (տե՛ս գծապատկեր #31):

Գծապատկեր #31



Սամցխե-Ջավախեթիում (61,9%) և Քվեմո Քարթլիում (53,5%) հարցվածների մեծամասնությունը կարծում է, որ բնակավայրում պաշտպանված է բնակչության անվտանգությունը (4 և 5 միավոր): Այսպիսով, անպաշտպանվածության զգացումը նկատվում է համեմատաբար քիչ հարցվողների մոտ, թեև հարկ է նշել, որ անպաշտպանվածության զգացումը գերակշռում է Քվեմո Քարթլիում (27.1%) (1 և 2 միավոր): Սամցխե-Ջավախեթիում հարցվածների միայն 13%-ն է նմանատիպ դիրքորոշում ցուցաբերում:

Անվտանգության վերաբերյալ հարցվողների դիրքորոշումը հիմնավորում է այն փաստը, որ, ըստ մեծամասնության, բնակավայրում տարածված չէ՝

- Գողություն/կողոպուտ - 66.3%
- Թմրանյութերի օգտագործում - 58.5%
- Մանր խուլիգանություն - 57.4%
- Ընտանեկան բռնություն - 60.6%
- Վաղաժամ ամուսնություն - 67%

Չարցվածների 38,5%-ի գնահատմամբ՝ իրենց բնակավայրում ակտիվ օգտագործումը հազվադեպ է, իսկ 36,7%-ի կարծիքով՝ ընդհանրապես տարածված չէ: Միջին հաշվով, հարցվածների մեկ տասներորդը դժվարացել է պատասխանել թմրանյութերի օգտագործման և ընտանեկան բռնության տարածվածության մասին (տես աղյուսակ #26):

Աղյուսակ #26

Խնդրում ենք նշել, թե որքանով է տարածված ձեր բնակավայրում...	Տարածված է	Հազվադեպ է	Հաճախակի է	Շատ է տարածված	Հրաժարվում է պատասխանել	Դժվարանում է պատասխանել
Գողություն/կողոպուտ (N=1200)	66.3%	26.1%	5.3%	1.1%	0.3%	0.9%
Թմրանյութերի օգտագործում (N=1200)	58.5%	16.7%	9.1%	4.2%	1%	10.5%
Ալկոհոլի Օգտագործում (N=1200)	36.7%	38.5%	17.3%	4.7%	0.3%	2.5%
Մանր խուլիգանություն (N=1200)	57.4%	32.5%	5.7%	1%	0.2%	3.3%
Ընտանեկան բռնություն (N=1200)	60.6%	23.7%	3.9%	1.6%	0.8%	9.4%
Վաղաժամ ամուսնություն (N=1200)	67%	23.8%	4.7%	1.2%	0.4%	2.8%

Ընդհանուր միտումը պահպանվում է նույնիսկ խնդիրը տարածաշրջանային տեսանկյունից դիտարկելիս: Ե՛վ Սամցխե-Ջավախեթիում, և՛ Բվեմո Բարթիում հարցվածների մեծամասնությունը նկարագրում է, որ իրենց բնակավայրում տարածված է՝

- Գողություն/կողոպուտ՝ Սամցխե-Ջավախեթի - 68.2%, Բվեմո Բարթի - 64.4%
- Թմրանյութերի օգտագործում՝ Սամցխե-Ջավախեթի - 66.9%, Բվեմո Բարթի - 50%
- Մանր խուլիգանություն՝ Սամցխե-Ջավախեթի - 62.1%, Բվեմո Բարթի - 52.7%
- Ընտանեկան բռնություն՝ Սամցխե-Ջավախեթի - 55.7%, Բվեմո Բարթի - 65.4%
- Վաղաժամ ամուսնություն՝ Սամցխե-Ջավախեթի - 67.4%, Բվեմո Բարթի - 66.6%

Ինչ վերաբերում է ալկոհոլային խմիչքների օգտագործմանը, ապա, կարծես թե, այն ավելի տարածված է Բվեմո Բարթիում: Հարցվածների գրեթե մեկ երրորդը (31.1%) նշում է, որ ալկոհոլի օգտագործումը հաճախակի է կամ շատ տարածված է իրենց բնակավայրում: Սամցխե-Ջավախեթիում հարցվածների միայն 12,9%-ն է նշում նման փորձը (տես աղյուսակ #27):

Աղյուսակ #27

Խնդրում ենք նշել, թե որքանով է տարածված ձեր բնակավայրում...		Տարածված է	Հազվադեպ է	Հաճախակի է	Մեծապես տարածված է	Հրաժարվում է պատասխանել	Հստակապես չի պատասխանել
Գողութուն/կողոպուտ	Սամցխե-Ջավախեթի (N=600)	68.2 %	27.3 %	2%	1.2 %	0.4 %	0.9 %
	Զվեմո Բարթլի (N=600)	64.4 %	24.9 %	8.6 %	1.1 %	0.1 %	0.9 %
Թմրանյութերի օգտագործում	Սամցխե-Ջավախեթի (N=600)	66.9 %	19.3 %	3.7%	2.4 %	1.5 %	6.2 %
	Զվեմո Բարթլի (N=600)	50%	14.1 %	14.5 %	6%	0.5 %	14.8 %
Ալկոհոլի օգտագործում	Սամցխե-Ջավախեթի (N=600)	44.7 %	39.6 %	7%	5.9 %	0.5 %	2.3%
	Զվեմո Բարթլի (N=600)	28.7 %	37.4 %	27.6 %	3.6 %	0.1 %	2.6 %
Մանր խուլիգանություն	Սամցխե-Ջավախեթի (N=600)	62.1 %	32%	3.3%	1.1 %	0.1 %	1.4%
	Զվեմո Բարթլի (N=600)	52.7 %	32.9 %	8.1%	0.8 %	0.2 %	5.2%
Ընտանեկան բռնություն	Սամցխե-Ջավախեթի (N=600)	55.7 %	31.8 %	3.9 %	2.8 %	0.8 %	5%
	Զվեմո Բարթլի (N=600)	65.4 %	15.6 %	3.8%	0.4 %	0.8 %	13.9 %
Վաղաժամ ամուսնություն	Սամցխե-Ջավախեթի (N=600)	67.4 %	24.6 %	3.9 %	1.6 %	0.5 %	2%
	Զվեմո Բարթլի (N=600)	66.6 %	23.1 %	5.6 %	0.9 %	0.2 %	3.6 %

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ ըստ հարցվածների՝ քաղաքացիների անվտանգությունը շատ դեպքերում (62,3%) ապահովում է ոստիկանությունը: Գրեթե յուրաքանչյուր երրորդը կարծում է, որ բնակչությունն ինքն է կարևոր դեր խաղում այս գործընթացում (30,2%): Պատասխանի այլ տարբերակները, ինչպիսիք են՝ թաղային քրեական հեղինակություններ, կրոնական առաջնորդներ, ինքը, ոչ ոք, ընդհանուր առմամբ չեն հասնում անգամ 5%-ի: Հարցվածների 4,3%-ը դժվարացել է կամ հրաժարվել է պատասխանել: Ընդհանուր միտումը պահպանվում է հարցն ըստ արածաշրջանների քննարկելիս՝ ոստիկանությունը անվտանգության ապահովման հիմնական ինստիտուտն է, թեև պարզվել է, որ ոստիկանությունը որպես անվտանգության երաշխավոր ավելի հաճախ է անվանվում Քվեմո Քարթլիում (71,2%), քան Սամցխե-Ջավախեթիում (53,5%): Սամցխե-Ջավախեթում բնակչության դերն ավելի ընդգծված է (34,6%), քան Քվեմո Քարթլիում (25,7%): Բացի այդ, Սամցխե-Ջավախեթիում թաղամասի ավագներին ավելի շատ են նշում են որպես անվտանգության այլընտրանքային աղբյուր (3,8%), քան Քվեմո Քարթլիում (0,9%) (տես աղյուսակ #28):

Աղյուսակ #28


Ո՞վ է ապահովում ձեր բնակության վայրում քաղաքացիների անվտանգությունը: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Ոստիկանությունը	53.5%	71.2%
Թաղամասի ավագը	3.8%	0.9%
Թաղային քրեական հեղինակությունը	-	0.1%
Բնակչությունը	34.6%	25.7%
Կրոնական առաջնորդները	0.8%	0.7%
Այլ	0.2%	0.1%
Հրաժարվում է/դժվարանում է պատասխանել	7.2%	1.3%

Գլուխ 10. Էլեկտրոնային ծառայություններ

Հետազոտության հաջորդ փուլում գնահատվել է պետական և մունիցիպալ էլեկտրոնային ծառայություններից օգտվելու պրակտիկան: Ինչպես պարզվում հարցվածների մեծամասնությունը (90,4%) չի օգտվում պետական էլեկտրոնային ծառայություններից (կադաստրային տվյալների բազա, գույքի/եկամուտի մասին տեղեկատվություն և այլն) (Սամցխե-Ջավախեթի՝ 90,3%, Քվեմո Քարթլի՝ 90,4%), իսկ գրեթե յուրաքանչյուր տասներորդն օգտվում է: Պետական էլեկտրոնային ծառայություններից օգտվողների 82,8%-ը գոհ է մատուցվող ծառայություններից (4 և 5 միավոր՝ 5 բալանոց սանդղակով): Հետաքրքիր է, որ հարցվածներից և ոչ մեկը շատ դժգոհ չէր պետական էլեկտրոնային ծառայություններից: Համեմատաբար դժգոհ են միայն 2 հարցվողներ (1.3%) (տե՛ս գծապատկեր #32), և պատճառն այն է, որ պորտալն օգտագործելը դժվար է, այն կայուն չի գործում, թարմացված չէ:

Գծապատկեր #32

Որքանով եք գոհ պետական էլեկտրոնային ծառայություններից: (N=115)



Երկու տարածաշրջանում էլ հարցվածների մեծամասնությունը գոհ է պետական էլեկտրոնային ծառայություններից, թեև Սամցխե-Ջավախեթի ցուցանիշն ավելի բարձր է (4 և 5 միավոր)՝ 89,3%, քան Քվեմո Քարթլին՝ 76,5%: Կարևոր է նաև, որ համեմատաբար դժգոհ մարդիկ միայն Քվեմո Քարթլիում են (2.7%), Սամցխե-Ջավախեթիում նման պատկեր չի բացահայտվել (տես աղյուսակ #29):

Աղյուսակ #29

Որքանով եք գոհ պետական էլեկտրոնային ծառայություններից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=60)	Քվեմո Քարթլի (N=55)
Չատ դժգոհ	-	-
Ավելի շատ դժգոհ, քան գոհ	-	2.7%
Չափազանց գոհ և դժգոհ	10.7%	17.1%
Ավելի շատ գոհ, քան դժգոհ	55.2%	23.4%
Չատ գոհ	34%	53%
Հրաժարվում է / դժվարանում է պատասխանել	-	3.7%

Ինչպես պետական էլեկտրոնային ծառայություններից, հարցվածների մեծ մասը (96.4%) չի օգտվում նաև մունիցիպալ էլեկտրոնային ծառայություններից: Միայն 3,2%-ն ունի այս ծառայությունից օգտվելու փորձ: Այս փոքր խմբի մոտ կեսը (47.6%) ծառայություններ ստանալու համար օգտվել է քաղաքապետարանի կայքից, իսկ հինգերորդից ավելին՝

մունիցիպալիտետի սակրեբուլոյի կայքից (22.6%): 29,7%-ը դժվարացել է կոնկրետ աղբյուր նշել:

Մունիցիպալ էլեկտրոնային ծառայություններից օգտվելու առումով երկու տարածաշրջաններում էլ քիչ փորձ ունեն՝ Սամցխե-Ջավախեթի - 96,9%, Քվեմո Քարթլի - 95,9%: Սակայն, ինչ վերաբերում է մունիցիպալ էլեկտրոնային ծառայություններ ստանալու համար անհրաժեշտ աղբյուրների օգտագործմանը, ապա տարածաշրջանների միջև տարբերվող փորձ կա. եթե Սամցխե-Ջավախեթիում ծառայություններից օգտվողների 66,1%-ը օգտվել է քաղաքապետարանի կայքից, իսկ 30,3%-ը՝ սակրեբուլոյի կայքից, Քվեմո Քարթլիում մեծամասնությունը ներկայացնում են նրանք, ովքեր դժվարացել են կոնկրետ աղբյուր նշել (54,1%): Մյուս կողմից, այս տարածաշրջանի հարցվածների 30.4%-ը օգտվել է քաղաքապետարանի կայքից, իսկ 15.5%-ը՝ սակրեբուլոյի կայքից:

Քաղաքային էլեկտրոնային ծառայություններից օգտվողների մեծամասնությունը (64.1%) գոհ է մատուցվող ծառայություններից, այդ թվում՝ 25.1%-ը շատ գոհ: Մեկ երրորդից ավելին չէզոք դիրք է գրավում և նշում, որ նրանք հավասարապես գոհ են և դժգոհ:


Գլուխ 11. Մասնակցություն մունիցիպալիտետի կառավարմանը և հանրային գործունեությանը

Քաղաքացիների ներգրավվածությունը տեղական ինքնակառավարման մակարդակով որոշումների կայացման գործընթացում

Հարցման արդյունքում պարզվել է, որ հարցվածների մի մասի (30.4%) կարծիքով, տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացն արձագանքում է քաղաքացիների պահանջներին և կարիքներին (4 և 5 միավոր 5 բալանոց սանդղակով): Սակայն, պետք է նշել, որ գրեթե նույնքան հարցվածներ (26.8%) բացասական են գնահատում ներկա իրավիճակը և կապ չեն տեսնում ռորոշումների և կարիքների միջև (1 և 2 միավոր) (տե՛ս գծապատկեր #33):

Գծապատկեր #33

Որքանով է տեղական մակարդակով որոշումների կայացման գործընթացը արձագանքում քաղաքացիների պահանջներին և կարիքներին: (N=1200)



Տարածաշրջանային կտրվածքով բացահայտվում են տարբեր փորձառություններ: Եթե Սամցխե-Ջավախեթիում հարցված բնակչության ավելի քան մեկ երրորդը (36,7%) խոսում է տեղական ընդունված որոշումների և քաղաքացիների պահանջների համապատասխանության մասին, ապա Քվեմո Քարթլիում ավելի բացասական գնահատական է բացահայտվել՝ 37,3%-ը կարծում է, որ ընդունված որոշումները չեն բավարարում բնակչության կարիքները (տե՛ս աղյուսակ 30):

Աղյուսակ #30

Որքանով է տեղական մակարդակով որոշումների կայացման գործընթացը արձագանքում քաղաքացիների պահանջներին և կարիքներին: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Ընդհանրապես չի արձագանքում	5.4%	14.7%
Ավելի շատ չի արձագանքում, քան արձագանքում է	10.9%	22.6%
Հավասարապես արձագանքում է և չի արձագանքում	29.3%	21.8%
Ավելի շատ արձագանքում է, քան չի արձագանքում	26.5%	19.9%
Լիարժեք արձագանքում է	10.2%	4.2%
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	17.7%	16.7%

Հարցվողները սահմանել են, թե տեղական ինքնակառավարման մարմինները որ ուղղությամբ պետք է բարելավեն աշխատանքը՝ ավելի լավ բավարարելու իրենց կարիքները: Առաջատար դիրքերը զբաղեցրել են հետևյալ կատեգորիաները.

- Ավելի հաճախ հանդիպումներ կազմակերպել բնակչության հետ - 25.2%
- Ավելի շատ գումար հատկացնել մունիցիպալիտետի խնդիրների լուծման համար - 27.3%
- Բնակչությանը տեղեկացնել ընթացիկ գործընթացների մասին - 14.8%

Մյուս անվանված առանձին ուղղությունները նույնիսկ 10%-ի չեն հասնում: Մոտ յուրաքանչյուր տասներորդ հարցվողը հատկապես կարևոր է համարում աշխատողների որակավորման բարձրացումը: Իսկ 6,3%-ը կարծում է, որ որոշումներ կայացնելիս անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել տարեցների կարիքներին (տե՛ս աղյուսակ #31):

Աղյուսակ #31

Ո՞ր ոլորտներում պետք է տեղական ինքնակառավարման մարմինները բարելավեն իրենց աշխատանքը՝ ձեռ կարիքները ավելի լավ բավարարելու համար: (N=1200)	
Ավելի հաճախ հանդիպումներ կազմակերպել բնակչության հետ	25.2 %
Ավելի շատ գումար հատկացնել մունիցիպալիտետի խնդիրների լուծման համար	27.3 %
Աշխատողների որակավորման բարձրացում	9.1%
Բնակչությանը տեղեկացնել ընթացիկ գործընթացների մասին	14.8 %
Որոշումների կայացման հարցում պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին	5.4%

Ո՞ր ոլորտներում պետք է տեղական ինքնակառավարման մարմինները բարելավեն իրենց աշխատանքը՝ ձեր կարիքները ավելի լավ բավարարելու համար: (N=1200)	
Որոշումներ կայացնելիս ավելի շատ ուշադրություն դարձնել փոքրամասնությունների կարիքներին (Էթնիկ, կրոնական, սեռական):	2.9%
Որոշումներ կայացնելիս է ավելի մեծ ուշադրություն դարձնել կանանց կարիքներին	2.5%
Որոշումներ կայացնելիս ավելի մեծ ուշադրություն դարձնել տեղահանվածների կարիքներին	1.2%
Որոշումներ կայացնելիս ավելի մեծ ուշադրություն դարձնել տարեցների կարիքներին	6.3%
Այլ	0.6%
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	4.7%

Ընդհանուր միտումը պահպանվում է նաև տարածաշրջանային համատեքստում: Գերիշխող կատեգորիաները, որոնց ուղղությամբ պետք է բարելավվի տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը, երկու տարածաշրջանների դեպքում էլ նույն են.

- Ավելի հաճախ հանդիպումներ կազմակերպել բնակչության հետ՝ Սամցխե-Ջավախեթի - 24.3%, Բվեմո Բարթլի - 26%
- Ավելի շատ գումար հատկացնել մունիցիպալիտետի խնդիրների լուծման համար՝ Սամցխե-Ջավախեթի - 29.1%, Բվեմո Բարթլի - 25.7%
- Բնակչությանը տեղեկացնել ընթացիկ գործընթացների մասին՝ Սամցխե-Ջավախեթի - 14%, Բվեմո Բարթլի - 15.5% (տես աղյուսակ #32).

Աղյուսակ #32


Ո՞ր ոլորտներում պետք է տեղական ինքնակառավարման մարմինները բարելավեն իրենց աշխատանքը՝ ձեր կարիքները ավելի լավ բավարարելու համար: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Բվեմո Բարթլի (N=600)
Ավելի հաճախ հանդիպումներ կազմակերպել բնակչության հետ	24.3%	26%
Ավելի շատ գումար հատկացնել մունիցիպալիտետի խնդիրների լուծման համար	29.1%	25.7%
Աշխատողների որակավորման բարձրացում	9%	9.3%
Բնակչությանը տեղեկացնել ընթացիկ գործընթացների մասին	14%	15.5%
Որոշումների կայացման հարցում պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին	5.5%	5.3%
Որոշումներ կայացնելիս ավելի շատ ուշադրություն դարձնել փոքրամասնությունների կարիքներին (Էթնիկ, կրոնական, սեռական):	3.5%	2.4%
Որոշումներ կայացնելիս է ավելի մեծ ուշադրություն դարձնել կանանց կարիքներին	1.3%	3.5%
Որոշումներ կայացնելիս ավելի մեծ ուշադրություն դարձնել տեղահանվածների կարիքներին	1.4%	1.1%
Որոշումներ կայացնելիս ավելի մեծ ուշադրություն դարձնել տարեցների կարիքներին	4.2%	8.2%
Այլ	0.3%	0.8%

Ո՞ր ոլորտներում պետք է տեղական ինքնակառավարման մարմինները բարելավեն իրենց աշխատանքը՝ ձեր կարիքները ավելի լավ բավարարելու համար: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	7.4%	2.4%

Հարցվողները տեղական ինքնակառավարման որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների ներգրավվածությունը գնահատել են 5 բալանոց սանդղակով, որով 1 միավորը համապատասխանում է «ընդհանրապես չեն մասնակցում» կատեգորիային, իսկ 5 միավորը՝ «լիարժեք մասնակցում են» կատեգորիային: Պարզվել է, որ, ըստ հարցվածների 40%-ի, քաղաքացիները չեն մասնակցում այս գործընթացին (1 և 2 միավոր): Գրեթե մեկ քառորդն արտահայտում է հակառակ կարծիքը և կարծում է, որ քաղաքացիներն ակտիվորեն ներգրավված են (4 և 5 միավոր): Ակտիվության հարաբերական պակասի մասին կարող է վկայվել նաև այն փաստը, որ հարցվածների մոտ մեկ հինգերորդը (18%) դժվարացել է կրկրեստ դիրքորոշում ընտրել կամ հրաժարվել է պատասխանել (տես գծապատկեր #34):

Գծապատկեր #34

Որքանով են քաղաքացիները մասնակցում տեղական ինքնակառավարման մակարդակով որոշումների կայացման գործընթացին: (N=1200)



Բացահայտվել է, որ Քվեմո Քարթլիում, Սամցխե-Ջավախեթիի համեմատ, տեղական ինքնակառավարման որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների ներգրավվածությունը զգալիորեն ցածր է: Եթե Սամցխե-Ջավախեթիում միայն 26,7%-ն է նշում, որ բնակչությունը չի մասնակցում նշված գործընթացին, ապա Քվեմո Քարթլիում ցուցանիշն աճում է մինչև 53,4%, և միայն 13,1%-ն է մասնակցությունը դրական գնահատում (տե՛ս աղյուսակ #33):

Աղյուսակ #33

Որքանով են քաղաքացիները մասնակցում տեղական ինքնակառավարման մակարդակով որոշումների կայացման գործընթացին: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Ընդհանրապես չեն մասնակցում	7.6%	26.6%
Ավելի շատ չեն մասնակցում, քան մասնակցում են	19%	26.8%
Հավասարապես մասնակցում են և չեն մասնակցում	19.2%	17.7%
Ավելի շատ մասնակցում են, քան չեն մասնակցում	24.4%	11.2%
Լիարժեք մասնակցում են	9.6%	1.9%
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	20%	15.8%

Ջետազոտության շրջանակներում առանձին գնահատվել է, թե որքանով է ՏԻՄ-ը կենտրոնացած որոշումների կայացման գործընթացում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածության մեծացման վրա: Ինչպես պարզվել է, հարցվածների կարծիքով, նմանատիպ նպատակներով միջոցառումներ հիմնականում չեն անցկացվում (33,6%): Մեկ քառորդից ավելին (27,1%) վկայում է դրական փորձի մասին: Սակայն պետք է նշել, որ հարցվածների 39,3%-ը հրաժարվել է պատասխանել, կամ դժվարացել է պատասխանել (դժվարանում եմ պատասխանել՝ 37,8%):

Տարածաշրջանային տեսանկյունից տվյալները ցույց են տալիս, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացում ազգային փոքրամասնությունների մասնակցության առումով իրավիճակն ավելի լավ է Սամցխե-Ջավախեթիում (26,7%), քան Քվեմո Բարթլիում (40,4%): Բացի այդ, Սամցխե-Ջավախեթիում ավելի շատ հարցվածներ են դժվարացել իրենց կարծիքն արտահայտել այս հարցի վերաբերյալ (46,6%), քան Քվեմո Բարթլիում՝ 31,9%:

Հարցումը ցույց է տալիս, որ հարցվածների 78,6%-ը չի լսել տեղական բիզնեսը խթանող պետության գործունեության մասին (Սամցխե-Ջավախեթի՝ 81,8%, Քվեմո Բարթլի՝ 75,4%), միայն մեկ հինգերորդն է իրազեկված (19,2%), 2%-ը հրաժարվել է պատասխանել: Այնուհետև, նման գործունեության մասին տեղեկություն ունեցող անձանց շրջանում պարզվեց, թե արդյոք նրանք լսել են կանանց տնտեսական հզորացմանն ուղղված ծրագրերի/գործունեության մասին: Ինչպես պարզվել է, դրա մասին լսել է միայն 11%-ը (88,6%-ը տեղեկություն չունի) և որպես նմանատիպ նախագծեր ընդհանուր առմամբ անվանվում են հետևյալը՝ ագրոլուվարներ, «Արտադրիչ Վրաստանում», «Տասո» հիմնադրամ: Քվեմո Բարթլիում կանանց տնտեսական հզորացմանն ուղղված նախագծերի իրազեկվածությունը (15,6%) ավելի բարձր է, քան Սամցխե-Ջավախեթիում (4,5%):

Հարցվածների մասնաբաժինը, ովքեր լսել են հաշմանդամություն ունեցող անձանց տնտեսական հզորացմանն ուղղված բիզնեսի խթանման գործունեության մասին, շատ ավելի փոքր է (4%) (Սամցխե-Ջավախեթի՝ 4,4%, Քվեմո Բարթլի՝ 3,8%): Որպես կոնկրետ ծրագիր կրկին անվանվեց «Արտադրիչ Վրաստանումը»: Բացի այդ, առանձին հարցվողներից մեկը նշել է բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու և ընդհանրապես ներառական կրթության առավելությունները:

Ինչպես պարզվում է, պետությունից բիզնեսի խթանման գործունեության մասին տեղեկացված հարցվածների միայն 6,5%-ն է (Սամցխե-Ջավախեթ՝ 2,1%, Քվեմո Բարթլի՝ 9,6%) լսել էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների տնտեսական հզորացմանն ուղղված ծրագրերի/նախագծերի մասին (93,2% չունի նման տեղեկություն): Մասնավորապես, կան լեզուների ուսուցման ծրագրեր, տարբեր բիզնեսների մեկնարկի աջակցություն, գործվաշքների ձեռնարկության ֆինանսավորում, գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ ֆինանսավորման տրամադրում:

* * *

Ինչպես քանակական հետազոտությունների, այնպես էլ որակական հետազոտության, մասնավորապես ֆոկուս խմբերի խնդիրներից մեկն էր պարզել, թե որքանով է բնակչությունը մասնակցում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության իրականացմանը: Նշենք, որ բոլոր ֆոկուս խմբերում կային մարդիկ, ովքեր ոչինչ չէին լսել տեղական

ինքնակառավարման մարմինների գործունեությանը մասնակցության ձևերի մասին: Օրինակ՝ այն մասին, որ թույլատրվում է մասնակցել սակրեբուլոյի նիստին, հարցեր տալ, մասնակցել բյուջեի վերանայմանը և պետիցիայի կազմմանը և այլն:

«Ես անձամբ կարծում էի, որ միայն այնտեղ աշխատող մարդիկ կարող են մասնակցել, և հիմա առաջին անգամ եմ դա ձեզնից լսում» (30-ամյա կին, ինքնազբաղված, էթնիկ վրացի, Ախալցխիտ):

Մասնակիցների մի մասը չի տեսնում տեղական իշխանությունների պատրաստակամությունն ու ցանկությունը՝ բնակչությանը ներգրավելու որոշումների կայացման գործընթացում: Սրա պատճառն այն է, որ բնակչության ներգրավվածությունը կապված է գործընթացի լրացուցիչ ծանրաբեռնվածության և ձգձգման հետ, որից ՏԻՄ-ը փորձում է խուսափել:

Ֆոկուս խմբերի մասնակիցները խոսեցին տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը երիտասարդների ներգրավվածության կարևորության մասին: Ինչպես նշվեց, իրենց համայնքներում երիտասարդների վիճակը խիստ մտահոգիչ է: Մասնակիցները լսել են քաղաքապետարանում գործող երիտասարդական խորհուրդների մասին, սակայն դրանց գործառույթների մասին տեղեկություն չունեն:

Չետաքրքիր էր ֆոկուս խմբերի մասնակիցներից լսել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը բնակչության ներգրավվածության պակասի պատճառները: Տեղեկատվության բացակայությունը համարվում էր չմասնակցելու հիմնական պատճառը: Օրինակ՝ սակրեբուլոյի նիստերի մասին տեղեկություն են ստանում փաստից հետո, ոչ թե նախօրոք, երբ նախատեսված է նիստը՝ *«Ֆեյսբուքի էջում էլ ոչինչ չկա: Նայում եմ արդեն անցկացված նիստերի լուսանկարները» (30 տարեկան կին, ինքնազբաղված, էթնիկ վրացի, Ախալցխիտ):*

Քաղաքացիները տեղեկություն չունեն իրենց իրավունքների մասին, մասնավորապես, թե ինչպես և ինչ ձևերով կարող են ներգրավվել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը:

Ֆոկուս խմբերի որոշ մասնակիցներ թերահավատորեն են վերաբերվում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը բնակչության մասնակցությանը: Նրանց գնահատմամբ՝ մասնակցությունը կրում է ֆորմալ բնույթ և դժվար է իրական ազդեցություն ունենալ: Որպես չներգրավվածության ևս մեկ պատճառ նշվեց նիհիլիզմը: Բնակչության շրջանում տարածված է այն միտքը, որ իշխանությունն է առաջատարը, և նա ավելի լավ գիտի, թե ինչպես վարվել. *«Այսպիսի կարծիք կա, որ կառավարությունը ավելի լավ գիտի և ես ինչո՞ւ պիտի խառնվեմ» (32 տարեկան տղամարդ, աշխատող, էթնիկ վրացի, Թեթրիծղարո):*

Բնակչության չներգրավվածության որպես մեկ այլ պատճառ նշվում էր ժամանակի սղությունը: Մասնակիցների այս հատվածը կարծում է, որ ժամանակ և հնարավորություն չունի ակտիվ լինելու: Հատկապես խոցելի վիճակում գտնվող հարցվածները նշել են, որ, հաշվի առնելով իրենց սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, առօրյա հոգսերից ելնելով մունիցիպալիտետի գործունեությամբ զբաղվելու ոչ հնարավորություն ունեն, ոչ էլ մոտիվացիա:

Ֆոկուս խմբերի մասնակիցները կարծիք հայտնեցին, որ կառավարության ներկայացուցիչների հետ միասին անհրաժեշտ է հասարակական կազմակերպությունների ակտիվացումը՝ բնակչության շրջանում տեղական ինքնակառավարմանը մասնակցելու հետաքրքրություն

առաջացնելու համար. *«Անհրաժեշտ է բնակչությանը խորախուսել և ցույց տալ, որ նրանց մասնակցությունը կարող է արդյունքի բերել: Պետք է ակտիվացնել կազմակերպությունները»* (22 տարեկան տղամարդ, աշխատող, էթնիկ վրացի, Դմանխի): Հատկանշական է, որ գյուղական բնակչության ներգրավվածության կարևոր խոչընդոտներից է անվանվել կենտրոնից հեռավորությունը:

Ինչպես ցույց են տալիս ֆոկուս խմբերի արդյունքները, բնակչության այն հատվածը, որը հետաքրքրված է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությամբ և ցանկանում է մասնակցել, հիմնականում հետաքրքրված է առողջապահական ծառայություններով և ենթակառուցվածքային խնդիրներով: Այդպիսի խնդիրներն են, օրինակ՝ պուրակի կառուցում, ճանապարհային ենթակառուցվածքների կազմակերպում, սպորտային դահլիճների կառուցում, ջրահեռացման համակարգերի կազմակերպում և այլն: Սա հաշվի առնելով, կարելի է ասել, որ բնակչությունը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը կապում է առողջապահական և ենթակառուցվածքային խնդիրների լուծման հետ:

Էթնիկ փոքրամասնությունների խմբերում լեզվական խոչընդոտը և ընդհանուր առմամբ ինտեգրման ցածր աստիճանը կապվել են որպես տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը ներգրավվածության կարևոր լրացուցիչ գործոն, որը նպաստում է հասարակական կյանքից դուրս մնալուն. *«Այնպիսի միջավայր է ստեղծվել, որ բոլորը մտածում են, որ այստեղ նրանց տեղը չէ»* (37-ամյա տղամարդ, աշխատող, էթնիկ ադրբեջանցի, Գարդաբանի): Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների շրջանում կարծիք է հնչել, որ հիմնականում բնակչության այն հատվածն է ներգրավված և ակտիվ, որը մոտ է իշխանությանը, իսկ չեզոք և քննադատական մասի համար տեղական իշխանությունների կողմից ներգրավվածության խթանում չկա:

Հատկանշական էս, որ ֆոկուս խմբերին մասնակցող էթնիկ ադրբեջանցիներից մի քանիսը առցանց ստորագրահավաք են ստորագրել, որի նպատակն է իսլամի կրոնական տոնը՝ Կուրբան-Բայրամը ոչ աշխատանքային օր հայտարարել:

Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները խորացված հարցազրույցների շրջանակներում տարբեր կերպ են գնահատում բնակչության ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում՝ ըստ տարածաշրջանների և մոնիցինգայալիտետների: Օրինակ՝ Ծալկիայի քաղաքապետարանի ներկայացուցիչը կշռել է, որ իրենց մոնիցինգայալիտետում բնակչությունը շատ ակտիվ է և, եթե տեղեկություն ունի, մասնակցում է բոլոր գործընթացներին, մինչդեռ, ըստ Բոլնիսիի քաղաքապետարանի ներկայացուցչի, իրենց մոնիցինգայալիտետում բնակչությունը պասիվ է և հիմնականում չի մասնակցում որոշումների կայացմանը: Հարցվողի կարծիքով՝ պասիվությունը հատկապես բնորոշ է էթնիկ փոքրամասնություններին և կանանց. *«Մենք շատ պասիվ բնակչություն ունենք: Ծատ դեպքերում նրանք չեն սիրում ներգրավվել որոշումների կայացման գործընթացում: Այստեղ կան էթնիկ փոքրամասնությունների խմբեր և կանայք, նրանք ներգրավված չեն որոշումների կայացման գործընթացում»* (քաղաքապետի ներկայացուցիչ Բոլնիսից):

Քաղաքացիների ներգրավվածության հարցում տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական սեկտորի ներկայացուցիչների դիրքորոշումները տարբեր են: Մոնիցինգայալ ծառայության ներկայացուցիչների խոսքով, վերջին երեք տարիներին բնակչությունն ավելի ակտիվացել է որոշումների կայացման գործընթացին մասնակցելու առումով, մինչդեռ

քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարծում են, որ այս ուղղությամբ եական փոփոխություններ չեն նկատվել: Չներգրավվելուն նպաստում է բնակչության շրջանում տեղեկատվության պակասը կամ տեղեկատվության ուշ տրամադրումը:

«Վերջին տարիներին ընդհանրապես ոչինչ չի փոխվել, դեռ նույնն է: Երբեք տեղեկություն չկա կոնկրետ հանդիպումների մասին, և ինչպես պիտի դա հետաքրքրի մարդուն: Սովորաբար նիստի մասին գրում են վերջին պահին» («Ժողովրդավարական ներգրավվածության կենտրոն» - Մառնետլի):

Ըստ Բվեմո Քարթլիի շրջանում աշխատող սոցիալական աշխատողների՝ տեղական իշխանության և բնակչության միջև կապ կա: Քաղաքապետարանի ներկայացուցիչները հանդիպում են բնակչությանը և ծրագրեր իրականացնում՝ հաշվի առնելով նրանց կարիքները, թեև ծրագրերի քանակը սահմանափակ է, քանի որ մուկիցիպալիտետի բյուջեի սղության պատճառով այն հնարավորություն չունի լուծելու բնակչությանը հուզող բոլոր խնդիրները:

«Չեմ կարող ասել, որ ՏԻՄ ներկայացուցիչները չեն ընդառաջում բնակչությանը: Որոշումներ ընդունելիս քիչ թե շատ հաշվի է առնվում բնակչության շահը: Բյուջեից շատ ծրագրեր հնարավոր չէ ֆինանսավորել, բնակչությունն է ընտրում, թե որն է ավելի անհրաժեշտ, իսկ հետո մուկիցիպալիտետը ֆինանսավորում է ընտրված նախագիծը » (սոցիալական աշխատող):

Ինչպես տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անդամները կարծում են, որ որոշումների կայացման գործընթացում բնակչության ներգրավվածությունը մեծացնելու համար, կարևոր է բնակչությանը տրամադրել համապատասխան տեղեկատվություն: Հարցվածների կարծիքով՝ այս նպատակին հասնելու կարևոր գործիք են հանդիսանում ընդհանուր ժողովները, որոնք պետք է դառնան բնակչության հետ ակտիվ շփման հիմնական հարթակը:

Գարդաբանիի մուկիցիպալիտետի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչը նշել է, որ վրացերենի չիմացությունը կամ անբավարար իմացությունը խոչընդոտում է որոշումների կայացման գործընթացում հասարակության ներգրավվածության աճին: Իսկ, ըստ «Տոլերանտի» ասոցիացիայի ներկայացուցչի, բնակչությունը չունի այն զգացումը, որ իրենց կարծիքը հաշվի կառնվի տեղական իշխանության կողմից:

«Բնակչությունը կարծում է, որ կառավարությունը բյուջեն պատրաստում է այնպես, ինչպես ցանկանում է: Իշխանությունները զարմանում են, թե ինչու բնակչությունը չի գալիս հանդիպումների: Սա տեղեկատվության պակասի պատճառով է, ոչ ոք բնակչությանը ամբողջական տեղեկատվություն չի տրամադրում» («Տոլերանտի» ասոցիացիա - Սամցխե-Ջավախեթի):

Ախալցխիսեյի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների խոսքով՝ բնակչության իրազեկվածությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ավելի ակտիվ հանդիպումներ կազմակերպել գյուղերի լիազորների կողմից, ինչպես նաև ակտիվորեն օգտագործել լրատվական աղբյուրները (այդ թվում՝ սոցիալական ցանցերը) տեղեկատվության տարածման համար: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների խոսքով, քաղաքացիների ներգրավվածությունը մեծացնելու համար կարևոր է, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լինի ցանկություն/կամք, որպեսզի բնակչությունը մասնակցի որոշումների կայացմանը և համապատասխան քայլեր

ձեռնարկի այդ ուղղությամբ: Մառնեուլիի քաղաքացիական ներգրավվածության կենտրոնի ներկայացուցիչը նշեց, որ տեղական իշխանությունը պասիվ է քաղաքացիներին մոբիլիզացնելու առումով, իր համար հարմար է որոշումներ կայացնել նեղ շրջանակում: Ըստ հարցվողի՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները հանդիպումների մասին ժամանակին հայտարարություններ չեն անում և միայն նեղ շրջանակի են տեղեկատվություն փոխանցում:

«Ինքնակառավարումը կարող է ավելի պատրաստակամ լինել բնակչությանը գործընթացներին ներգրավելու համար: Չգիտեն ոնց անեն, միգուցե չեն էլ ուզում, նախօրոք չեն ասում, որ այս ու այն օրը հանդիպում է լինելու, եթե ասում են, միայն նեղ շրջապատին են ասում, ոչ թե բոլորին» («Ժողովրդավարական ներգրավվածության կենտրոն» - Մառնեուլի):

Թեթիծղարոյի քաղաքապետարանի ներկայացուցչի խոսքով, բնակչության ներգրավվածությունը մեծացնելու նպատակով մոնիցիպալիտետի աջակցությամբ ստեղծվել է երիտասարդական կենտրոն, որն իրականացնում է կրթամշակութային միջոցառումներ: Ախալցխիսեյի քաղաքապետարանի ներկայացուցչի խոսքով՝ մոնիցիպալիտետում գործում է գեներային բաժին, որը նպաստում է կանանց տնտեսական հզորացմանը, իրավունքների մասին իրազեկվածության բարձրացմանն ու ներգրավվածության բարձրացմանը: Ըստ հարցվողի՝ նշված գործունեությանը ակտիվորեն մասնակցում են նաև հասարակական կազմակերպությունները. «Մենք ունենք գեներային բաժին, որը բավականին ակտիվ է: Այն անցնում է գյուղով, քաղաքով, ամենուր և տարբեր տեսանկյուններից տեղեկատվություն է տրամադրում քաղաքացիներին: Ներգրավված է նաև ոչ կառավարական հատվածը, և նրանք բավականին ակտիվ են» (քաղաքապետարանի ներկայացուցիչ Ախալցխիսեյից): Իսկ ըստ «Կանանց սենյակ» քաղաքացիական կազմակերպության ներկայացուցչի, Ծալկայի քաղաքապետարանն ակտիվ չէ կանանց տնտեսական հզորացման ուղղությամբ: Ավելին, ըստ հարցվողի, նշված քաղաքապետարանի բյուջեն «գեներային զգայուն» չէ:

Շփում տեղական ինքնակառավարման կառույցների հետ

Պարզվել է, որ հետազոտության մասնակից անձինք ակտիվ շփում չունեն տեղական ինքնակառավարման կառույցների հետ: Հարցվածների մեծամասնությունը (81,8%) վերջին 2 տարում նրանց չի դիմել կոնկրետ խնդրի լուծման նպատակով (Սամցխե-Ջավախեթի՝ 83,7%, Բվեմո Բարթի՝ 80%): Հակառակ փորձ ունի միայն 17%-ը (1,2%-ը հրաժարվել է պատասխանել): Այնուհետև ճշտվեց, թե կոնկրետ ինչ հարց(եր)ի հետ կապված են դիմել տեղական ինքնակառավարմանը: Նմանատիպ փորձ ունեցող հարցվողների թվում գերիշխող են անվանվել հետևյալ կատեգորիաները.

- Տարբեր սոցիալական/խոցելի խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, երեխաներ, տարեցներ, անօթևաններ, ներքին տեղահանվածներ) հետ կապված միջավայրի բարելավում - 13.7%;
- Ենթակառուցվածքային խնդիրներ (գազամատակարարում, ջրամատակարարում, էլեկտրաէներգիա և այլն) – 21.8%;
- Սոցիալական խնդիրներ (սոցիալական աջակցություն, գործազրկություն և այլն) – 28%;
- Առողջապահական ծառայությունների հետ կապված հարցեր - 19.3%.

Բացի այդ, հարցվածների 7.7%-ը նշել է, որ դիմել է ՏԻՄ-ին տարածքի բարեկարգման հարցով, իսկ 3.8%-ի փորձը վերաբերում է տան/հողամասի գրանցմանը: Առանձին կատեգորիաներ համապատասխանում էին ջրի խնդրին, թափառող կենդանիների խնդրին, ավտոտնակի կառուցմանը և այլն: (Տե՛ս աղյուսակ #34):

Աղյուսակ #34

Վերջին 2 տարում ի՞նչ հարց(եր)ի հետ կապված եք դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին: (N=215)	
Տարբեր սոցիալական/խոցելի խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, երեխաներ, տարեցներ, անօթևաններ, ներքին տեղահանվածներ) հետ կապված միջավայրի բարելավում	13.7 %
Ենթակառուցվածքային խնդիրներ (գազամատակարարում, ջրամատակարարում, էլեկտրաէներգիա և այլն)	21.8 %
Տարածքի բարեկարգում (թափոնների հեռացում, կանաչապատում և այլն)	7.7%
Սոցիալական խնդիրներ (սոցիալական աջակցություն, գործազրկություն և այլն)	28%
Առողջապահական ծառայությունների հետ կապված հարցեր	19.3 %
Տան/հողամասի գրանցում	3.8%
Այլ	5.3%
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	0.4%

Գերիշխող հարցերը, որոնց վերաբերյալ հարցվողները վերջին 2 տարում դիմել են տեղական ինքնակառավարման մարմիններին, երկու տարածաշրջանում էլ նման են.

- Ենթակառուցվածքային խնդիրներ (գազամատակարարում, ջրամատակարարում, էլեկտրաէներգիա և այլն)՝ Սամցխե-Ջավախեթի - 27.6%, Բվեմո Բարթլի - 16.8%
- Սոցիալական խնդիրներ (սոցիալական աջակցություն, գործազրկություն և այլն)՝ Սամցխե-Ջավախեթի - 33.1%, Բվեմո Բարթլի - 23.5%
- Առողջապահական ծառայությունների հետ կապված հարցեր՝ Սամցխե-Ջավախեթի - 15.3%, Բվեմո Բարթլի - 22% (տես աղյուսակ #35).

Աղյուսակ #35

Վերջին 2 տարում ի՞նչ հարց(եր)ի հետ կապված եք դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=98)	Բվեմո Բարթլի (N=117)
Տարբեր սոցիալական/խոցելի խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, երեխաներ, տարեցներ, անօթևաններ, ներքին տեղահանվածներ) հետ կապված միջավայրի բարելավում	15.2%	12.4%
Ենթակառուցվածքային խնդիրներ (գազամատակարարում, ջրամատակարարում, էլեկտրաէներգիա և այլն)	27.6%	16.8%
Տարածքի բարեկարգում (թափոնների հեռացում, կանաչապատում և այլն)	5.8%	9.4%
Սոցիալական խնդիրներ (սոցիալական աջակցություն, գործազրկություն և այլն)	33.1%	23.5%

Վերջին 2 տարում ի՞նչ հարց(եր)ի հետ կապված եք դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Չավախեթի (N=98)	Քվեմո Քարթլի (N=117)
Առողջապահական ծառայությունների հետ կապված հարցեր	15.3%	22.8%
Տան/հողամասի գրանցում	1%	6.3%
Այլ	1.3%	8.9%
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	0.8%	-


Հարցվածների ավելի քան մեկ երրորդը, ովքեր տարբեր հարցեր են ուղղել տեղական ինքնակառավարման մարմիններին, նշել են, որ իրենց ոչ մի խնդիր չի լուծվել (39,6%) (Սամցխե-Չավախեթի՝ 36,4%, Քվեմո Քարթլի՝ 42,3%), 23,5%-ի փորձով որոշ խնդիրներ լուծվել են, իսկ հինգերորդի գնահատմամբ՝ ինքնակառավարումը լուծել է բոլոր այն խնդիրները, որոնցով դիմել են: Նրանց մասնաբաժինը, ում գործով ինքնակառավարումը փորձել է, բայց խնդիրը չի կարողացել լուծել, տասներորդից ավելի է: 2,1%-ը դժվարացել է պատասխանել:

Մասնակցություն հանրային գործունեությանը

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ վերջին 1 տարվա ընթացքում հարցվածների 11.1%-ը մասնակցել է հանրային հանդիպումներին, իսկ 10.3%-ը՝ բնակավայրի խնդիր լուծմանը: Բնակավայրի ընդհանուր ժողովին մասնակցել է 8.1%-ը, սակայն հատկանշական է, որ հարցվածների մեծ մասը (57.4%) որևէ գործունեության չի մասնակցել (տե՛ս գծապատկեր #35):

Գծապատկեր #35

Վերջին 1 տարվա ընթացքում մասնակցել էք թվարկված գործողություններից որևէ մեկին (N=1200)



Ե՛վ Սամցխե-Չավախեթիում, և՛ Քվեմո Քարթլիում, միջին հաշվով, հարցվածների մեկ տասներորդը նշում է, որ մասնակցել է հանրային հանդիպումների: Բացի այդ, Քվեմո Քարթլիի

բնակչությանը բնորոշ է բնակավայրերի խնդրի լուծմանը մասնակցելը (12,4%): Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ որոշ շրջաններում քաղաքացիների մասնակցությունը ցածր է՝ մեծամասնությունը նշում է, որ վերջին 1 տարում նրանք որևէ գործունեության չեն մասնակցել (Սամցխե-Չավախեթի՝ 65,4%, Քվեմո Քարթլի՝ 50,3%) (տես աղյուսակ #36):

Աղյուսակ #36

Վերջին 1 տարվա ընթացքում մասնակցե՞լ եք հետևյալ գործողություններից որևէ մեկին (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Չավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Մասնակցություն բնակավայրի խնդրի լուծմանը	8%	12.4%
Գրավոր դիմում տեղական կամ կենտրոնական իշխանության ներկայացուցչին	2.4%	8.6%
Մասնակցություն տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեի վերանայմանը	2.9%	7.5%
Մասնակցություն հանրային հանդիպումներին	11.3%	10.9%
Պետիցիայի ստորագրում	0.6%	2.7%
Բնակավայրի ընդհանուր ժողովին մասնակցություն	9.2%	7.1%
Քաղաքացիական խորհրդատվական խորհրդի անդամություն	0.2%	0.5%
Ես ոչ մի գործունեության չեմ մասնակցել	65.4%	50.3%


Վերջին 1 տարում քաղաքացիական գործունեությանը մասնակցելու փորձ չունենալու գերակշռող պատճառները հետևյալն են՝

- Ժամանակի սղություն - 20.9%
- Չգացում, որ իրենց մասնակցությունը ոչինչ չի փոխի - 23.9%
- Հարցվողը կարծում է, որ այս հարցերով պետք է զբաղվի տեղական ինքնակառավարումը - 22.8%

Միաժամանակ, մեկ տասներորդից ավելին նշել է, որ բավարար տեղեկատվություն չունի իր իրավունքների մասին (13,5%): Իսկ հարցվածների 14,9%-ը դժվարացել է կամ հրաժարվել է պատասխանել (տե՛ս դիագրամ #36):

Գծապատկեր #36

Ի՞նչ եք կարծում, որ վերջին 1 տարում ինչո՞ւ չեք մասնակցել ոչ մի քաղաքացիական գործունեության: (N=686)



Ե՛վ Սամցխե-Ջավախեթիում, և՛ Քվեմո Քարթլիում քաղաքացիական գործունեությամբ չզբաղվելու հետևյալ պատճառների մասնաբաժինը գերազանցում է հինգերորդը՝

- Չզացում, որ իրենց մասնակցությունը ոչինչ չի փոխի՝ Սամցխե-Ջավախեթի - 24%, Քվեմո Քարթլի - 23.8%
- Կարծում է, որ այս հարցերով պետք է զբաղվի տեղական ինքնակառավարումը՝ Սամցխե-Ջավախեթի - 20.7%, Քվեմո Քարթլի - 25.2% (տես աղյուսակ #37)։

Աղյուսակ #37


Ի՞նչ եք կարծում, որ վերջին 1 տարում ինչո՞ւ չեք մասնակցել ոչ մի քաղաքացիական գործունեության: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=384)	Քվեմո Քարթլի (N=302)
Ժամանակի սղության պատճառով	16.3%	26.5%
Այնպիսի զգացողություն ունեի, որ իմ գործունեությունը ոչինչ չի փոխի	24%	23.8%
Ես բավարար տեղեկատվություն չունեմ իմ իրավունքների մասին	17.5%	8.8%
Կարծում եմ, որ ՏԻՄ-ը պետք է զբաղվի այս հարցերով	20.7%	25.2%
Ես կարծում եմ, որ հասարակական կազմակերպությունները պետք է զբաղվեն այդ հարցերով	4%	1%
Այլ	1.8%	0.9%
Հրաժարվում եմ/ դժվարանում է պատասխանել	15.7%	13.9%

Գոհունակություն տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքից

Ջետագոտությանը մասնակցած բոլոր անձանց գնահատականը դրական է տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի վերաբերյալ: Գնահատման համար օգտագործվել է 5 բալանոց սանդղակ, որի վրա 1 միավորով նշվում է «շատ դժգոհ» կատեգորիան, իսկ 5 միավորով՝ «շատ գոհ» կատեգորիան: Պարզվել է, որ հարցվածների 38.8%-ը գոհ է մունիցիպալիտետների գործունեությունից (4 և 5 միավոր), իսկ երրորդը (33.3%) չեզոք դիրք է գրավում (3 միավոր) (տես գծապատկեր #37):

Գծապատկեր #37

Ընդհանուր առմամբ, որքանով եք գոհ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքից: (N=1200)



Որոշելու համար, թե ինչ գործոններ են ազդում տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքից հարցվածների գոհունակության վրա՝ մշակվել է ռեգրեսիոն մոդել: Պարզվել է, որ հարցվածներից ամենաշատը գոհ են մունիցիպալիտետի գործունեությունից՝

- Նրանք, ովքեր ապրում են քաղաքում,
- Նրանք, ովքեր բարձր տարիքային խմբի ներկայացուցիչներ են,
- Վերջին 2 տարում առողջապահական ծառայությունների հետ կապված հարցերով տեղական ինքնակառավարում դիմած անձինք,
- Վերջին 1 տարվա ընթացքում բնակավայրի ընդհանուր ժողովին մասնակցած անձինք (տես՝ աղյուսակ #38)

Աղյուսակ #38

	Գոհունակություն տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքից		
	Beta	Standardized CI	Sig
Բնակավայրի տեսակ (քաղաք/գյուղ)	-0.382	-1.817 – -0.481	0.001
Տարիք	0.285	0.008 – 0.048	0.007
Դիմում ՏԻՄ-ին՝ առողջապահական ծառայությունների հետ կապված հարցերով	0.361	0.359 – 1.558	0.002

Բնակավայրի ընդհանուր ժողովին մասնակցություն	0.291	0.257 – 1.682	0.008
---	-------	---------------	--------------

Չետաքրքիր է, որ Սամցխե-Ջավախեթիում (47,5%) ավելի գոհ են տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքից, քան Քվեմո Քարթլիում (30,2%) (4 և 5 միավոր): Երկու շրջաններում էլ միջին հաշվով մեկ երրորդը չեզոք դիրք է գրավում, սակայն Քվեմո Քարթլիում գերակշռում է մուսիցիպալիտետի աշխատանքից դժգոհների մասնաբաժինը՝ 35,5% (տես աղյուսակ #39):

Աղյուսակ #39

Ընդհանուր առմամբ, որքանով եք գոհ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=600)	Քվեմո Քարթլի (N=600)
Շատ դժգոհ	3.7%	10.9%
Ավելի շատ դժգոհ, քան գոհ	10.7%	24.7%
Հավասարապես գոհ և դժգոհ	36%	30.5%
Ավելի շատ գոհ, քան դժգոհ	37.1%	17.7%
Շատ գոհ	10.4%	12.5%
Հրաժարվում է / դժվարանում է պատասխանել	2%	3.8%

Ըստ ռեգրեսիայի մոդելի՝ Քվեմո Քարթլիում հարցվածների բավարարվածության վրա ազդում են երկու հիմնական գործոն՝ բնակավայրի տեսակը և տարբեր հարցերի վերաբերյալ ինքնակառավարման մարմիններին դիմելը: Պարզվեց, որ մուսիցիպալիտետի գործունեությունից ավելի շատ գոհ են՝

- Քաղաքի բնակիչները,
- Հարցվողները, ովքեր վերջին 2 տարվա ընթացքում գրավոր տեսքով չեն դիմել տեղական կամ կենտրոնական իշխանության ներկայացուցիչներին,
- Հարցվողները, ովքեր դիմել են ինքնակառավարմանը առողջապահական ծառայությունների հետ կապված հարցերով (տես աղյուսակ #40)

Աղյուսակ #40


	Գոհունակություն տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքից		
	Beta	Standardized CI	Sig
Բնակավայրի տեսակ (քաղաք/գյուղ)	-0.328	-2.170 – -0.239	0.016
Գրավոր դիմում տեղական կամ կենտրոնական իշխանության ներկայացուցիչներին	-0.357	-1.845 – -0.385	0.004
Դիմում ՏԻՄ-ին՝ առողջապահական ծառայությունների հետ կապված հարցերով	0.271	0.031 – 1.579	0.042

Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքից դժգոհության հիմնական պատճառ է համարվել քաղաքացիների կարիքները չնկատելը (41,8%): Քառորդից ավելի է

նրանց թիվը, ովքեր կարծում են, որ չկա ակտիվ շփում տեղի բնակչության հետ, 15,3%-ը խնդրահարույց է գնահատում աշխատողների որակավորման մակարդակը: Մեկ տասներորդից ավելին որպես իրենց դժգոհության պատճառ նշում է նեպոտիզմը (տե՛ս գծապատկեր #38):

Գծապատկեր #38

Ինչո՞ւ եք դժգոհ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքից: (N=298)




Գլուխ 12. Համագործակցություն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ

Հետազոտությանը մասնակցած մարդկանց մեծամասնությունը (93,8%) տեղեկություն չունի մունիցիպալիտետում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասին (Սամցխե-Ջավախեթի՝ 91,3%, Քվեմո Քարթլի՝ 96,3%): Միայն 5,5%-ն է նշել, որ իրազեկված է այս ուղղությամբ (0,6%-ը հրաժարվել է պատասխանել): Հարցվողները դժվարացել են նշել կոնկրետ կազմակերպություններ, սակայն առանձնացվել են հետևյալ կազմակերպությունները՝ «Տոլերանտի», «Ժողովրդավար մեսիսթիցիների միություն», «Ժողովրդավարական կանանց հասարակություն», համայնքային կենտրոններ:

Քաղաքացիական հասարակության մասին տեղեկացված հարցվածների մեծամասնությունը (58.5%) կարծում է, որ տեղի բնակչությունը ներգրավված է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության մեջ (4 և 5 միավոր՝ 5 բալանոց սանդղակով), իսկ ավելի քան հինգերորդը (21.9%) նշում է ցածր մասնակցություն կամ մասնակցության բացակայություն (1 և 2 միավոր) (տե՛ս գծապատկեր #39):

Գծապատկեր #39

Որքանով է տեղի բնակչությունը մասնակցում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությանը: (N=71)



Ընդհանուր միտումը պահպանվում է նույնիսկ խնդիրը տարածաշրջանային կտրվածքով դիտարկելիս: Ե՛վ Սամցխե-Ջավախեթիում (57,9%, N=30), և՛ Քվեմո Քարթլիում (60,1%, N=11), քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասին տեղեկացված մարդկանց մեծամասնությունը կարծում է, որ բնակչությունն ակտիվորեն մասնակցում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությանը (4 և 5 միավոր): Բացասական գնահատական ունեցողների թիվը գերակշռում է Սամցխե-Ջավախեթիում՝ 23,5% (տե՛ս աղյուսակ #41):

Աղյուսակ #41

Որքանով է տեղի բնակչությունը մասնակցում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությանը: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=53)	Քվեմո Քարթլի (N=18)
Ընդհանրապես չեն մասնակցում	9.8%	6.1%
Ավելի շատ չեն մասնակցում, քան մասնակցում են	13.7%	11.2%
Հավասարապես մասնակցում են և չեն մասնակցում	15%	16.7%
Ավելի շատ մասնակցում են, քան չեն մասնակցում	55.2%	49.3%
Լիարժեք մասնակցում են	2.7%	10.7%
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	3.6%	6%

Հետազոտության ընթացքում քաղաքացիական հասարակության մասին տեղեկացված հարցվողների խմբում գնահատվել է վերջին 1 տարվա ընթացքում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից առաջարկվող կոնկրետ ծառայություններից օգտվելու փորձը: Հիմնական ծանրաբեռնվածությունը սոցիալական ծառայությունների օգտագործումն է՝ 18,7%: Նշենք, այս ծառայությունից օգտվում են միայն Սամցխե-Ջավախեթիում (25,5%), Քվեմո Քարթլիում նման փորձ չեն ունեցել: Այլ առանձին ծառայությունների ցուցանիշը նույնիսկ չի հասնում 3%-ի՝ կանանց հզորացմանն ուղղված նախագծեր - 2,9%, Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ինտեգրմանն ուղղված նախագծեր - 2,7%: Քվեմո Քարթլիում յուրաքանչյուր տասներորդ հարցվողը չի օգտվում կանանց հզորացմանն ուղղված նախագծերից:

Պարզվել է, որ նույնիսկ այն հարցվածները, ովքեր տեղեկություն ունեն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասին, չեն շփվում նման կազմակերպությունների հետ՝ 62,1%-ը վերջին 1 տարվա ընթացքում չի օգտվել որևէ ծառայությունից (Սամցխե-Ջավախեթի՝ 57,7%, Քվեմո Քարթլի՝ 74,4%) (տե՛ս: աղյուսակ #42, #43): Որպես պատճառ

նշվում է ծառայությունից օգտվելու անհրաժեշտության բացակայությունը (67%): Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության մասին տեղեկություն չունեցողների կամ գրանցման բարդ ընթացակարգերի պատճառով չօգտվողների մասնաբաժինը գերազանցում է 5%-ը (տե՛ս գծապատկեր #40):

Աղյուսակ #42


Վերջին 1 տարվա ընթացքում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից առաջարկվող n°ր ծառայություններից եք օգտվել: (N=71)	
Սոցիալական ծառայություններ	18.7 %
Առողջապահական ծառայություններ	1.3%
Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրմանն ուղղված նախագծեր	2.3%
Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ինտեգրմանն ուղղված նախագծեր	2.7%
Նախագծեր, որոնք ուղղված են տարեցների ներգրավմանը սոցիալ-մշակութային գործունեությանը	1.5%
Կանանց հզորացմանն ուղղված նախագծեր	2.9%
Չեմ օգտվել թե՛ մի ծառայությունից	62.1 %
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	8.6%

Աղյուսակ #43

Վերջին 1 տարվա ընթացքում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից առաջարկվող n°ր ծառայություններից եք օգտվել: (ըստ տարածաշրջանի)	ՆԱՄԵՑԵ-ՋԶՅԱՆԵՅՈՒ (N=53)	ՎԵՅԹՈ ՎՈՐՏԼՈՒ (N=18)
Սոցիալական ծառայություններ	25.5%	-
Առողջապահական ծառայություններ	1.7%	-
Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրմանն ուղղված նախագծեր	3.1%	-
Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ինտեգրմանն ուղղված նախագծեր	1.7%	5.4%
Նախագծեր, որոնք ուղղված են տարեցների ներգրավմանը սոցիալ-մշակութային գործունեությանը	-	5.4%
Կանանց հզորացմանն ուղղված նախագծեր	-	10.9%
Չեմ օգտվել թե՛ մի ծառայությունից	57.7%	74.4%
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	10.3%	3.8%

Գծապատկեր #40


Խնդրում ենք ասել պատճառները, թե ինչու վերջին 1 տարում չեք օգտվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից առաջարկվող ծառայություններից: (N=43)



Քաղաքացիական հասարակության մասին տեղեկացված հարցվածների մեծամասնության (77.6%) կարծիքով՝ նման կազմակերպությունների գործունեությունը համապատասխանում է քաղաքացիների պահանջներին և կարիքներին (4 և 5 միավոր՝ 5 բալանոց սանդղակով), նրանց մեկ քառորդը համարում է, որ լիովին արձագանքում է կարիքներին (25,6%): Հարցվածների միայն 6.5%-ն ունի բացասական դիրքորոշում (1 և 2 միավոր) (տե՛ս գծապատկեր #41):

Գծապատկեր #41

Ձեր կարծիքով, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը որքանով է արձագանքում քաղաքացիների պահանջներին ու կարիքներին: (N=71)



Ընդհանուր միտումը պահպանվում է նաև տարածաշրջանային համատեքստում. Սամցխե-Ջավախեթիում ՔՀԿ-ների մասին տեղեկացվածների մեծամասնությունը (90.9%) կարծում է, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը համապատասխանում է քաղաքացիների պահանջներին և կարիքներին (4 և 5 միավոր): Քվեմո Քարթլիում այս դիրքը գերիշխող է, թեև ցուցանիշը նվազել է մինչև 38,8%: Այստեղ հարցվածների ավելի քան մեկ երրորդը (38.6%) հարցը գնահատում է չեզոք (3 միավոր) (տես աղյուսակ #44):


Աղյուսակ #44

Ձեր կարծիքով, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը որքանով է արձագանքում քաղաքացիների պահանջներին ու կարիքներին: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=53)	Քվեմո Քարթլի (N=18)
Ընդհանրապես չի արձագանքում	1.4%	-
Ավելի շատ չի արձագանքում, քան արձագանքում է	1.7%	16.6%
Հավասարապես արձագանքում է և չի արձագանքում	4.4%	38.6%
Ավելի շատ արձագանքում է, քան չի արձագանքում	68.4%	4.3%
Լիարժեք արձագանքում է	22.5%	34.5%
Հրաժարվում է/ դժվարանում է պատասխանել	1.7%	6%

Ըստ նման գնահատականի՝ տրամաբանական է, որ ՔՀԿ-ների մասին տեղեկացված հարցվածների 73.2%-ը գոհ է քաղաքապետարանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատանքից (4 և 5 միավոր՝ 5 բալանոց սանդղակով): Դժգոհողների մասնաբաժինը կազմում է ընդամենը 4,2% (տե՛ս գծապատկեր #42):

Գծապատկեր #42

Ընդհանուր առմամբ, որքանով եք գոհ ձեր քաղաքապետարանի մունիցիպալիտետի հասարակության կազմակերպությունների աշխատանքից: (N=71)



Քվեմո Քարթլիում ՔՀԿ-ների մասին տեղեկացված հարցվածների մեծ մասը (57.9%) չէզոք դիրքորոշում է արտահայտում մունիցիպալիտետում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատանքը գնահատելիս: Սամցխե-Ջավախեթիում Նշված ցուցանիշը հավասար է ընդամենը 8,8%-ի: Նշված տարածաշրջանում իրազեկ հարցվածների 88.2%-ը գոհ է ՔՀԿ-ների աշխատանքից: Քվեմո Քարթլիում միայն 29,4%-ն է այս կարծիքին (տես աղյուսակ #45):

Աղյուսակ #45

Ընդհանուր առմամբ, որքանով եք գոհ ձեր քաղաքապետարանի մունիցիպալիտետի հասարակության կազմակերպությունների աշխատանքից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=53)	Քվեմո Քարթլի (N=18)
Չափով դժգոհ	1.4%	6%
Ավելի շատ դժգոհ, քան գոհ	-	6.7%
Հավասարապես գոհ և դժգոհ	8.8%	57.9%
Ավելի շատ գոհ, քան դժգոհ	51.4%	18.7%

Ընդհանուր առմամբ, որքանով եք գոհ ձեր քաղաքապետարանի մունիցիպալիտետի հասարակության կազմակերպությունների աշխատանքից: (ըստ տարածաշրջանի)	Սամցխե-Ջավախեթի (N=53)	Քվեմո Քարթլի (N=18)
Շատ գոհ	36.8%	10.7%
Հրաժարվում է պատասխանել	1.7%	

* * *

Որակական հետազոտության շրջանակում նաև ֆոկուս խմբերը ցույց տվեցին, որ մասնակիցների շրջանում քիչ տեղեկատվություն կա տարածաշրջանում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասին: Նրանք նշել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անունները, որոնք գործում են Քվեմո Քարթլիում և Ամցխե-Ջավախեթիում: Քվեմո Քարթլիի բնակիչները լսել են կանանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունների մասին, քանի որ կանանց վաղ ամուսնությունը Քվեմո Քարթլիի առաջատար խնդիրներից մեկն է: Խոցելի իրավիճակում գտնվող հարցվողները լսել են կազմակերպությունների մասին, որոնք ֆինանսական աջակցություն են ցուցաբերում կարիքավոր ընտանիքներին:

«Նիտոմիևոյում լսել եմ նման կազմակերպության՝ «Սերեկ»-ի մասին, որը լավ գործ է անում: Օրինակ՝ ամանորին եղել են իմ տանը և որպես սոցիալապես անապահով ընտանիք իմ փոքրիկ երեխաներին ամանորյա նվերներ են բերել» (44 տարեկան տղամարդ, գործազուրկ, Էթնիկ հայ, Նիտոմիևոյ):

Նիտոմիևոյում հայտնի է «Նուրի» հասարակական կազմակերպությունը, որն անվճար թարգմանչական և իրավաբանական ծառայություններ է առաջարկում տեղի բնակչությանը:

Մառնեուլիի ժողովրդավարական ներգրավվածության կենտրոնը, որը ստեղծվել է 2011 թվականին, նշանակալի ներդրում է ունեցել Մառնեուլիում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հզորացման գործում և տարածք տրամադրել տեղական նախաձեռնող խմբերին և կազմակերպություններին՝ պլանավորելու և իրականացնելու գործողությունները: Մառնեուլցիները նաև ուշադրություն հրավիրեցին քաղաքացիական կազմակերպությունների գործունեության բացասական կողմի վրա և նշեցին, որ որոշ կազմակերպությունների նկատմամբ վստահությունը ցածր է, քանի որ նրանք ադրբեջանական կրոնական համայնքն ընկալում են որպես հետամնաց:

«Կազմակերպություններից մեկը հրապարակել է մի տեսանյութ, որն անընդունելի է կրոնական համայնքի համար: Անհրաժեշտ է, որ նրանք աշխատելիս հաշվի առնեն տեղում տիրող իրավիճակը և լինեն նվազ արմատական» (29-ամյա կին, աշխատող, Էթնիկ ադրբեջանցի, Մառնեուլի):

Ֆոկուս խմբի մասնակիցներից մեկը նշեց, որ բնակչության որոշակի հատվածում **քաղաքացիական հասարակության կազմակերպությունները համարվում են իշխանության ընդդիմադիր կազմակերպություններ, ուստի նախընտրում են հեռու մնալ դրանցից:** Կարևոր է, որ այս վերաբերմունքը փոխվի և բնակչության վստահությունն ավելանա կազմակերպությունների նկատմամբ:

Ճալկայում և Գարդաբանիում անցկացված ֆոկլուս խմբերում ոչ ոք չի եղել, ով շփվել է տեղի քաղաքացիական հասարակության կազմակերպության հետ, թեև Ճալկայում անվանվել է վրացերենի ուսուցման և դիմորդների պատրաստման կենտրոն, որից օգտվում են տեղացիները:

Ինչպես պարզվեց Բոլնիսիում անցկացված ֆոկլուս խմբից, մուլտիցիպալիտետում գործում են մի շարք ակտիվ քաղաքացիական կազմակերպություններ: Դրանցից են Բոլնիսիի երիտասարդական տունը, Բոլնիսիի ուսուցման և զբաղվածության խթանման և մեծահասակների կրթության կենտրոնները, որտեղ երիտասարդները, բացի զբաղվածությունից, կարող են սովորել տրիկոտաժ և խոհարարություն: Չարկ է նշել համայնքային կազմակերպությունները, որոնք վրացերենի դասընթացներ են առաջարկում ադրբեջանական գյուղերի բնակիչներին: Նաև, ինչպես նշեցին հարցվածները, Կազրեթիում գործում է «Կարմիր խաչը», որը փորձում է տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկացնել այնտեղ առկա խնդիրների մասին:

Դմանիսեցիների հետ անցկացված ֆոկլուս խմբում բնակչությունն անվանել է «Դմանիսաելի» կազմակերպությունը: Կազմակերպությունը միանվագ նյութական օգնություն է ցուցաբերում տարբեր կարիքներ ունեցող ընտանիքներին. *«Դմանիսելին օգնում է կարիքավորներին՝ միայնակներին և երեխաներին ապրանքներով: Ես նույնպես ողջունում եմ այս խմբին ու շարժումը»* (49 տարեկան տղամարդ, գործազուրկ, էթնիկ վրացի, Դմանիսի): «Դմանիսելին» բարեգործական կազմակերպություն է, որն օգնում է առողջապահական և սոցիալական կարիքներ ունեցող ընտանիքներին: Կազմակերպությունը նվիրատվություններ է ստանում տեղի բնակչությունից և մասնավոր հատվածից:

Թեթրիծղարոյից հարցվողները նշել են քաղաքացիական հասարակության հետևյալ կազմակերպությունները՝ Կողայի համայնքային կրթական կենտրոն, երիտասարդական կենտրոն, «Կողորի 2013» և «Գարիս»: Ինչպես նշել են ֆոկլուս խմբի մասնակիցները, Կողայի համայնքային կրթական կենտրոնը աշխատում է նաև առողջապահության ոլորտում, մասնավորապես, մուլտիցիպալ կենտրոն են հրավիրվում տարբեր մասնագիտությունների բժիշկներ: Նրանք նաև հրավիրում են դասընթացավարների, ովքեր դասընթացներ են անցկացնում տեղացիների համար տարբեր ոլորտներում և թեմաներով:

Ֆոկլուս խմբերի մասնակիցները **ընդհանուր առմամբ դրական են գնահատում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը:** Սակայն, նրանք կցանկանային ավելին իմանալ նրանց գործունեության, մասնավորապես նրանց նպատակների և թիրախային խմբերի մասին: Ֆոկլուս խմբերի հարցվողների կարծիքով՝ **հասարակական կազմակերպությունների գործունեությունը պետք է ուղղված լինի առաջին հերթին տեղի բնակչության խնդիրների լուծմանը:** Ինչպես արդեն նշվեց, մուլտիցիպալիտետներում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի լուծումը կենսական նշանակություն ունի բնակչության համար: Այս առումով անհրաժեշտ է, որ հասարակական կազմակերպությունները օգնություն ցուցաբերեն տեղի բնակչությանը, օրինակ՝ նպաստեն մասնագիտացման և որակավորման բարձրացմանը, ինչը մասամբ կնպաստի գործազրկության մակարդակի նվազմանը: Չամակարգչային տեխնոլոգիաների ուսուցումը, ռեգյումեն կազմելու և մոտիվացիոն նամակների պատրաստման հարցում աջակցությունը նույնպես ծառայություններ են, որոնք կարող են տրամադրել համայնքային կազմակերպությունները: Ֆոկլուս խմբերում ընդգրկված անձինք նշում են, որ **հասարակական կազմակերպությունների աջակցությունը կարևոր է ոչ ֆորմալ**

կրթությունն ստանալու հնարավորությունների մեծացման առումով՝ ինչպես դպրոցահասակ երեխաների, այնպես էլ երիտասարդների շրջանում: Մասնակիցների մի մասի կարծիքով՝ ցանկալի է, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ուժեղացնեն իրենց աշխատանքը քաղաքապետարանների և սակրեբուլոնների հետ և նրանց առաջարկեն նոր գաղափարներ և լուծումներ՝ առկա խնդիրները հաղթահարելու համար:

Գլուխ 13. Հարցվողների սոցիալ-ժողովրդագրական որոշ բնութագրեր


Հետազոտության մասնակիցների 52,7%-ը կանայք էին, իսկ 47,3%-ը՝ տղամարդիկ: Հարցվողները բաժանվել են հետևյալ տարիքային խմբերի՝

- 18-24 տարեկան - 13.1%;
- 25-34 տարեկան - 20.3%;
- 35-44 տարեկան - 15.7%;
- 45-54 տարեկան - 18.1%;
- 55-64 տարեկան - 15.6%;
- 65 տարեկան և ավելի - 17.2%.

Հարցվածների մեծ մասն ավարտել է միջնակարգ կրթությունը (43.6%), իսկ գրեթե մեկ քառորդը՝ բարձրագույն կրթությունը (24.7%): Նրանց մասնաբաժինը, ում կրթության ամենաբարձր մակարդակը հիմնական (10.7%) կամ մասնագիտական կրթությունն է (16%) է, գերազանցում է մեկ տասներորդը (տե՛ս գծապատկեր #43):

Գծապատկեր #43

Ձեռք բերված կրթության ամենաբարձր մակարդակը (N=1200)



Հարցվածների մեծ մասը էթնիկ վրացիներ են (47,9%), էթնիկ հայերը (25,1%) և ադրբեջանցիները (26,2%) գրեթե հավասարապես են ներկայացված: Հետազոտությունում բացահայտվել են կովկասյան այլ էթնիկ խմբերի (աբխազներ, լեկեր, օսեր և այլն) կամ ռուսների ներկայացուցիչների մասնակցության առանձին դեպքեր:

**Սամցխե-Ջավախեթիում
և Քվեմո Քարթլիում
առկա սոցիալական
ծառայությունների
էլակետային
հետազոտություն**